AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 1

**1 ՓԵՏՐՎԱՐ 2019 ՈՒՐԲԱԹ 4(5551)**

# Ազգ

Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

## Տարասով. «Թուրքիայում աճել են ռուսամետ տրամադրությունները, այնինչ Հայաստանում հակառակն է»

Հայտնի վերլուծաբան, մեր տարածաշրջանի հմուտ մասնագետներից **Ստանիսլավ Տարասովը** երեկ հարցազրույց է տվել «**Ազգ**»ի Մոսկվայի թղթակից Գոհար Բոստանջյանին: Սուր հարցադրումներին համապատասխան սուր պատասխաններից մեկում ռուս փորձագետը տվել է հետեւյալ պատասխանը.

*«Հիշեցնեմ, որ ռուսական ռազմակայանի ներկայությունը Հայաստանում մեծապես որոշվում էր նկատի ունենալով սպառնալիքը նախեւառաջ Թուրքիայից, այնուհետեւ եւ Ադրբեջանից: Նրանք, ովքեր ուզում են դուրս բերել ռուսական զորքերը Հայաստանից, հեռանկարին այլ աչքով են նայում: Ռազմաքաղաքական իրավիճակը Ռուսաստանի համար փոխվել է Սիրիայում ռուսական ռազմատիեզերական ուժերի գործարկումից հետո: Թուրքիայում աճել են ռուսամետ տրամադրությունները, այնինչ Հայաստանում հակառակն է: Եթե հայերի մի մասը որոշել է մեն-մենակ մնալ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ, ի՞նչ կա որ՝ կարող է եւ այդպես լինել»:*

Հարցազրույցը ամբողջությամբ կարելի է կարդալ մեր առաջիկա համարում:

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Կարեւորը Արցախի ներքին ամրությունն է

Շարունակվող անորոշությունների պայմաններում անբնական չէ դավադրական տեսության տարբեր դրսեւորումների երեւան գալը: Հասարակությունից քաքցվող ներքին գործընթացների առկայության պայմաններում դուռը կրնկի վրա բաց է թողնված ամեն տեսակի՝ անհավասալի եւ անհավանական ենթադրությունների առջեւ, սկսած Սերժ Սարգսյանի հրաժարականի՝ «ես սխալվեցի, Նիկոլը ճիշտ էր» պատճառահետեւանքային կապի յուրովի մեկնաբանությունից մինչեւ Արցախի հիմնահարցի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի տարբեր հայտարարությունները հակամարտության հանգուցալուծման վերաբերյալ, կամ՝ մեկ կողմից Սերգեյ Լավրովի ռեվերանսները Ալիեւին, իսկ մյուս կողմից՝ Ջոն Բոլտոնի հեռախոսազանգերն ու դրանց հետեւած գրառումները Twitter-ում: Բոլորն էլ հայ-ադրբեջանական հակամարտությանը, կոնկրետ՝ Արցախի ճակատագրին, այսինքն Հայաստանի ճակատագրին առնչվող:

Այս պայմաններում բացարձակապես ընդունելի չեն նոր իշխանություններին եւ անձամբ վարչապետին վաս քողարկված հայտարարությունները Ալիեւի հետ ունեցած «շփումներում» ընդամենը «առօրյական» հարցերի շուրջ զրույցների, կամ Բոլտոնի հետ հեռախոսազրույցներում արցախյան հարցը չարծարծելու վերաբերյալ: Բոլորիս համար պարզ է, որ բանակցությունների իրենց ներքին բովանդակությամբ սովորաբար թափանցիկ չեն լինում, առնվազն մինչեւ դրանց ավարտը, իսկ երբեմն էլ՝ ավարտից հետո երկար տարիներ: Սակայն, իմ կարծիքով, Նիկոլ Փաշինյանն ինքն իրեն ավելի հարազատ կլիներ, եթե հասարակությանը հուսակոտեն իր հայեցակարգը ներկայացնելուց հետո խուսափեր, որ ինքը ստիպված է բովանդակային մասով խորհրդապահականության սահմաններում մնալ:

Այս պայմաններում ոչ միայն անընդունելի, այլեւ մերժելի, դատապարտելի՛ են ոմանց, առավելապես վարչապետի ճամբարից, հրձիգ արտահայտությունները՝ իբր «հեղափոխությունը» Շուշիի ազատագրումից գերիվեր դասելու, կամ՝ «Արցախը հակահեղափոխության որջ» համարելու լկտիությունը, որի հեղինակը Հայաստանի առաջին ամենակոռումպացված պաշտոնյաներից մեկն է համարվում:

Եվ հենց այս պայմաններում զարմանալի է, որ ՀՀ վարչապետը ոչ թե չի սաստում նման հրձիգներին, այլ անձամբ միջամտում է Արցախի, օրինակ, պաշտպանության բանակի զորահրամանատարին փոխելու պարտադրանքով, պարզապես որովհետեւ վերջինը «համարձակվել էր» ըմբերանիչ պատասխան տալ նման հրձիգներից մեկին: Եվ սա՝ հայեցակարգային դիրքորոշման մթնոլորտում, որ Արցախը պետք է հեռու պահվի, շատ խնամքով եւ նախանձախնդրորեն, ամեն տեսակի քաղաքական եւ կուսակցական հավակնությունների եւ խաղերի թատերաբեմ լինելուց: Արցախը ստիպված է մնալ, մինչեւ իր կարգավիճակի եւ անվտանգության լիակատար հաստատումը գոնե, որպես ռազմաքաղաքական ուրույն միավոր, ուժեղ եւ ամրապինդ ղեկավարությամբ: Այնինչ անցյալ մայիսից ի վեր տարբեր արկածախնդիրների ոտնձգություններով ու խառնակչությամբ փորձ է արվում խարխլել իշխանության դիրքերը, ըստ երեւույթին ունենալով չարամետ ծրագրերի համար հող նախապատրաստելու առաջադրանք: Այնպես, կամ գրեթե այնպես, ինչպես զուգահեռաբար գործադրվում էր Հայ եկեղեցու հիմերը խարխլելու առաջադրանքը...

Այս պայմաններում լրիվ հասկանալի է դառնում ՀՀ երկրորդ նախագահին ձերբակալելու, նրա նկատմամբ հակասահմանադրական մեղադրանք առաջադրելու, նրան փակի տակ պահելու ողջ գործընթացը: Մարտի 1-ի գործը, որտեղ առկա է հրահրող-զսպող իրավիճակը, որտեղ գոյություն ունի անմեղության կանխավարկածի անտեսում՝ մեկի նկատմամբ, եւ անմեղության կանխաշնորհում՝ մյուսի, արհեստածին է, զուտ քաղաքական նկատառումներով սարքված: Իսկ դատական ներկա գործընթացը հուշում է, որ հենց ղարաբաղյան հարցում է իշխանության համար վտանգավոր Ռոբերտ Քոչարյանի ազատության մեջ լինելը: Իմ գործընկերներից ոմանք կհիշեն, որ պաշտոնաթողությունից անմիջապես հետո խմբագիրների սեղմ խմբի հետ հանդիպմանը ինչ ասաց երկրորդ նախագահը ի պատասխան քաղաքականության մեջ հետագայում իր մնալ-չմնալու հարցին. «Եթե ղարաբաղյան հարցում լուրջ վրիպումներ նկատեմ՝ կմիջամտե__ն__մ»: (Հենց այդպես՝ միջամտե__ն__լ):

Այս պայմաններում ինձ հասկանալի չէ նաեւ ՀՅԴաշնակցության հունվարի 24-ին Ստեփանակերտից՝ Ընդհանուր ժողովից բխած հայտարարության այն հատվածը, որը պահանջում է «Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների միջեւ ռազմաքաղաքական դաշինքի մասին համաձայնագրի սեղմ ժամկետներում կնքումը»: Դիագոնալ ձեւով այս պահանջը համապատասխանում է Ն. Փաշինյանի քանիցս արտահայտած մտքին, որ Հայաստանի Հանրապետությունը որեւէ ձեւով լիազորված չէ ներկայացնելու Արցախը եւ, հետեւաբար, անհրաժեշտ է Ստեփանակերտի անմիջական մասնակցությունը բանակցություններին: Անշուշտ տրամաբանություն կա՛ այս բոլորի մեջ, սակայն ինձ թվում է, որ որեւէ համաձայնագիր հեռվացնում է, տարանջատում է մեզ իրարից, Արցախը Հայաստանից: Պատկերավոր ասած՝ դա նման կլինի հոր եւ որդու միջեւ կնքված պայմանագրի...

Եվ արդեն, մենք ոչ թե դաշնագրերով ու պայմանագրերով պետք է ամրենք եւ աշխատենք միմյանց հետ, այլ՝ մեր համատեղ զոհողությունների ողջ հզորությամբ, եթե կուզեք՝ բնազդորեն: Ամրակուռ Արցախ, սա՛ պիտի լինի մեր համազգային տեսլականը:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## «Շատ կարեւոր է, որ պաշտպանենք ազատ խոսքի իրավունքը»

### *Քյոլնում շեշտադրեց վարչապետ Փաշինյանը*

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Քյոլն, Գերմանիա**

Հունվարի 31- ին Քյոլնը պաշտոնական զգեստով դիմավորեց երկօրյա պաշտոնական այցով ԳԴՀ ժամանած Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու նրա ղեկավարած պատվիրակությանը: Ձնառատ քիչ է լինում Հյուսիս Հռենոս Վեստֆալիա երկրամասը, բայց կազմակերպչական բոլոր մանրուքները հաշվի առնող գերմանացիներին, որ բացառիկ հարգանք ընդգծելով հյուրի հանդեպ՝ գույնն էլ կարեւորում են, եղանակը նվեր էր արել՝ սպիտակ սավան ողջ քաղաքին, որ սեւ-սպիտակ բաժանարար գիծ չերեւա:

⇨8



## Երդվելուց եւ չերդվելուց անդին

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանում առկա իրավիճակը ամենեւին հնարավոր չէ միանշանակ բնութագրել, վերլուծել եւ կամ կանխատեսել: Դատենք ինքներդ: Իշխանության թեւերից առաջինն անփորձ է՝ Ազգային ժողովում քաղաքական մեծամասնությունը նկատի ունենք, նրա հույսին մնալն առայժմ անհույս բան է: Երկրորդ իշխանությունը՝ գործադիրը, միգուցե ամենից ռեալ լծակներն ունի, չնայած նախագահականում երդվեց այնպիսի բաներ, որոնք գոնե այս պահին իրականացնելը շատ դժվար է (տես՝ Աստվածաշունչը՝ երդման ինստիտուտի մասին): Երրորդ իշխանությունը՝ դատականը, ամբողջովին հին իներցիայի ուժով է գործում, նրա հանդեպ հույս տածել, նշանակում է ձեռքը գցել փրփուրներին: Չորրորդ իշխանությունը՝ մեդիա դաշտը մեծի մասով պատկանում է նախկին իշխանությանն ու տարբեր խմբերի՝ նրանից ճշմարտանման կամ չուղղորդված տեղեկություն ստանալ առաջին էջերի մասին քանի գնում տեսականորեն անհնարին է դառնում: Ահա այս ականապատ դաշտում գործող իշխանությունից պահանջել խնդիրների լուծման հրապարակ, արդյունավետ եւ ոչ ամբոխահաճո ձեռագիր՝ երեւի պիտի որ եթե ոչ անհնարին, ապա շատ դժվար լինի: Այնուամենայնիվ՝ սպասում կա, անգամ՝ հանրության առավել փորձառու եւ կրթված շերտերում: Բացի այդ՝ այնքան շատ իրադարձություններ են կատարվում մեկ շաբաթում Հայաստանում եւ Հայաստանի շուրջը, որ ողջ տեղեկատվությանը տիրապետելը հենց գլխանց դժվար է: Այնպես որ՝ մենք էլ մի քանի դիտարկում կանենք մեզ հետաքրքրող մի քանի ուղղությամբ:

### Հավաքեք զենքը, պարոնայք իրավապահներ

Հարց նոր իշխանությանը. ինչու զենքը չեք հավաքում, եթե, իրոք, սա նոր Հայաստան է, ինչու կան զենք կրող արտոնյալներ, որոնք ցանկացած պահին դա հանում եւ գործի են դնում: Իրոք, ինչու չեք կարողանում հավաքել զենքը զանազան մեծահարուստների, նրանց զավակների, տարբեր արկածախնդիրների մոտից, երբ համարյա ամեն օր զենքի գործադրմամբ հանցագործություններ են կատարվում: Վերջինն Աբովյանի «Պարտեզ» ռեստորանային համալիրում տեղի ունեցած «ռազբորկան» է՝ մահվան դեպքով եւ ծանր վիրավորներով: Չե՞ք կարողանում՝ ձայն հանեք, ժողովուրդը հավաքվի եւ իրեն ընտրախավ համարող համբակներին զինաթափի: Առհասարակ՝ մինչ մեր իրավապահները եսիմ ինչ շարժառիթներով եսիմ ինչ գործողություններով են զբաղված՝ ամեն օր դաժան սպանությունների, կողոպուտների ու ռազբորկաների ականատեսն ենք լինում: Մեր հասարակություն է՞ դաժանացել, թե՞ մեր իրավապահներն են թուլացել, նրանցից այլեւս ոչ ոք չի վախենում, ու դրա համար կա այսպիսի պատկեր; Այլապես ինչ մտածես: Թե հացադուլից մեռնող կայքի խմբագիր, հարցաքննության կանչվող մի այլ կայքի խմբագիր՝ սրանք ե՞ն նորմա կամ արդիական թեմա հիմա մեր իրավապահների համար: Մնաց եռովականների իրավունքների բողոքներով զբաղվեք՝ սովորական կարգուկանոն հաստատելու փոխարեն:

⇨2



Եկեղեցով եւ օրենքով

էջ 5



Մաեստրոն

էջ Ա



Վենեսուելան շահերի բախման կիզակետում

էջ 10

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

# Հոճան եւ մենք

Հոճա Նասրէտտինի պատմութիւնը յաճախ կը համընկնի մեր կենցաղին եւ արարքներուն: Մարդը իր երախային հետ էշով ճամբորդած ատեն, ինչ ձեւով ալ կը վարուի, միշտ մարդոց քննադատութեան առարկայ կը դառնայ: Իշուն վրայ ինք կը նստի ու տղեկը քալելով կը հետեւի իրեն, իսկ մարդիկ ամօթանք կու տան, թէ եսասիրութեամբ ինք հանգիստ նստեր է, իսկ խեղճ երախան կը քալէ: Ինք կ՚իջնէ ու երախան կը նստեցնէ իշուն վրայ, ու դարձեալ կ՚այպանեն, որ մեծ մը մարդը հետիոտն կը ճամբորդէ, մինչ երախան հանգիստ նստած է: Դարձեալ կը նստի ու տղան գիրկը կ՚առնէ, նորէն կ՚այպանեն, թէ խիղճ չունի, խեղճ անասունին չի մեղքնար: Յուսահատ, ինք ու երախան կ՚իջնեն ու քալելով կ՚երթան իշուն կողքին, այս անգամ զիրենք խենթի տեղ կը դնեն:

Մէկ խօսքով՝ ինչպէս ալ վարուի մարդ, ժողովուրդը պիտի խօսի: Դիմացինը քննադատելը հաճոյք կը պատճառէ քննադատողին. Նոյնիսկ դիմացինէն աւելի լաւը ի՛նք ըլլալու ինքնախաբէութիւնը կ՚ապրի:

Այսօրուան մեր իրավիճակն ալ տարբեր չէ. անցեալի վարչակարգը չսիրեցինք, քննադատեցինք, եկաւ նորը, սկիզբը, իշխանափոխութեան օրերուն, անօրինակ մակընթացութեան մէջ ամէն մարդ ովսաննաներով դիմաւորեց եղածը, այն աստիճան, որ թացն ու չորը միատեղ խարոյկի վրայ հանուեցան:

Հիմա՝ տեղատուութիւն է, բայց կացութիւնը նոյնն է: Ովսաննաները պակսեցան, քննադատութիւնները շատցան, նոյնիսկ ծաղր ու ծանակի հանդերձանքով: Ինչե՜ր ըսես չեն լսուիր վարչապետի հասցէին, նոր խորհրդարանի հասցէին: Ի՜նչ ծաղրանկարներ ըսես լոյս չտեսան դիմատետրի (ֆէյսպուքի) էջերուն: Ոչ մանկապարտէզ մնաց, ոչ մանկամսուր, որոնց որակումին արժանացաւ նորակազմ խորհրդարանը, քանի որ մեծամասնութեամբ երիտասարդներէ կը բաղկանայ:

Մէյ մը Եւրոպային նայեցէք եւ տեսէք, թէ քանի երիտասարդ ղեկավար պաշտօնի վրայ է՝ վարչապետ, նախարար, թէ այլ: Անպայման պիտի քննադատե՞նք, առանց համբերելու եւ տեսնելու, թէ անոնք արժանի՞ են իրենց պաշտօններուն, թէ՞ ոչ: Նոյնիսկ առանց զիրենք ճանչնալու, յանուն քննադատութեան կը քննադատեն ու կը ծաղրեն: Նորաթուխ պատգամաւորները, իբր թէ այնքան երիտասարդ ու անփորձ են, որ նոյնիսկ խորհրդարանի իրենց աթոռներուն դիմացի կոճակը սեղմել չեն գիտեր...

Երեւի անոնք խորհրդարան չմտած պէտք էր կոճակ սեղմելու դասընթացքի մը հետեւէին, ապա նոր՝ պատգամաւոր դառնային: Կարծես նախկինները ի ծնէ կոճակ սեղմող եղած են, կամ ալ կլլած են այդ մասնագիտութիւնը: Մարդիկ, որոնք իրենց փողկապներն անգամ կարգին քաշուած պահել չէին գիտեր, սակայն կոճակ սեղմել գիտէին:

Եթէ այսպէս պիտի շարունակուի, ափսոս է այս երկրին: Երեք նախագահական շրջաններ ունեցանք, երեքն ալ քննդատեցինք ու գրողին ծոցը ուղարկեցինք: Եկաւ չորրորդը, այս ալ պատէ-պատ զարնենք, նայինք վերջը ի՞նչ պիտի ըլլայ:

Եթէ այսպէս շարունակուի, ինչ իշխանութիւն ալ գայ պիտի քարկոծուի, մենք պարզապէս մեր թշնամիներուն ջաղացքին ջուր կը լեցնենք: Մենք բնաւ չենք անդրադառնար, թէ ինչ քաղաքական, զինուորական, տնտեսական եւ այլ մտահոգիչ կացութեանց մէջ ենք, ուր մեր տրամաբանութիւնը գործի լծելու ենք եւ մեր երկրին ներքին ամրութիւնը պահելու ենք: Մեր անվերջ քննադատութիւններով պարզապէս ակնկալուածին հակառակը կ՚ընենք:

Իր բոլոր խոցելի կողմերով հանդերձ, յեղափոխութիւնը ժողովրդային էր: Ժողովուրդը երբեք չի սխալիր, եիտասարդ ու անփորձ, դժուարութիւնները մէկիկ- մէկիկ յաղթահարելով իր նպատակին պիտի հասնի, եթէ նեցուկ կանգնինք անոր ու համբերենք:

Վարչապետին սիրելու- չսիրելու հարցը չէ կարեւորը, այլ՝ ժողովուրդին կամքը յարգելը: Ժողովուրդը եթէ զգայ, որ սխալած է, նոր յեղափոխութեամբ մը սխալը կը սրբագրէ: Հաւատալու է ժողովուրդին:

⇨1

# Երդվելուց եւ չերդվելուց անդին

## Բոնուսներ՝ աղքատության հոտից ազատվելու համար

Նախարարներից **Ֆելիքս Ցոլակյանը** մի խիստ վիճելի միտք է ասել՝ թե աղքատն ինչքան էլ հարստանա՝ նրանից մի քանի տարի աղքատության հոտ է գալիս: Տո դե արի ու մի ասա, երեսուն տարի առաջ, սովետի ժամանակ, երբ բոլորը հավասարեցված աշխատավարձ էին ստանում, ո՞վ էր հարուստ. ճիշտ է՝ միայն պետությունից գողացողներն ու տակից կաշառք վերցնողները, որոնք հետո գործերով սեփականացրին պետության ունեցվածքն ու ողջ ժողովրդի վրա «գողական» նստեցին: Իսկ ողջ ժողովուրդն աղքատ էր: Հիմա Ցոլակյանի տրամաբանությամբ՝ ողջ ժողովրդից բնական է, որ պետք է աղքատի հոտ գա: Ինքն էլ, բնականաբար, աղքատի հոտ արձակողների մեջ չէ, ուրե՞մն... Ամոթ է, ամոթ, եւ սա ՆՈՐ իշխանության նախարար է, որ ողջ ժողովրդին է պիտակներ կպցնում: Ու մի անգամ էլ վերադառնալով ողջ շաբաթ չարչրկված բոնուսների թեմային, չնայած այն բանին, որ վարչապետ Փաշինյանն ասել էր, թե պաշտոնյաների պարգեւավճարները երեսուն տոկոսով կրճատվելու են, կանգ առնենք փոխվարչապետ **Տիգրան Ավինյանի** այն մտքի վրա, թե՝ «Պետական համակարգում աշխատավարձերը պետք է սարքենք մրցունակ, որ լավագույն կադրերը չգնան մասնավոր սեկտոր»:Միանգամից պատասխանենք՝ նախ տնտեսությունը սարքեք մրցունակ, հետո նոր կտեսնենք՝ այդ կադրերն արժանի են բոնուսի կամ բարձր աշխատավարձի, թե՞ ոչ: Որովհետեւ ոչ ոք պիտի որ անփոխարինելի չլինի, էդ ինչ մի անհասանելի գիտելիքներով մասնագետներ են, որ ուզում են մասնավոր սեկտոր գնան, բայց... հեղափոխություն են արել կամ անում: Ի վերջո միջին վիճակագրական հայի եկամուտին տասն-տասնհինգ անգամ գերազանցող աշխատավարձեր են ստանում, եթե միայն տասներեքերորդ աշխատավարձը լիներ, չէինք ասի, բայց ոմանք աստղաբաշխական գումարներ են ստացել, էլ կոռուպցիան ո՞նց է լինում: Նոր մարդիկ վերցրեք, որոնք չեն հավակնում այդ բարձր բոնուսներին, բազմաթիվ պիտանի կադրեր կան, որոնք քաղաքական խմբից չեն, սակայն հիանալի մասնագետներ են եւ պատրաստ են էդ սովորական աշխատավարձերով էլ երկնքից աստղեր իջեցնել, հեռացողներից ազատվեք, դրանց ախորժակն անընդհատ բացվելու է: Աղքատ ժողովուրդը չի կարող հարուստ նախարար ունենալ, պետք է նախ ժողովրդի կեցության մակարդակը մի փոքր տանելի դարձնել, որից հետո նախարարի միլիոնները ոչ մեկը չի նկատի: Բացի այդ՝ միայն նույն քաղաքական խմբին պատկանող մարդկանց աշխատանքի վերցնելը, հետո էլ միլիոններ պարգեւատրելը մեծ հաշվով կոչվում է քաղաքական կոռուպցիա, պայմանագրային, կամ ոչ:

Ես հաստատ ավելի լավ չեմ ձեւակերպի բոնուսների թեման՝ ֆեյսբուքյան մի օգտատիրոջ ձեւակերպման համեմատ, որն ամենից բաձր պարգեւատրումներով աչքի ընկած համակարգի՝ ՊԵԿ-ի ղեկավարին գրում է.

*«ՊԵԿ նախագահ պարոն Դավիթ Անանյան, հրավիրում եմ Ձեզ վիրավոր զինվորների վերականգնողական կենտրոն՝ Լաերտին (հաշմանդամ դարձած զինվոր) բացատրելու, թե ինչո՞ւ իր լսողությունը վերականգնելու համար պետությունը փող չունի, իսկ Ձեր քարտուղարուհուն միլիոնների գումար է նվիրաբերվում, Դավիթին բացատրելու, թե հանուն ո՞ւմ ինքը կորցրեց ոտքերը, եւ թե ինչո՞ւ այսօր պետությունը իր համար պրոթեզներ չի կարողանում գնել, բայց Ձեզ միլիոնների հասնող պարգեւավճարներ է շնորհում»:*

## Հայաստանի քաղաքական դաշտը՝ Բերմուդյան եռանկյունի

Ես սա գրել եմ 11.06. 2012-ին, «**Ազգ**»-ում: Լավ բան է ինտերնետը՝ միշտ կարող ես գտնել առաջին գործածողին (ընդհանրապես՝ իմ հոբբիներից մեկը երկրային ու



կոսմիկական անոմալիաներով հետաքրքրվելն է): Հետագայում ուրիշները եւս այս եզրույթն արդիական դարձրին ու այն գործածում են ցայժմ՝ քանի որ շատ հմուտ նավապետներ (քաղաքական գործիչներ) են կուլ գնացել Հայաստանի Բերմուդի սեւ անցքին (մեր քաղաքական իրականությանը): Ինչպես երեւում է՝Նիկոլ Փաշինյանը եւս պետք է կարողանա դուրս պրծնել անոմալիայից, քանի դեռ ուշ չէ.... Ստորեւ մեջբերված հատվածն, ուրեմն, յոթ տարվա է, բայց կերեւի՝ չի հնացել. «Մարդիկ տեսնում են, որ քաղաքական կյանքը Հայաստանում մտել է փակուղի, հայոց քաղաքական դաշտը վերածվել է մի Բերմուդյան եռանկյունու, որտեղ ընկածները կուլ են գնում ոչ թե անհայտ մագնիսիզմին, այլ Հայաստանի երեք նախագահների ազդեցության միասնական տիրույթին՝ այս հայտնի եռանկյունում, ու մարդիկ այլեւս չեն ուզում այդ մագնիսիզմի մեջ տաշեղ լինել»: Սրանից դուրս գալու ճանապարհը, թվում է, սկիզբ առավ ապրիլյան իշխանափոխությամբ, սակայն այսօր արդեն տեսանելի է ժամանակին մերժված խմբերից մեկի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի աջակիցների ակտիվ ներհոսքը նոր իշխանություն՝ նախ նրանց զավակների տեսքով, ապա նաեւ վերջին երկու-երեք նշանակումներում: Ասենք, որ եթե վարչապետ Փաշինյանն իր մեջ ուժ չգտնի մի խմբի շահերին կուլ չգնալու (մի խմբի, որի ներկայացուցիչն էր նաեւ ինքը ժամանակին), ապա դա հազիվ թե դրական ազդեցություն ունենա նրա հանդեպ՝ համազգային սպասումների առումով: Եթե նա դա գիտի (իսկ վստահ ենք, որ գիտի), ու չի կարողանում դուրս գալ այդ ներծծող անոմալիայից, ուրեմն մի որոշ ժամանակ անց, երբ նրան աջակցություն հայտնած ու ժամանակին ՀՀՇ-ական իշխանությունը մերժած տասնյակ հազարները հիասթափվեն, ինքը խնդիր է ունենալու: Մինչդեռ նրան տրված մանդատը շատ ու շատ լայն է՝ ուզած խմբի շահերի շրջանակից, շատ լայն, պարտավորեցնող եւ պատվաբեր՝ ինչ-որ խմբի ծառայելու համար:

## Բոլոր իշխանությունների փորձաքար՝ Արցախ

Այս շաբաթ առաջին անգամ Արցախի բարձր պաշտոնյան հրապարակավ հակադրվեց հայաստանյան մի շարք իրողությունների: Հավանաբար դա ավելի խորքային գործընթացների արտացոլանքն է, քան տեսակետների պարզ տարբերությունը: Արցախի անվտանգության խորհրդի քարտուղար **Վիտալի Բալասանյանը** համաձայն չէր Ռոբերտ Քոչարյանին ուղղված՝ սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքին ու նաեւ՝ թիվ 0038 գաղտնի հրամանին ներքաղաքական գործընթացներում զինվորականության մասնակցության բովանդակության վերագրմանը: Բաց կթողնենք այն մեդիա բանավեճը, թե կարո՞ղ է արդյոք պաշտոնանկ արվել Վիտալի Բալասանյանը՝ Հայաստանի նոր իշխանության տեսակետին հակադիր տեսակետներ բարձրացնելու համար, ուղղակի եթե այդ բոլորը համադրում ես Արցախի հարցի շուրջ քաղաքական տուրեւառին, ՀՅԴ-ի՝ Արցախում ընդհանուր ժողով գումարելու փաստին եւ մի շարք այլ հանգամանքների, հասկանում ես, որ Արցախի ներսում կան խմորումներ, որոնք հայտածվելուն մոտ են: Դրանք միայն Արցախի հարցի շուրջ խմորումներ ե՞ն, թե Ռոբերտ Քոչարյանին տեր կանգնելու միտում էլ ունեն՝ դեռեւս պարզ չէ: Սակայն Արցախի հարցի շուրջ մի շարք իրար հերթագայող հանդիպումների, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի պաշտոնյաների հայտարարությունների, հնչած այսուայն տեսակետների, ու նաեւ՝վարչապետ Փաշինյանի վերջին մտքերի հետ կապված կարելի է նկատել, որ իշխանությունն Արցախի հարցում իր մոտեցումները մանրամասն ձեւակերպելու անհետաձգելիության առաջ է կանգնած: Լուծման ո՞ր բովանդակությանն է հակված իշխանությունը, ե՞րբ է անհրաժեշտ համարում Արցախի եւ Հայաստանի ռազմաքաղաքական մեծ պայմանագիրը, ի՞նչ կարգի փոխզիջում է պատկերացնում, ի՞նչ մանրամասներով: Սա վերջապես պիտի ձեւակերպվի՝ տարատեսակ շահարկումների համար դուռ փակելով, հանրությունն էլ վերջապես կիմանա նոր իշխանության գծած սահմանն այդ հարցում եւ կիմանա անելիքը: Համենայնդեպս՝ Նիկոլ Փաշինյանի ամենավերջին պնդումը, որ չեն կարող բանակցել անգամ «տարածքներ՝ խաղաղության դիմաց» բանաձեւով, եւ որ՝ իր կառավարության պատկերացումները բոլոր նախորդներից տարբերվում են, ծնում են այդպիսի ձեւակերպման անհրաժեշտություն: Եթե մանրամասն, դետալային հայեցակարգ լինի, թե որ տարբերակով է առաջնորդվելու կառավարությունը բոլոր հնարավոր հանդիպումներում եւ բանակցությունների վերսկսման պարագայում, կարծում եմ՝ այլեւս կվերանա կամ կնեղանա դրա շուրջ բոլոր մյուս ընդդիմախոսների մանեւրելու հնարավորությունը: Իսկ եթե այդպիսի հայեցակարգ չի հրապարակվում՝ տեղ ունի տեր-պետրոսյանական մոտեցումներին վերադառնալու կասկածը, որին ժամանակին հակադրվեց Վազգեն Սարգսյանը, եւ այս անգամ էլ, կարծում ենք, հակադրվողների պակաս չի լինի, վկա՛ Արցախի պաշտոնյայի նոր գործելակերպը:

## ԵԽ-ն կարող է ժպտալ, բայց դա երաշխիք չէ

Ինչպես կարող էր պատահել կայքի խմբագիր **Մհեր Եղիազարյանի** մահը կալանավայրում, սա անընդունելի եւ անընկալելի բան է, եթե չասենք՝ աններելի: Իշխանությունը, էն էլ իրեն նոր անվանողը, սա պիտի թույլ չտար, իսկ եթե եղել է, պիտի հետեւեն պաշտոնանկություններ: Մարտի մեկի գործերի՝ ընդդեմ պետության ՄԻԵԴ-ում հաղթանակների էյֆորիայի մեջ չի կարելի միամտանալ, թե Եվրոպան այս կամ այն իշխանության բարեկամն է, Եվրոպային միշտ էլ պետք են մահակներ այս կամ այն հարցում ճնշման հասնելու համար, պետք չէ տալ այդ մահակները նրան, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը վկա, ուր Հայաստանին արվող բազմաթիվ առաջարկներից՝ մարտի մեկի գործով անաչառ քննություն իրականացնելու առումով, նաեւ հանձնակատարն ընդգծում է, որ գործընթացը պետք է իրականացվի զգույշ կերպով եւ խստորեն համապատասխանի իրավունքի գերակայության, դատական իշխանության անկախության, թափանցիկության եւ երաշխիքների սկզբունքներին, որպեսզի բացառվի ենթադրյալ վրեժի քաղաքականության կամ ընտրովի քաղաքականության որեւէ մեղադրանք: ...Եւ հասկապես քաղաքական գործիչները պետք է խուսափեն իրենց հանրային հայտարարություններով հանրության շրջանում այնպիսի տպավորություն ստեղծել, որ մեղադրվող անձինք մեղավոր են, նախքան իրավասու դատական մարմնի կողմից մեղադրական դատավճռի հրապարակումը: Բա: Կարծում եք՝ նոր առիթները չե՞ն օգտագործվելու: Այնպես որ՝ նոր առիթներ մի՛ տվեք:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Եկեղեցով եւ օրենքով



Հունվարի 29-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկին Աննա Հակոբյանի հետ համերգ էր գնացել: Դիրիժորը` Հայաստանի ազգային հերոս Հովհաննես Չեքիջյանն էր: Ինչպես գրել է Փաշինյանը` հզորագույն համերգ էր եւ կիսադատարկ դահլիճ: Համերգից հետո, նախճան ֆեյսբուքյան գրառում անելը, Հայաստանի վարչապետը երկար մտածել է ու գրել. «Համակարգը կառուցված է այնպես, որ ազգային արժեքի հետ հնարավորինս քիչ մարդ շփվի, քիչ մարդ հարաբերվի...չէ՞ որ դա ամեն մարդու խելքի բան չէ... Հենց այս համակարգը վերացնելն է մեր մշակութային քաղաքականության նպատակը: Նոր Հայաստանում մարդը արվեստի, մշակույթի հետ պետք է իրական եւ մտական հարաբերությունների մեջ լինի, ազգային արժեքները պետք է մոտ լինեն մարդուն: Եւ այս ընկալումը պետք է սերմանել դպրոցից: Հենց այս խնդիրը պետք է լուծի կրթության, գիտության եւ մշակույթի նախարարությունը»:

Փաշինյանը, ցավոք, չի ասել, թե կրթությունը, գիտությունն ու մշակույթը համատեղ ղեկավարելու է Արայիկ Հարությունյա՞նը: Իսկ սա շատ կարեւոր է: Բանն այն է, որ պարոն **Ա. Հարությունյանն** ավելի վաղ այցելել էր Արարատի մարզի դպրոցներից մեկը: Եւ հենց դպրոցում հանդիպել է քահանայի, պատկերացնո՞ւմ եք: Դե նախարարը զարմացել է եւ հետաքրքրվել քահանայից, թե նա ի՞նչ գործ ունի դպրոցում, եւ քանի որ մեր կրթության եւ գիտության նախարարն իսկապես չգիտի, թե ինչ գործ ունի քահանան դպրոցում, պահանջել է, որ հոգեւորականը հեռանա: Միջադեպից հետո Արարատի մարզի Բյուրավան գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ **Տեր Ղազար քահանա Պետրոսյանը** բացատրել է` իր խոսքով` «կրթության անկիրթ նախարարին», թե ինչ գործ ունի քահանան` դպրոցում: Ավելին, Տեր Ղազարը Արայիկ Հարությունյանին ներկայացրել է, թե ի՞նչ է առհասարակ եկեղեցին եւ որքանով է այն ազգային արժեք: Անկեղծ ասած` չգիտեմ, թե Տեր Ղազարի խոսքից որքա՛ն է ազդվել ԿԳ նախարարը, բայց հոգեւոր հովվի խոսքից հետո ԿԳ նախարարը հայտնել է, որ կարող չունի մարդը նախարար է, թե՞ քահանա, օրենքը բոլորի համար է: Ի դեպ, կա օրենք` Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյան Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին, որն ընդունվել է 2007-ի փետրվարի 22-ին: Ըստ այդ օրենքի 8-րդ հոդվածի` Հայաստանյան Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի` հիմնելու կամ հովանավորելու նախադպրոցական հաստատություններ, տարրական, միջնակարգ եւ ավագ դպրոցներ, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններ` ՀՀ օրենսդրության շրջանակներում: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է` Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի մասնակցել պետական կրթական հաստատություններում Հայ Եկեղեցու պատմություն առարկայի ուսումնական ծրագրի դասագրքի մշակմանը, այն դասավանդող ուսուցիչների որակավորման պահանջների սահմանմանը... Նույն հոդվածն ավելի հստակ կետ էլ ունի. այսպես` 4-րդ կետը սահմանում է` Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի նպաստելու հասարակության հոգեւոր կրթությանը` կրթական հաստատություններում` օրենքով սահմանված կարգով: Փաստորեն, քահանան օրենքով իրավունք ունի մտնել դպրոց, այնտեղ, օրինակ, հոգեւոր կրթությանը նպաստելու նպատակով: Հիմա հարց. կրթության եւ գիտության նախարարը տեղյակ չէ՞ ՀՀ օրենքից, որով կարգավորվում են պետության եւ Եկեղեցու հարաբերությունները: Երկրորդ հարցը, ԿԳ նախարարը տեղյակ չէ՞, որ Հայ Առաքելական Եկեղեցին հայ ժողովրդի գոնե մեծամասնության համար ազգային արժեք է, ինչից, ինչպես վարչապետ Փաշինյանն է համերգից հետո հասկացել, մենք շատ ենք հեռու գնացել: Եւ երրորդ հարցը, բայց արդեն ՀՀ վարչապետին` հստակ՞ես Արայիկ Հարությունյա՞նն է իրականացնելու ՀՀ կրթական, գիտական եւ մշակութային քաղաքականությունը...

# Զենք տուր. խաղաղություն եմ ուզում

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Առաջիկայում 5-րդ ալիքով տրվում է «Զենք տուր. խաղաղություն եմ ուզում» վավերագրական ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմն Արցախյան ազատամարտի մասին է, ավելի ճիշտ` պատճառների, ավելի ճիշտ` դրանից խուսափելու, պատվով խուսափելու: Դատողություններ անելով Արցախի հետ կապված վերջին քաղաքական զարգացումների շուրջ, հասկանալի է դառնում, որ վերնագիրը հենց այնպես չէ ընտրված, եւ արդեն մի խիստ կարեւոր, զգաստացնող ասելիք ունի: Մինչ օրս Արցախյան ազատամարտի մասին բազմաթիվ ֆիլմեր են նկարահանվել, բայց այս ֆիլմը կարելի է միանշանակ տարբեր համարել` իր գաղափարական հարցադրումներով. հերոսը` հայ ժողովուրդը, խաղաղություն է ցանկանում` զենքի միջոցով: Մեր պատմությունը ցույց է տալիս, որ հայը խաղաղությունն ավելի շատ խնդրել է, քան` պահանջել ու վաստակել, ինչի մասին պատմում է այս ֆիլմը: Հենց այստեղ է կայանում ֆիլմի բացառիկությունը. զինվենք, որ չկռվենք, զինվենք, որ ցույց տանք` պատրաստ ենք պատերազմի... հաղթելու:

Ֆիլմի ստեղծագործական կազմը բավականին երիտասարդ է. սցենարիստը լրագրող, արձակագիր **Հովիկ Աֆյանն** է, ռեժիսորը` ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակի դափնեկիր, «Ոսկե ծիրան» միջազգային մրցույթի «Լավագույն դեբյուտ-2018» հաղթող **Արթուր Սահակյանը**:

Ես փորձեցի զրույց ունենալ նրանց հետ եւ ընթերցողի համար բացահայտել այն, ինչ մնացել է էկրանից այն կողմ: Ժամանակի սղության պատճառով զրույցը չափազանց կարճ ստացվեց... եւ չափազանց հստակ:

## Հովիկ



- Հովի՛կ, վավերագրական կինոսցենարը տեքստային լուրջ միջամտություն չի ենթադրում, իսկ Դուք, կարծեմ` սովոր եք հենց տեքստի հետ աշխատել: Ի՞նչն էր Ձեզ համար ամենահետաքրքրական նորությունը կադրային մտածողության իմաստով:

-Այն, որ շատ կարեւոր բաներ ասելու համար կարելի է եւ չխոսել: Նույնիսկ լռել: Այն, որ կան դեմքեր, իսկ դրանք շատ են, որոնք բերանով չեն խոսում: Մի տեսակ նայում են քեզ ու խոսում են` լուռ: Եւ վերջապես այն, որ ինչ-որ բան, թեկուզ մեկ տող գրելուց հետո պետք է փակել աչքերն ու փորձել տեսնել: Եթե չի երեւում, իսկ երեւալուց հետո հուզում, ուրեմն բացել աչքերը եւ ջնջել: Նորից փորձել, հետո նորից... Մինչեւ տեսնես գրածդ:

**- Կինոե՞ք ռեժիսորին տված` Ձեզ համար ամենասկզբունքային խորհուրդը:**

-Ասացի, որ կարեւոր չէ, թե ինչ ենք մտածում ադրբեջանցիների մասին: Պատերազմում. կարծում եմ, թշնամին կարեւոր չէ, գոնե մեզնից: Կարեւորն ու հետաքրքիրը մենք ենք: Ի՞նչ ենք անում, որքա՞ն ենք ամուր, ինչո՞վ ենք ուժեղ, ի՞նչ ենք երազում, այո, պատերազմում... Խորհուրդ եմ տվել` ուշադրություն դարձնել պատերազմող մարդու երազանքին: Մեզ` առանց թշնամու:

**- Խաղաղությունն ու զենքն ուղիղ հականիշներ են: Ինչո՞ւ եք պնդում, որ խաղաղության համար զենք է պետք:**

-Որովհետեւ խաղաղություն չի լինում: Միֆ է: Երազանք, առանց որի հնարավոր չէ ապրել, ինչպես եւ առանց զենքի: Ի դեպ, հետաքրքրական կլինի հաշվել չպատերազմող` խաղաղ երկրներում զենքը, վստահեցնում եմ` սարսափելի թիվ կլինի: Կարծում եմ, որ խաղաղությունը նվաճում են, ինչպես ցանկացած երազանք, իսկ նվաճում են զենքով: Ու հենց այստեղ խաղաղությունն ու զենքը դադարում են հականիշներ լինել, եւ զենքը դառնում է խաղաղության հասնելու գործիք:

## Արթուր



- Արթո՛ւր, մարդիկ սովոր չեն իրենց երկրի պատմության ամենահերոսական դրվագներին նայել մի մարդու ճակատագրի տեսանկյունից: Այս ֆիլմում նման փորձ է արված: Երբեւէ չէ՞ք վախեցել, որ Ձեր հստակ դիտարկումը, թե պատերազմը, ինչի համար էլ լինի, կյանք է կործանում, սխալ կընկալվի:

-Սխալ ընկալումներ միշտ կան եւ կլինեն: Ու դրանից պետք չէ վախենալ: Պետք է պայքարել դրա դեմ: Պատերազմն արդեն պարտություն է: Կապ չունի մեկ մարդու տեսանկյունի՞ց են նայում, թե՞ հազարի:

**- Ֆիլմի նյութն ամբողջովին արխիվային է. որպես վավերագրող ռեժիսոր, կարիք, պակաս զգացե՞լ եք դեպքերին Ձեր հայացքով նայելու, թե՞ ժամանակակից օպերատորության արածը լրիվ բավարար էր ասելիքը տեղ հասցնելու համար:**

-Այո, ֆիլմում օգտագործվել են արխիվային կադրեր: Ու անկախ այդ ահռելի արխիվից, որն ուսումնասիրել եմ, միեւնույն է, մոնտաժային սեղանի առջեւ զգում ես, որ գուցե ինչ-որ պակաս բաներ կան: Չնայած` հույս ունեմ, որ ասելիքս փոխանցել եմ:

**- Ուսումնասիրության ընթացքի մասին էլ պատմեք, խնդրում եմ: Ո՞ր կադրերը կամ դրվագներն են սուր էմոցիաներ առաջացրել եւ ինչպե՞ս եք դրանք շեշտել ֆիլմում:**

-Այս ֆիլմը պատերազմի մասին է, իսկ այնտեղ բոլոր էմոցիաներն են սուր: Ֆիլմում հայացքներ են, որոնք պատերազմ են տեսնում. այդ բոլոր հայացքներն իմ շեշտերն են:

# Բարեւ, Մեծ եղբայր

Կներեք, բայց ես ձեզնից չեմ պատրաստվում թույլտվություն խնդրել` իմ ուզած գիրքը կարդալու համար: Ավելին, խորհուրդ եմ տալիս ձեզ որեւէ մեկից նման թույլտվություն չխնդրել: Էլ ավելին, բոլորս կարող ենք մեր ուզած գիրքը կարդալ մեր ուզած ժամին եւ վայրում` կապ չունի այդ գրքի անունն է` «Վերհիշելով իմ տխուր պոռնիկներին», մինչ մենք վաղ առավոտյան կուսանոցի դիմացի նստարանին նստած ենք, թե՞ գիրքը կոչվում է «Աստվածաշունչ», ու մենք կեսօրին Մալաթիայի տոնավաճառի կանգառում ենք: Այն հասարակությունը, որտեղ տվյալ գիրքը կարդալու համար հատուկ թույլտվություն է պետք, ճորտատիրական է, որտեղ կարդում են միայն այն, ինչը կարելի է եւ այն հասկանում են այնպես, ինչպես պետք է:

Ու եթե դուք մտածում եք, որ այդ ժամանակներն անցել են, քանի որ մենք այլեւս կարդում ենք, օրինակ, Ջորջ Օրուելի 1984-ը, ապա ասեմ, որ «Մեծ եղբայրը» դեռ շարունակում է մեզ հետեւել: Մեծամասնությունը, որից, ինչպես Գյոթեն էր ասում, ավելի նողկալի բան չկա, մեզ թելադրում է իր գրական, ավելի ճիշտ` քաղաքական ճաշակը եւ քարեր նետում մեզ վրա, եթե հանկարծ այդ ճաշակից դուրս ենք, առավել եւս` դրան հակառակ գրականությամբ ենք տարված: Իրականում, բոլոր նրանք, ովքեր կյանքում առնվազն 20 գիրք են կարդացել, գիտեն, որ երբ մարդը ինչ-որ գիրք է կարդում, դա չի նշանակում, որ հավանում է այն եւ կամ պատրաստ է ստորագրել հեղինակի ամեն նախադասության տակ: Ես, օրինակ, կարդացել եմ Միշել Ուելբեքի «Հնազանդությունը» եւ ոչ միայն ստորագրելու չի գալիս, այլեւ ուզում եմ հանդիպել պարոն Ուելբեքին, որպեսզի հարցնեմ, թե ինչպե՞ս կարելի է հրաշալի թեման դարձնել սեռական զզվելի խախճանք: Բայց ես ուրախ եմ, որ կարդացել եմ այդ գիրքը, քանի որ վստահ եմ, որ մեր կարդացած յուրաքանչյուր գիրք մեզ պետք է` թեկուզ զզվելու համար, ինչը նույնպես անհրաժեշտ է սովորել, ցանկալի է գրքից, որպեսզի... ճաշակով լինի:

Հիմա ես չեմ հասկանում այս աղմուկը` ինչ կարդալու: Չեմ հասկանում, թե մարդիկ ինչո՞ւ են գրախանութներում շշնջում, ոչ թե բարձրաձայն ասում, որ իրենք ուզում են գնել Ռոբերտ Քոչարյանի «Կյանքը եւ ազատությունը»: Հետաքրքրական չէ՞, նկատի ունեմ Քոչարյանի ճշմարտությունը, նրա տեսածը, նրա գնահատականները, նրա խոսքը, միտքը... Ինձ, օրինակ հետաքրքիր է, որովհետեւ Քոչարյանը ոչ միայն Արցախի առաջին եւ Հայաստանի երկրորդ նախագահն է, ոչ միայն աշխարհի այն եզակի գործիչն է, որ եղել է երկու պետության նախագահ, այլեւ կարեւոր դեր է խաղացել` շատ կարեւոր եւ շատ ողբերգական ժամանակներում: Բա չիմանա՞մ մարդը ինչ է մտածում, իր կարծիքով` ինչպես է եղել: Ի դեպ, նույն տրամաբանությամբ ես կարդացել եմ Նիկոլ Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը»: Երկուսի ժամանակ էլ ես ժպտացել եմ, հուզվել եմ, համաձայնել եմ, մերժել եմ, բարկացել ու հաշտվել եմ, նորից ապրել եմ... Մի խոսքով` մտածել եմ: Իսկ երբ մարդիկ մտածում են, ապա բռնապետությունները կործանվում են, կապ չունի քաղաքական, կրոնական, աշխարհագրական, թե՞ ընտանեկան:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 4



ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
դ.գ.թ.

# Քաղաքական էլիտաների բարոյական կերպարի ու բացարձակ իշխանության մասին

Մոտավորապես 10 տարի առաջ «**Ազգ**» օրաթերթում հոդված էի տպագրել՝ «Հայ քաղաքական դասի բարոյական թշվառությունը» ընդհանուր վերնագրով: Հոդվածի հիմնական բովանդակությունը Հայաստանում Լեւոն Տեր-Պետրոսյանի օրերից սկսած մինչեւ մեր օրերը (այդ պահի համար 2009թ.) ստեղծված եւ ձեւավորված քաղաքական էլիտայի բարոյական թշվառությունն էր:

Այսինքն, խոսքը իշխանության եկած այն մարդկանց մասին էր, ովքեր իրենց համար կուռք են կարգում պետության ղեկին գտնվող անձին, իսկ իրենց պաշտամունքի առարկա են ընտրում փողը եւ իշխանությունը: Այն ժամանակվա քաղաքական, այսպես կոչված, էլիտայի այդ պահվածքը վաղ թե ուշ պետք է հանգեցներ իշխանության հեղինակության վերջնական անկմանը եւ մարդկանց զայրույթին:

Երբ գործող նախագահ Սերժ Սարգսյանը փորձեց նախագահական աթոռից սահուն կերպով անցում կատարել դեպի իր համար պատրաստված սուպերվարչապետական բազկաթոռին, ապա այդ «օպերացիան» հասկանալի կերպով առաջացրեց բնակչության մի հսկայական հատվածի դժգոհությունը եւ հանգեցրեց «թավշյա հեղափոխությանը»: Հին քաղաքական էլիտան վերջնականապես հեռացվեց քաղաքական թատերաբեմից, արագ կերպով ձեւավորվեց նոր իշխանություն եւ բեմ դուրս եկան արդեն երիտասարդ էլիտայի ներկայացուցիչները:

Թվում էր թե նորերը արդեն պետք է որ դասեր քաղած լինեն նախկինների սխալներից ու փորձեին ձեւավորել քաղաքական նոր մշակույթ ու նոր կանոններ, սակայն այն ինչ տեսնում ենք արդեն այս օրերին, մեղմ ասած, հիասթափեցնող է: Նորօրյա «էլիտարները» իրենց նոր կարգավիճակը՝ բացարձակ իշխանությունը, մի բան, որ չունեին նույնիսկ նախկինները՝ ընդդիմության փաստացի բացակայությունը, փորձում են օգտագործել ի շահ իրենց, մտածելով միայն սեփական անձի եւ անձնական բարօրության մասին:

Նոր քաղաքական էլիտայի բարոյալքման այս գործընթացը տեղի է ունենում շատ արագ՝ այդ իշխանությունը պաշտպանողների եւ աջակցողների ապշահար հայացքի ներքո: Վերջիններիս հիասթափությունը կարող է կործանարար լինել քաղաքական այս նոր խավի համար, եթե վերջիններս ժամանակին չսթափվեն ու քայլեր չձեռնարկեն այս ուղղությամբ:

Առիթ ունեցել եմ գրելու, որ չկիսելով ներկա իշխանության քաղաքական հայացքներն ու տեսակետները, այնուամենայնիվ կարծում եմ, որ վերջիններիս ձախողումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության ձախողմանը եւս: Հիասթափությունը այնքան մեծ կլինի, որ այդ իրավիճակը կարող է սպառնալ պետության զարգացմանը եւ նույնիսկ գոյատեւմանը:

Այս իրավիճակը էլ ավելի է խորանում, երբ պարզ է դառնում, որ նորելուկները «սկզբունքորեն» դեմ են Հայ առաքելական սուրբ եկեղեցուն, փորձելով վերջինիս դուրս մղել հայկական դպրոցից եւ մեր կյանքից, աջակցում են ընտանեկան ինստիտուտները խաթարող կառույցներին ու իրենց քայլերով նպաստում են Արցախյան պատերազմի հաղթանակները կերտած անձանց ու բանակի մի շարք գեներալների վարկաբեկմանը: Պատերազմի մեջ գտնվող հայկական պետականության համար կարեւոր նշանակություն ունեցող այս կառույցների նկատմամբ հարձակումները թուլացնում են պետության հիմքերը:

Վիճակը էլ ավելի մտահոգիչ է դառնում, երբ պարզվում է, որ հների անբարոյականության դեմ պայքարի անվան տակ իշխանության եկած քաղաքական նոր էլիտան իրեն շրջապատում է նույն այն կոմֆորտով, ինչը հատուկ էր հներին: Երկրում աղքատության բարձր տոկոսի պայմաններում չեն ամաչում եւ ինքն իրենց բարձր վարձատրություն ու հավելավճարներ են նշանակում, եւ այսպես շարունակ:

Պահանջները քաղաքական այս ուժի հանդեպ շատ ավելի մեծ են լինելու քան երբեւէ, եւ փաստացի ընդդիմության բացակայության պայմաններում, նույն այդ ընդդիմությունը կարող է ձեւավորվել փողոցում, ինչը շատ ավելի վտանգավոր է ոչ այնքան իշխող վերնախավի, որքան պետության ապագայի հեռանկարով: Քաղաքական այս ուժը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, պետք է փորձի հրաժարվել ընդդիմադիր գործչին հարիր պահվածքից եւ վերջապես զգա պետության համար պատասխանատուի իր դերը՝ գործի ու վարվի համապատասխանաբար:

Այս կառավարությունը պետք է օր ու գիշեր զբաղվի պետության կառուցման գործընթացով, որպեսզի կարողանա գոնե մասամբ բավարարել այն սպասումները, որոնք կան նրանից: Քաղաքական նոր էլիտան պետք է փորձի չկրկնել նախկինի սխալները, իրեն վեր չդասի բոլորից, չօգտագործի իր քաղաքական իշխանությունը ի նպաստ իրեն, իր քաղաքական թիմի կամ ընտանիքի:

Բառացիորեն մի քանի ամիս առաջ իշխանության եկած քաղաքական ուժի այլասերումը կործանարար է բոլորիս համար: «Իշխանությունը մերն է, ինչ կուզենք կանենք» սկզբունքը անընդունելի է, քանի որ մարդկանց համոզում է, որ իրականում տեղի ունեցածը, այսպես կոչված, թավշյա հեղափոխությունը իրականում պարզունակ հեղաշրջում էր բարձրագոչ լոզունգների ներքո:

Կունենա՞ արդյոք Նիկոլ Փաշինյանը եւ նրա շրջապատը այդքան խելք ու իմաստություն խուսափելու համար զարգացման վատագույն սցենարներից, թե՞ մենք կարող ենք ականատեսը լինել «թավշյա հեղափոխություն 2» տարբերակին: Փողոցներ փակել բնակչության մի ստվար զանգված սովորել է եւ նույնիսկ հմտացել, մնում է, որ գործող իշխանությունը իր քայլերով դրա առիթը չտա:

Քրիստոնյային ոչ վայել այդ պահվածքը՝ կռապաշտությունը եւ փողի հանդեպ մոլուցքը հանգեցրել էր նրան, որ իշխանության կերակրատաշտակի մոտ գտնվող անձինք հանուն դրա պատրաստ էին ամեն ինչի, կորցնելով իրենց մարդկային դեմքը եւ նկարագիրը: Նմանատիպ «արժեհամակարգ» ունեցող անձինք վտանգավոր էին ոչ միայն գործող իշխանությունների, այլեւ պետության համար, քանի որ հաստատուն կարծիք էին ձեւավորել բնակչության մի հսկա զանգվածի մոտ, որ միայն այդ «արժեքների» շնորհիվ կարելի է մաս կազմել իշխանական համակարգին:

Հասկանալի է, որ բոլորը չէ, որ ունեին նմանատիպ «որակներ», բայց որ այդ մարդիկ վարկաբեկում էին պետական ամբողջ համակարգը, դա փաստ էր: Քծնանքն ու շողոքորթությունն էին դարձել պետական աստիճանակարգով առաջ շարժվելու հիմնական շարժիչ ուժը: Մասնագիտական որակները երկրորդ պլան էին մղվում, իսկ այդպիսիք ունեցողները միայն երրորդական դիրքերում էին գտնվում:

Հասկանալի է, որ այդ անառողջ մթնոլորտի պայմաններում սպասել ու առավել եւս ակնկալել ինչ-որ զարգացումներ ու էական առաջընթաց կգրանցվի պետությունում, անհնար էր: Այդ իրավիճակը հանգեցրել էր գործող քաղաքական ուժի եւ նրա իշխանության հանդեպ անվստահության, ինչն էլ, հասկանալի կերպով հանգեցրեց իշխանափոխության:

## ՀԱՄԱՌՈՏ

### Հայկական զինուժը ՍՈՒ-30ՍՄ կործանիչներ է ձեռք բերում

ՀՀ ՊՆ մամլո ծառայությունը հաղորդագրություն է տարածել, ըստ որի՝ հայկական զինուժը Ռուսաստանից ձեռք է բերել ՍՈՒ-30ՍՄ բազմաթիրախային կործանիչներ: Նախարարությունը տեղեկություններ չի հաղորդել՝ քանի կործանիչ է գնվել եւ ինչ գնի սահմաններում:

ՍՈՒ-30ՍՄ-ը իր տեխնիկական եւ թռիչքային բնութագրերի շնորհիվ դասվում է 4++ սերնդի շարքում: Կործանիչի գերխնդիրն օդում գերիշխանություն հաստատելն է: Կարող է մարտական առաջադրանք կատարել օրվա որեւէ ժամին՝ եղանակային բոլոր պայմաններում:

### Հայաստանում գործարկվել է արեւելյան հացամթերքի արտադրամաս

«Արմենպրես» լրատվականի փոխանցմամբ՝ հունվարի 30-ին Հայաստանում գործարկվել է արեւելյան հացամթերքի արտադրամաս:

«Կատարվել է 225.000 դոլարի ներդրում: Առաջիկա երեք տարում նախատեսվում է եւս 150.000 դոլարի ներդրում»,- ասված է հայտարարության մեջ:

«Ռիվիերա կապիտալ»-ի գործադիր տնօրեն **Կարեն Մկրտչյանը** նշել է, որ սա նոր բան է մեր երկրում.

«Կա պահանջարկ թե՛ տեղական՝ արեւելյան խոհանոց ունեցող ռեստորաններից, թե՛ հայրենադարձ սիրիահայերի ու լիբանանահայերի կողմից: Նախանձախնդիր ենք, որ շուտով ավելացնենք մեր արտադրանքը»:

Գ. Գ.

# Գյուլբենկյանի հետաքրքրական կյանքը՝ անգլերենով



«Լոնդոնի Քինգզ քոլեջի շրջանավարտ, 19-ամյա Գալուստ Գյուլբենկյանը մեկ անգամ էր միայն, Բաքու այցելության ժամանակ, տեսել նավթահանք, բայց անմիջապես ըմբռնել էր այդ ընդերքի կարեւորությունը եւ հետագա հնարավորությունները միջազգային շուկայում: Լոնդոնում որպես ձեռնարկատերի ձեռք բերած մասնագիտական հմտությունները զուգակցելով Մերձավոր Արեւելքում հաստատած իր բազմաբնույթ կապերի հետ, նա շատ շուտով իր համար 5 տոկոսի չափով բաժնետոմսեր է կարողանում ապահովել Օսմանյան կայսրության Ասիական տարածքում գտնվող բոլոր նավթահանքերում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կնքված այդ պայմանագիրը այնքան էլ մեծ գումար չէր խոստանում ապահովել, բայց հետագայում այն մեծ հարստություն դարձավ, որն այսօրվա հաշվարկներով հավասար է մոտավորապես հինգ միլիարդ դոլարի: Նրա կյանքի պատմությունը չափազանց հետաքրքրական է», գրում է անգլիական հեղինակավոր «**Գարդիան**» թերթում **Օլիվեր Բուլոուն**, գրախոսելով Գյուլբենկյանի ծննդյան 150-ամյակի առթիվ Անգլիայում վերջերս անգլերեն լեզվով լույս տեսած «**Պարոն հինգ տոկոսը**» (Mr. Five Per Cent) կենսագրական հատորը, որի հեղինակն է **Ջոնաթան Կոնլին:** 416 էջանոց գիրքը պարունակում է 8 էջ գունավոր եւ 16 էջ սեւ ու սպիտակ լուսանկարներ:

Հեռատես Գալուստ Սարգսի Գյուլբենկյանը ծնվել էր 1859-ին Կոնստանդնուպոլսում, որտեղ 1911-12 թվերին հիմնել էր Թուրքիայի նավթային ընկերությունը: Եղել էր Փարիզի եւ Լոնդոնի թուրքական դեսպանատների տնտեսական խորհրդականը: Այնուհետեւ Լոնդոն տեղափոխվելով ստացել էր անգլիական հպատակություն, սակայն դժվար բնավորության տեր անձնավորություն լինելով, խուսափել էր լուրջ կապեր հաստատել այնտեղ կամ Փարիզում: Նախընտրել էր հաստատվել Լիսաբոնում, որտեղ էլ վախճանվել էր 1955-ին: Իր կտակի համաձայն 1956-ին այնտեղ հիմնվել է Գալուստ Գյուլբենկյան հաստատությունը, որը Եվրոպայի մեծագույն բարեգործական կառույցներից մեկն է եւ նպաստներ է հատկացնում նաեւ սփյուռքահայ մշակութային միություններին, վարժարաններին, հայապահպանական ծրագրերին(*): Իսկ հաստատության կից գործող պատկերասրահը Լիսաբոնի տեսարժան վայրերից ամենափնտրվածն է իր արվեստի հարուստ ու անզուգական գործերով:

Գյուլբենկյանը նաեւ 1930-ին ընտրվել է ՀԲԸՄ-ի նախագահ, հաջորդելով Պողոս Նուպարին, սակայն մեկ եւ կես տարի անց ներկայացրել է իր հրաժարականը՝ հիմք ունենալով Խորհրդային Հայաստանի կառավարության իր հասցեին ուղղած մեղադրանքները (**):

«Պարոն հինգ տոկոս» գրքի հեղինակ Ջոնաթան Կոնլին ծնվել է Նյու Յորքում, սակայն համալսարանական կրթություն ստացել է նախ Օքսֆորդում, իսկ այնուհետեւ Քորտոլդում եւ Քեմբրիջում: 2006ից սկսած Մեծ Բրիտանիայի արդի պատմություն է դասավանդում Սաութհեմպտոնի համալսարանում: Հեղինակ է մի շարք պատմական գրքերի:

Հ.Ծ.
(The Arm. Mirror-Spectator)

**) Իրականում Գյուլբենկյան ֆոնդի հատկացումների մեջ հայկականը կազմում է չնչին տոկոս, շատ ավելի նվազ՝ քան 5 տոկոսը:-* ***Ծ.Խ.:***

***) Ոչ միայն Խ. Հայաստանի կառավարության, այլեւ՝ ՀՅԴաշնակցության, որը նրան մեղադրում էր ոչ ավել, ոչ պակաս՝ խորհրդային գործակալ լինելու մեջ, իբրեւ «փաստ» առաջ քաշելով Մայր հայրենիքին եւ Ամենայն հայոց կաթողիկոսությանը ընծայած բարեգործական նվիրաբերումները: Այս կապակցությամբ կարելի է վերստին կարդալ հանգուցյալ Կառլեն Դալլաքյանի «ՀԲԸՄիության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ» գրքույկը, հրատարակված 1996 թ. Երեւանում, «Ազգ» օրաթերթի կողմից:-* ***Ծ.Խ.:***

# Բաց նամակ Երեւանի գլխավոր ճարտարապետ Արթուր Մեսչյանին

Սիրելի Արթուր Մեսչյան, սիրելի երգիչ, մեծանուն ճարտարապետ:

Ուրախությամբ լսեցի Ձեր ասուլիսը՝ մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ նշանակվելու 100-րդ օրվա կապակցությամբ:

Ձեր խոսքը ինձ ոգեւորեց, քաջալերեց (այո՛, այո՛, քաջալերեց), որպեսզի իմ մեջ տարիներ շարունակ փայփայած նվիրական մի իղձ ներկայացնեմ հանրությանը եւ Ձեր միջոցով՝ վերջապես իրականություն դարձնելու այն: Ինչո՞ւ Ձեր միջոցով... Որովհետեւ Դուք այն անձն եք, որ կարող եք, ընդունակ եք իրականացնելու ոչ միայն իմ, այլեւ այդ իղձը փայփայող հազարավոր հայերի կամքը:

Սիրելի Արթուր Մեսչյան, բանն այն է, որ հայ ժողովրդի մեծանուն զավակ, աշխարհահռչակ նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչարը հուղարկավորված է քաղաքի Թոխմախգյոլի գերեզմանոցում (Մաեստրոն իր մահկանացուն կնքեց 1979թ. հունվարի 22-ին), մի քանի կարճամիտ ու մորթապաշտ համայնավարականների հանցավոր թողտվությամբ: Եւ ահա չորս տասնամյակ է այդ անարդարությունը չի շտկվում: (Հիշեցնեմ՝ այս մասին 2004 թվականին գրել է նաեւ Ավետիք Իսահակյանի որդին՝ Մաեստրոյի ընկերն ու բարեկամը, Հայկինոյի երախտավոր, կինոռեժիսոր Վիգեն Իսահակյանը իր «Փարիզ. Քոչար. անցած օրեր» գրքում, որը լույս է տեսել 2005 թվականին):

Մի հետաքրքրական փաստ. 9 թվանշանը Մաեստրո Քոչարի կենսագրության մեջ ասես ճակատագրական դերակատարություն ունի. ծնվել է 1899թ. հունիսի 15-ին, 1919-ին ավարտել է Մոսկվայի Ազատ Գեղարվեստի ուսումնարանը (Կ. Պոնչալովսկու արվեստանոց), Փարիզից, ուր վայելում էր մեծ համբավ ու հռչակ, գալով Երեւան, 1939-ին մայրաքաղաքում տեղադրվում է «Սասունցի Դավիթ» ձիարձանի գիպսե տարբերակը, իսկ 1959-ին «Դավթի» մերօրյա արձանն է վեր խոյանում, որը դառնում է ոչ միայն մայրաքաղաքի, այլեւ Հայաստանի խորհրդանիշը:

Եւ ահա 2019 թվականն է. լրանում է Երվանդ Քոչարի ծննդյան 120-ամյակը եւ մահվան 40-րդ տարելիցը:

Կարծում եմ հարմար ժամանակն է այս նամակով դիմել Ձեզ եւ առաջարկել կատարելու ազգանվեր մի մեծ գործ. Մաեստրո Քոչարի աճյունը տեղափոխել մեր մեծերի Պանթեոն՝ իր արժանի տեղը, իսկ «Սասունցի Դավիթ» ձիարձանը խառը կանաչու եւ բանջարեղենի շուկայի տարածքից տեղափոխել Հանրապետության հրապարակը՝ նրան արժանի տեղը, որն արդեն վաղուց պրոլետարիատի աղբից մաքրվել է...

Վստահ եմ, սիրելի Մեսչյան, մեր նոր Հայաստանի իմաստուն ղեկավար այրերը (նախագահ, վարչապետ, քաղաքապետ) տեր կկանգնեն Ձեր նախաձեռնությանը, նրանք հավանություն կտան եւ կկանգնեն Ձեր կողքին...

Սկսեք, արեք այդ գործը, սիրելի Մեսչյան:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՍՏՅԱՆ
Գրող, կինոգետ,
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պգդ, պրոֆեսոր

# Ինչու ավանդական կուսակցությունները այդպես էլ «դրսեցիներ» մնացին

Խորհրդային տարիների համատարած կուսակցականացման գործընթացից խուսափել եմ, չնայած որ առաջարկներ եղել են: Գլխավոր պատճառը կոմիսարների կաշվե բաճկոնները արտասահմանյան արտադրության շքեղ կոստյում-փողկապներով փոխարինած ղեկավարների համատարած «ինչ ուզենք-կանենք» գործելաձեւերից զզված լինելս էր: Չէ, քաղաքական պայքարում չեմ եղել, ուղղակի ինքս այլընտրանքի պահանջ էի զգում եւ գտա: ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ուսանողին (այսինքն՝ ինձ) երկրորդ կուրսից «Արմենական» էին անվանում թե՛ ուսանողները, թե՛ դասախոսները:

Արմենականների վերաբերյալ աղբյուրներ էի փնտրում: Չգիտեմ պատահաբար, թե նախախնամության թելադրանքով, սկսեցի շփվել սփյուռքահայ ռամկավար (Արմենականների ժառանգորդներն են) ուսանողների հետ: Իսկ երբ Խորհրդային կայսրությունում իր հայտնի перестройка-ով (վերակառուցման քաղաքականություն) իշխանությունը գլխավորեց Միխայիլ Գորբաչովը եւ երկրում ծայր առան գաղափարական զարթոնքն ու նորովի մտածողությունը, ես արդեն «պատրաստի» արմենական-ռամկավար էի: Սկզբում փոքրաթիվ մտերիմներով, այնուհետեւ որպես «նախաձեռնող խումբ» հիմնադրեցինք Հայաստանի ՌԱԿ-ը: Հենց այդ օրվանից էլ ինձ հանգիստ չի տալիս այն միտքը, թե ինչու սփյուռքահայ ավանդական կուսակցությունները խորհրդարանում ունենալով 23 անդամից բաղկացած խմբակցություն (ՀՌԱԿ) եւ տեւական ժամանակ մաս կազմելով իշխանություններին (ՀՅԴ-ն ուներ, ավելի ուշ՝ նաեւ նախարարներ, մարզպետներ, համայնքապետեր եւ այլ աստիճանի պաշտոնյաներ), ՀՀ-ում այդպես էլ վճռական գործոններ չդարձան: Ինչու ազգ, երկիր եւ պետություն առաջնորդող որոշումներում դրանց մասնակցությունը փաստորեն բացակայում է:

Բոլորիս՝ հայաստանաբնակ թե սփյուռքահայ, երազանքը մեկն է՝ունենալ հզոր, բարգավաճ եւ շարունակաբար զարգացող հայրենիք: Իհարկե, ցանկությունների մեջ տարբերություններ կան. հայրենաբնակ հայը աշխատանքի, օրվա հացը վաստակելու, կյանքը բարելավելու անհրաժեշտություն է զգում: Իսկ սփյուռքահայը՝ հուշերի, երազային զգացումների ու անսահման կարոտը գովերգող երգերի, բանաստեղծությունների, լուսանկարների ու տեսանյութերի կարիք ունի:

Ակնհայտ է նաեւ, որ հանապազօրյա հացի հայթայթման ամենօրյա դժվարին գործընթացում գտնվող հայրենաբնակ եւ ինքնության պահպանման համար բազմաթիվ ու բազմապիսի մարտահրավերների դիմագրավող սփյուռքահայը մեկ օրում չէին կարող վերափոխվել: Գաղտնիք չէ նաեւ, որ խորհրդային միակուսակցական 70 տարիների ընթացքում մեր կամքից անկախ հայության երկու հատվածները զգալի խորթացել էին միմյանցից, առանձին դեպքերում նույնիսկ թշնամացել: Բնականաբար, որքան էլ մտածեինք, որ նույն ժողովուրդն ենք, չէինք կարող անտեսել, որ տարբեր «մշակումների» էինք ենթարկվել ու տարբեր դարձել, իսկ այդ տարանջատումը մեկ օրում հնարավոր չէր հաղթահարել:

Ի դեպ, զարմանալի է, սակայն տարանջատման գործընթացին նպաստեցին նաեւ տարբեր նպատակներով սփյուռքահայ խմբերի հայրենիք այցելություններն ու զբոսաշրջությունը: Հայրենաբնակը տեսնելով լավ հագնված, նոր ու թանկարժեք ֆոտոտեխնիկայով զինված սփյուռքահայերին եւ այդ հնարավորություններից զուրկ լինելով, (ոչ միայն հնարավորություն չուներ դրանցից գնելու, այլեւ չէր կարողանում ճամփորդել), իսկ զբոսաշրջիկի կամ մեկ այլ կարգավիճակով հայրենիք այցելածների տեսքը ճոխության եւ հարստության մասին էին վկայում: Հենց դա էլ ստեղծում էր այն հաճախ իրականությանը չհամապատասխանող տպավորությունը, թե բոլոր դրսում ապրողները հարուստ էին: Սա էլ դրդում էր մտածելու՝ իսկ ինչու ինքն էլ հարուստ չլինի ու չվայելի կայնքը ինչպես իր սփյուռքահայ եղբայրները: Հայրենաբնակը որտեղից իմանար, որ այդ զբոսաշրջիկներից շատերը պարտքով կամ վարկով են ձեռք բերել այդ ուղեգրերը: Որ նրանցից շատերի տների ու շքեղ ավտոմեքենաների համար նրանք վճարում են երբեմն ողջ կյանքում:

Այս ամենի արդյունքում աստիճանաբար ծնվեց եւ արմատացավ այն մտայնությունը, որ Սփյուռքում բոլորն անխտիր հարուստ են: Անկախությունից հետո էլ միանգամայն բնական համարվեց, որ հենց Սփյուռքը պիտի օգնի վերաշինելու եւ ծաղկեցնելու Հայաստանը: Ավանդական կուսակցություններին էլ ոչ ավել ոչ պակաս վերապահվեց հարուստ քեռու դերակատարություն: Քեռի, որը զարմիկներին պարզապես պարտավոր էր «ապահովել» շոկոլադով: Սակայն չընկալվեց այն պարզ ճշմարտությունը, որ Սփյուռքն ընդամենը աշխարհասփյուռ հայություն է եւ նրան պետության հետ համեմատելը անշնորհակալ գործ: Մոռացվում էր, որ սփյուռքյան կառույցները հազիվ էին կարողանում բավարարել հենց Սփյուռքի կարիքները:

Ահա այս բարոյահոգեբանական մթնոլորտում իրենց գաղափարական, ծրագրային եւ կառուցվածքային տարբեր մոտեցումներով էլ մեր ավանդական կուսակցությունները վերադարձան հայրենիք: Դիմավորող հայրենաբնակները հիմնականում նրանց չէին ճանաչում եւ Հայրենիք վերադարձող կուսակցություններին վերաբերում էին ոչ որպես լիիրավ քաղաքական կազմակերպությունների, այլ ավելի շուտ որպես դրամական միջոցներ ունեցող կամ բարեգործական առաքելություն իրականացնող միությունների: Այսինքն՝ ավանդական կուսակցություններից, որքան էլ որ զարմանալի է, երկրի քաղաքական կյանքում լիիրավ մասնակցի, առավել եւս առաջնորդի դերակատարություն չէր ակնկալվում:

Անկախության առաջին տարիներին ավանդական կուսակցություններին չնչին բացառությամբ անդամագրվեցին հիմնականում ոչ գաղափարական համոզմունքներից ելնելով, այլ՝ խորհրդային տարիների սովորությանը եւ այն համոզումին, որ կուսակցական տոմսը լայն հնարավորություններ էր ապահովում: Ավելի շատ՝ այդ հարթակն ու ֆինանսական հնարավորությունները օտագործելով հասարակության մեջ դիրք գրավելու նպատակով: Ավանդականների վերադարձն էլ շատերի կողմից բնական չհամարվեց, քանի որ վաղուց արդեն գաղափարական եւ հոգեբանական ընկալումների տարբերություններ էին արմատավորվել: Մի բան, որ ակնհայտ դրսեւորվել էր դեռեւս ներգաղթի օրերին՝ ազգի մի հատվածի մոտ այլամերժության վտանգավոր ախտ էր նկատվել:

Անկախության առաջին տարիներին ավանդական կուսակցությունները տարբեր դիրք գրավեցին օրվա իշխանությունների նկատմամբ, ավել կամ պակաս հանդուրժվեցին վերջիններիս կողմից, սակայն բոլոր դեպքերում համարվում էին օտարերկրացիներ եւ ողջ ազգի ղեկավարումը դրանց չէր վստահվում: Հնարավոր էր համարվում միայն անհատ անդամների նյութական ու մասնագիտական ներդրումը: Իսկ կուսակցությունները իրենց հայապահպանական ջանքերն ու հայաբաղձ ձգտումները նկատի ունենալով միամտաբար հույս ունեին անմիջապես եւ գրկաբաց ընդունվել հասարակության եւ նույնիսկ պետության ղեկավարության կողմից: Մի բան, որն այնքան էլ չէր համապատասխանում իրականությանը:

Ավելին, ազգային-ավանդական կուսակցությունները Հայաստանում ընդհանուր ղեկավարություն չէին կարող դառնալ, քանի որ դրսից եկածը հոգեբանորեն ընդունելի չէր համարվում: Իսկ նրանք, որ անդամագրվեցին ավանդական կուսակցություններին, չնչին բացառություններով, չունեին այն գաղափարական եւ ծրագրային համոզմունքները, ավանդույթներն ու կարոտ-երազը, որ հատուկ էին դրանց սփյուռքահայ անդամներին, ուստի նույն հաջողությամբ կարող էին անդամագրվել դրանցից յուրաքանչյուրին: Տարբեր մակարդակի ընտրություններն էլ ցույց տվեցին, որ Հայաստանի հանրային կարծիքը երկար ժամանակ շարունակում էր դրսեցի եւ օտար համարել ավանդական կուսակցություններին, նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք ներկայացնողներն արդեն ՀՀ քաղաքացիներ էին: Ցավոք, այսօր էլ այդ վիճակն է:

Որպես կանոն, Հայաստանի բնակչությունն իր մտավորականությանն ունկնդրելու ավանդույթն ունի: Բայց արի ու տես, որ ավանդական կուսակցությունները չկարողացան ապահովել մտավորականությանը անկողմնակալ եւ ոչ հատուկ քաղաքական շարժառիթներով ներկայությունը իրենց գործառույթներում: Անհրաժեշտ էր գիտակցել, որ Հայաստանը բարձրակարգ մտավորականություն ուներ, որի հետ հարկավոր էր խոսել ոչ թե հրամանների, կարգապահական եւ այլ զանազան քարացած մոտեցումներով: Որ նրա հետ արհեստական միջոցներով փոխհասկացողության հնարավոր չէր հասնել: Հարկավոր էր ուսումնասիրել, գտնել դեպի հասարակության լայն խավերը տանող ուղիները, ամուր կամուրջներ ստեղծել նրա հետ: Այնինչ, այս տարրական պարզ ճշմարտությունը շատ անգամներ չընկալվեց, որի արդյունքում էլ Սփյուռքն իր գաղափարական, մշակութային եւ հոգեբանական բազմաշերտությամբ եւ իր կուսակցություններով հանդերձ ընկալվեց ավելի շատ դրսի բարեգործական կամ նմանատիպ այլ կառույցների կարգավիճակով:

Մի շատ կարեւոր հանգամանք էլ. անցած դարի ընթացքում գրեթե բոլոր գաղափարական տեսությունները ու աշխարհայացքները արմատական ձեւափոխությունների (mutations) ենթարկվեցին, բայց ավանդական կուսակցություններն իրենց ինքնության պահպանումով տարված՝ չհետեւեցին համաշխարհային այդ փոփոխություններին, մնացին նույնը, ինչ էին սկզբում: Ու թեեւ դրանցից, օրինակ ՀՅԴ-ն, բավական ժամանակ մաս կազմեց իշխանության վերնախավին, սակայն դա բոլորովին էլ չէր նշանակում, որ վճռորոշ դերակատարություն ուներ կարեւորագույն հարցերի լուծման դեպքում: Արդ, ավանդական կուսակցությունները պետք է մանրամասն հետազոտություն կատարեն եւ պարզեն, թե ինչու այնուամենայնիվ իրենք հայաստանյան հասարակության կողմից լիարժեք չեն ընդունվում, որ նրանց նկատմամբ բոլոր դեպքերում առկա են որոշ վերապահություններ:

Հարկավոր է սթափվել եւ վերանորոգվելով վերանորոգել հիմնավորապես, քանի որ կարկատաններով հագուստը երբեք նորի հետ համեմատելի չի դառնա: Հարկավոր է ազգակերտ, հայրենակերտ, ապագայակերտ նոր ըմբռնումներով առաջ ընթանալ, հարկավոր է գիտակցել. որ քառակուսի անիվներով ճանապարհ դուրս գալը նման է սիզիֆյան՝ ասել է՝ անիմաստ աշխատանքի: Հարկավոր է գիտակցել, որ վաղն արդեն ուշ կլինի, եւ ամեն ինչ սկսել հենց այս պահից, յուրաքանչյուրս մեզանից:

## Առողջապահական նոր փաթեթ

**Կառավարության երեկվա որոշմամբ նոր սոցիալական՝ բուժօգնության փաթեթ ներդրվեց նպաստառուների, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների ու նրանց հավասարեցված, ծերանոցներում եւ անօթեւանների ժամանակավոր կացարաններում խնամվող անձանց համար: Փաթեթի շահառու են դիտվում նաեւ բռնադատվածները, Չեռնոբիլի աղետի վերացման մասնակիցները, թրաֆիքինգի ենթարկվածները, ձերբակալված եւ կալանավորված անձինք: Փաթեթի ամբողջական արժեքը երեք միլիարդ դրամ է:**

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 6



# Հայաստանի եւ Իսրայելի պատմական ընդհանրություններն ու առանձնահատկությունները

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Սկիզբը՝ նախորդ համարում եւ վերջ*

Արմենոցիդը եւ հոլոքոստը համարվում են դասական ցեղասպանություններ: Բայց ունեն նաեւ առանձնահատկություններ եւ տարբերություններ : Դրանք ակնհայտ են դառնում նրանց համեմատությունից:

**Առաջին, հայերի ցեղասպանությունն իրագործվել է նրանց բնօրրան-հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում: Հոլոքոստն իրականացվել է Գերմանիայում եւ նրա արբանյակ եվրոպական երկրներում, որը հրեաների ոչ բնօրրանն է եւ ոչ էլ պատմական հայրենիքը:**

Երկրորդ, հայերի ցեղասպանությունը կատարվել է եկվորների՝ թուրքերի կողմից, որոնք ներխուժել էին Ալթայից եւ Միջին Ասիայից դեռեւս XI դարում եւ իրագործել նրա բնիկների՝ հայերի ֆիզիկական ոչնչացումը: Հրեաների պարագայում եկվորները իրենք՝ հրեաներն էին, որոնք հաստատվել էին Գերմանիայում եւ նրանց հոլոքոստը կամ ողջակիզումը իրականացվել է բնիկների՝ գերմանացիների կողմից:

Երրորդ, արմենոցիդի հետեւանքով հայերը կորցրեցին իրենց հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստանը: Հրեաները հոլոքոստի հետեւանքով հայրենիք չկորցրեցին, քանի որ նրանք եկվորներ էին, եւ Գերմանիան նրանց հայրենիքը չէր: Հրեաների հայրենիքը գտնվում էր Եվրոպայից դուրս: Նրանց պատմական հայրենիքը գտնվում էր Մերձավոր Արեւելքում; Հոլոքոստից հետո, կենդանի մնացած հրեաների մոտ ուժեղացավ սեփական հայրենիք ունենալու գաղափարը եւ ձգտումը, որը 1948թ. պսակվեց հաջողությամբ:

**Չորրորդ, արմենոցիդից հետո հայերի փրկված բեկորները ցրվեցին համայն աշխարհով մեկ: Այդպես ձեւավորվեց հայկական նոր սփյուռքը, որտեղ հայերի թվաքանակն ավելի շատ է, քան Հայաստանի Երրորդ Հանրապետությունում: Հրեաների մոտ հակառակ գործընթացը սկսվեց: Հրեական ստվար սփյուռքը գոյություն ուներ եւ մինչեւ հոլոքոստը: Հոլոքոստից եւ Իսրայել պետության կազմավորումից հետո սկսվեց հրեաների ազգային համախմբումը: Միլիոնավոր սփյուռքահրեաներ աշխարհի տարբեր ծայրերից վերադարձան եւ սկսվեց հրեական ազգի վերակազմավորման պրոցեսը:**

Այժմ կանգ առնենք Հայաստանի եւ հայերի կողմից հրեական հոլոքոստի եւ Իսրայելի ու հրեաների կողմից հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վրա: Հայերը սկզբից եւեթ ճանաչել են հրեական հոլոքոստը: Իսկ 1991թ. Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը դարձավ անկախ պետություն եւ հռչակվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, ապա նա պաշտոնապես ճանաչեց հրեական հոլոքոստը:

Ինչ վերաբերում է Իսրայելի կողմից հայոց ցեղասպանության ճանաչմանը, ապա այստեղ դրությունը միանգամայն այլ է: Երբ վերականգնվեց Հայաստանի անկախությունը եւ հռչակվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, հայերի մոտ ոչ մի կասկած չկար, որ հայոց ցեղասպանության առաջին ճանաչողների շարքերում կլինի Իսրայելը: Նրանց այդ վստահությունը հիմնված էր երկու գործոնների վրա:

Առաջին, հայերը ցեղասպանության հարցում իրենց եւ հրեաներին համարում էին բախտակից ժողովուրդներ: Ուստի նրանք գտնում էին, որ միմյանց ցեղասպանության ճանաչումը միանգամայն բնական էր: Ճանաչելով հրեական հոլոքոստը, հայերն ակնկալում էին համանման դիրքորոշում Իսրայելի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Երկրորդ, հայերը շատ լավ տեղյակ էին, որ գենոցիդ եզրի հեղինակը հրեա Ռաֆայել Լեմկինն է, որը այդ գյուտը կատարել էր ելնելով բացառապես հայոց ցեղասպանության իրողությունից եւ անժխտելի փաստից: Ռաֆայել Լեմկինի պարագան հայերի մոտ վստահություն էր ներշնչում Իսրայելի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում: Բայց այդպես չեղավ:



Այստեղ կա մի շատ կարեւոր նրբություն:

Հայոց ցեղասպանությունը հրաժարվում են ճանաչել Իսրայելի կառավարությունը, քնեսետը՝ պառլամենտը, եւ այլ պաշտոնական պետական մարմիններ: Սակայն, հանուն ճշմարտության պետք է նշել, որ Իսրայելի թե՛ կառավարության եւ թե՛ քնեսետի կազմում կան պետական գործիչներ, նախարարներ եւ պառլամենտականներ, որոնք հանդես են գալիս հանուն հայոց ցեղասպանության ճանաչման:Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել Իսրայելի կրթության նախարար եւ Մերեց կուսակցության ղեկավար Յոսի Սարիդին, որը դատապարտում էր Իսրայելի դիրքորոշումը հայոց ցեղասպանությունը չճանաչելու հարցում: Համաձայն չլինելով Իսրայելի կառավարության այդ քաղաքականության հետ, նա հրաժարական տվեց Կրթության նախարարի պաշտոնից:

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում իր սեփական դիրքորոշումն ունի հրեական-իսրայելական մտավորականությունը, որը ոչ միայն կանգնած է հայոց ցեղասպանության ճանաչման դիրքերում, այլեւ պահանջում է, որ Իսրայելի քնեսետը եւ կառավարությունը ճանաչեն հայոց եղասպանությունը: Այդ իմաստով արժանին պետք է հատուցել Իսրայելի Բաց համալսարանի պրոֆեսոր Յաիր Օրոնին, որի հայոց ցեղասպանությանը նվիրված արժեքավոր աշխատությունը թարգմանվել է հայերեն եւ հրատարակվել Երեւանում: Նա իր անհամաձայնությունն է արտահայտում նաեւ այն իրողության կապակցությամբ, որ թեեւ Իսրայելում դասավանդում են հոլոքոստի հետ կապված հարցերը, «սակայն Իսրայելում կրթական համակարգը եւ համալսարանները սովորաբար խուսափում են գործ ունենալ այլ ցեղասպանությունների հետ»: Նա ի նկատի ունի նաեւ հայոց ցեղասպանությունը: Իսկ Յեհուդա Բաուերը, պրոֆեսոր, Յադ Վաշեմ, Իսրայել, խստիվ դատապարտում է «ցեղասպանության ժխտումը, որը հատկապես աղաղակող է հայկական ցեղասպանության պարագայում»: Նրա այդ տեսակետն ուղղված է Իսրայելի կառավարության վարչապետի՝ Բենյամին Նաթանյահուի քաղաքականության դեմ, որը զանազան պատրվակներով հեռու է հայոց ցեղասպանությունը ճանաչելու մտադրությունից:

Շատ կարեւոր է նաեւ մի այնպիսի ականավոր եւ համաշխարհային հռչակ վայելող ցեղասպանագետի դիրքորոշումը, որպիսին Նյու Յորքի ցեղասպանության ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն, ազգությամբ հրեա Էլեն Ֆայնն է: Նա հենց սկզբից, քսանականների վերջերից եւ երեսունականների սկիզբներից, կանգնած է եղել գենոցիդ եզրի հեղինակ Ռաֆայել Լեմկինի կողքին, ոգեւորել նրան, պաշտպանել նրա տեսակետը հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Եվ երբ 1994թ. ստեղծվեց Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, ապա Էլեն Ֆայնն ընտրվեց նրա առաջին պրեզիդենտը: Ասոցիացիայի մեջ ընդգրկվեցին համաշխարհային մեծ ճանաչում ունեցող տարբեր ազգությունների եւ երկրների ականավոր ցեղասպանագետները, քաղաքագետները, իրավաբանները, պատմաբանները եւ այլք: Տողերիս հեղինակը նույնպես նրա անդամներից է: Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (ՑՄԱ) երկու անգամ՝ 1997 եւ 2005թվականներին, անտեսելով Իսրայելի կառավարության եւ պառլամենտի բացասական դիրքորոշումը, ճանաչեց հայոց ցեղասպանությունը: Դա համարձակ քայլ էր եւ ուներ համաշխարհային պատմական ու քաղաքական մեծ նշանակություն :

Այդ քաղաքականությունը շարունակեց ՑՄԱ-ի նախագահի պաշտոնում Էլեն Ֆայնին փոխարինած Երուսաղեմի Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն, Ցեղասպանագիտության Հանրագիտարանի գլխավոր խմբագիր պրոֆեսոր Իսրայել Չարնին: Նա գտնում է, որ «Ժամանակն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը եւ նրա զոհերին»: Այդ փիլիսոփայության շրջանակներում ՑՄԱ-ն 2005թ. հունիսի 4-7-ը Ֆլորիդայում, ԱՄՆ, գումարեց վեցերորդ գիտաժողովը, որում քննարկվեց «Իննսուն տարի հայոց ցեղասպանությունից հետո : Վաթսուն տարի Հոլոքոստից հետո» հարցը, որին մասնակցելու եւ զեկուցումով հանդես գալու պատիվն ենք ունեցել մենք: Այդ գիտաժողովում ոչ միայն կրկին ճանաչվեց հայոց ցեղասպանությունը, այլեւ հաստատվեց հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունը լինելու իրողությունը: Ավելացնենք, որ երբ 2005թ. Երեւանում գումարվեց հայոց ցեղասպանության 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, Իսրայել Չարնին ժամանեց Երեւան, մասնակցեց գիտաժողովին եւ փայլուն ելույթ ունեցավ ի պաշտպանություն հայոց ցեղասպանության ճանաչման: Մենք միասին աշխատում էինք այդ գիտաժողովի ամենակարեւոր սեկցիայում: Ես նրան նվիրել էի իմ «Հայոց ցեղասպանությունը՝ Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդ» մենագրությունն աշխարհի տասը լեզուներով, որը նա բարձր գնահատեց: 2010թ. նոյեմբերի 30-ին ինձ հասցեագրված նամակում, պրոֆեսոր Իսրայել Չարնին գրել է. «Իմ թանկագին պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան: Ես խորապես շնորհակալ եմ ձեզ ձեր շատ կարեւոր եւ տպավորիչ գիրքն ինձ նվիրելու համար: Ես շնորհակալ եմ ձեզ ձեր շատ բարի մակագրության համար: Բայց ամենից շատ ես շնորհավորում եմ ձեզ եւ շնորհակալություն հայտնում հայոց ցեղասպանության պատմական հիշողության մեջ ձեր շատ ինքնատիպ ներդրման համար: Ջերմագին հարգանքներով, Իսրայել Չարնի»:

Բավարարվենք վերոնշյալ բարձրահարգ մտավորականներին եւ գործիչներին նշելով եւ ավելացնենք, որ Իսրայելի եւ հրեական սփյուռքի ամենահոծ հրեական զանգվածները նույնպես համաձայն չեն, որ Իսրայելի ղեկավարությունը չի ճանաչում հայոց ցեղասպանությունը: Մեր արտասահմանյան այցելությունների ժամանակ հրեական քաղաքական գործիչների, մտավորականության եւ հասարակ մարդկանց հետ հանդիպումների ժամանակ, որպես կանոն, հրեաներն իրենց զարմանքն էին արտահայտում, որ Իսրայելի կառավարությունը դեռեւս չի ճանաչել հայոց ցեղասպանությունը եւ վստահ էին որ այդ ճանաչումը վաղ թե ուշ կայանալու է:

Իսրայելի ղեկավարության կողմից հայոց ցեղասպանությունը չճանաչելը ջուր է լցնում Թուրքիայի ջրաղացին, որը նույնպես չի ճանաչում հայոց ցեղասպանությունը: Թուրք հայտնի պատմաբան, ԱՄՆ-ի Մինեսոթայի համալսարանի պրոֆեսոր Թաներ Աքչամը նշում է, է, որ «Թուրքիան ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիրն է»: Ընդ որում, ժխտվում է ոչ միայն հայոց ցեղասպանությունը, այլեւ կան հոլոքոստը ժխտողներ: Այդ հարցին Ցեղասպանության միջազգային ասոցիացիայի նիստերից մեկում, 2005թ., անդրադարձավ հրեա պրոֆեսոր, Դանիայի Միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի պրոֆեսոր Էրիկ Մարկուզենը: Նա այդ հարցին անդրադարձավ հակասեմիզմի ակտիվացման հարցի քննարկումների համատեքստում, նշելով, որ մի շարք երկրներում, հատկապես եվրոպական, այն տեսակետն է արտահայտվում, որ հոլոքոստի ժամանակ չի սպանվել վեց միլիոն հրեա, որ այդ թիվը չափազանցված է հրեաների եւ Իսրայելի կողմից: Ինչպես նշեց պրոֆեսոր Մարկուզենը, հոլոքոստի ժխտման կողմնակիցները գտնում են, որ երբեք Եվրոպայում վեց միլիոն հրեա չի եղել, որ այդ թիվը հրեաները միտումնավոր ուռճացնում են: Ինչպես տեսնում ենք, ցեղասպանության ժխտման ինդուստրիան զորեղ է եւ իր ալիքների մեջ ներառնում է ոչ միայն հայոց ցեղասպանությունը, այլեւ հրեական հոլոքոստը եւ առանց բացառության մյուս բոլոր ցեղասպանությունները: Սա շատ վտանգավոր ահազանգ է, որը պետք է հաշվի առնեն Իսրայելի անհեռատես ղեկավարները, որոնք չեն հասկանում, որ հայոց ցեղասպանությունը եւ հրեական հոլոքոստը ոչ թե մրցակիցներ, այլ դաշնակիցներ են : Մեկի թուլացումն անխուսափելիորեն կթուլացնի մյուսի դիրքերը: Իսրայելի ղեկավարությունը պաշտպանում է Թուրքիային, որը հրեա ցեղասպանագետներ Իրվինգ Հորովիցի, Լեո Կուպերի եւ այլոց տեսակետով հանդիսանում է «Ցեղասպան պետություն»:

Վերադառնանք հայոց ցեղասպանության ճանաչման հարցին:

Մենք ավելի քան կես դար զբաղվել եւ շարունակում ենք զբաղվել հայոց ցեղասպանության հարցով եւ եկել ենք այն եզրակացության, որ հայոց ցեղասպանությունը կամ Արմենոցիդն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է:

Նման եզրակացության հանգելու համար շատ կարեւոր է պետությունների կողմից ցեղասպանության ճանաչումը: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են աշխարհի 31 պետություն. 1.Ավստրիան, 2.Արգենտինան. 3.Բելգիան, 4.Բոլիվիան 5.Բրազիլիան, 6.Բուլղարիան, 7.Գերմանիան, 8.Դանիան, 9.Իտալիան, 10.Լեհաստանը, 11.Լիբանանը, 12.Լիտվան, 13.Կանադան, 14.Կիպրոսը, 15.Հայաստանը, 16.Հունաստանը, 17.Նիդերլանդները, 18.Շվեդիան, 19.Շվեյցարիան, 20.Չեխիան, 21.Չիլին, 22,Պարագվայը, 23.Ռուսաստանի Դաշնությունը, 24.Սիրիան, 25.Սլովակիան, 26.Սլովենիան, 27.Վատիկանը, 28.Վենեսուելան, 29,Ուրուգվայը (որն առաջինն է ճանաչել հայոց ցեղասպանությունը՝ 1965թ.), 30.Օսմանյան կայսրությունը եւ 31. Ֆրանսիան: Նշված պետություններից երկուսը Ռուսական Դաշնությունը եւ Ֆրանսիան, մտնում են աշխարհի հինգ խոշոր կամ մեծ տերությունների շարքը եւ հանդիսանում են Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի մշտական անդամներ եւ ունեն վետոյի իրավունք:

⇨ 7

ՏԻԳՐԱՆ ԵԿԱՎՅԱՆ

Փարիզ

# Հայկական լեգեոնի վեհությունն ու տարաբախտությունը

***Առաջին անգամ անգլերեն գիտական մի աշխատություն պատմում է Լեւանտի հայկական լեգեոնի էպոսը. դասերով հարուստ հերոսական ու ողբերգական երանգներով մի պատմություն: Կիլիկիայի Հայկական լեգեոնի ոդիսականի 100-ամյա պատմությանը նվիրված նորընծա այդ գրքին գրախոսականով անդրադառնում է, ստորեւ, մեր վաղեմի աշխատակից, France-Armenie հանդեսի խմբագրակազմի անդամ Տիգրան Եկավյանը:***

1916-ին բրիտանացիներն արաբներին խոստանում էին անկախ եւ վերամիավորված արաբական թագավորություն: Ֆրանսիացիները ետ չէին մնում՝ վաճառելով Կիլիկիայում հայկական պետության պատրանքը, ապա իրենց հայ դաշնակիցներին լքելով նրանց հրդեհված քաղաքների մոխիրների մեջ: Հայկական լեգեոնի պատմությունը «քրիստոնյաների պաշտպան» Ֆրանսիայի համար թե՛ համընդհանուր հպարտության առարկա է, եւ թե՛ անջնջելի մի բիծ: Առատ պատկերազարդումներով այս ստեղծագործության մեջ պատմաբան **Սյուզան Փ. Փաթին** անդրադառնում է ֆրանսիական բանակին միավորված այս հայկական օժանդակ զորքի պատմությանը (*): Այն ծնունդ էր առել 1916 թվականի նոյեմբերին, Փարիզի Հայ ազգային պատվիրակության այդ ժամանակվա նախագահ Պողոս Նուբար փաշայի կամքով, որը կարողացել էր համոզել իր ընկերոջը՝ վարչապետ Ժորժ Կլեմանսոյին: Մինչ շարունակվում էր հայ ժողովրդի բնաջնջումը, վերապրողները խանդավառվել էին Կիլիկիայում անկախ հայկական պետության խոստումով: Առաջինը, 1917 թվականի հունվարին, զինվորագրվում են Եգիպտոսի Պորտ Սայիդում խմբված Մուսա լեռան նախկին դիմադրողները: Ֆրանսիական դրոշի ներքո լեգեոներների հավաքագրումը տարածվում է նաեւ Եվրոպայում եւ Ամերիկայում: 1918 թվականի մայիսին նրանց ընդհանուր թիվը կազմում է 4360 զինվոր (որոնցից 288-ը՝ Ֆրանսիայի հայեր) եւ 58 սպա: Գերմանական սուզանավերով լի Միջերկրական ծովի վրայով դժվարությամբ հասնելով Պորտ Սայիդ՝ կամավորները մարտի են ուղարկվում միայն Կիպրոսի Մոնարգայի ճամբարում երկարատեւ ու ծանր վարժանքներից հետո, ֆրանսիացի սպաների հրամանատարության ներքո:




Պատմական փաստաթղթերի հիման վրա, համալրված ականատեսների վկայություններով, նամակներով ու լուսանկարներով՝ հեղինակը ներկայացնում է մարդկային մի պատմություն, որից հորդում են արմատախիլ եղած այս երիտասարդների ցավն ու տառապանքը, անհամբեր կռվելու փափագը՝ փրկելու համար իրենց ժողովրդի բեկորներին: Այն պատմում է նրանց ծանր կենսապայմանների մասին, ինչպես եւ բազմաթիվ ֆրանսիացի սպաների արհամարհանքի ու հաճախ՝ այլատյացության մասին: Կիպրոսում վարժանքներն ավարտելուց հետո, լեգեոներները քաջաբար կռվում են Պաղեստինում եւ Կիլիկիայում՝ դաշնակից ուժերի հրամանատար գեներալ Ալենբիի կողքին: 1918 թվականի սեպտեմբերին Պաղեստինում տեղի ունեցած Արարայի ճակատամարտում նրանք լավագույնս դրսեւորում են իրենց՝ վճռորոշ դեր խաղալով գերմանական եւ օսմանյան ուժերի պարտության մեջ, ինչի համար էլ արժանանում են դաշնակցային բարձրագույն հրամանատարության մեծարանքին: 1918 թվականի հոկտեմբերին Արեւելյան լեգեոնը պաշտոնապես վերանվանվում է Հայկական լեգեոն: Լեգեոներները Կիլիկիա են ժամանում 1918 թվականի դեկտեմբերին՝ ֆրանսիական օկուպացիոն զորքերին օժանդակելու առաքելությամբ:

Ապա 120000 հայ փրկյալներ հայրենադարձվում են Կիլիկիա, սակայն նրանց վերադարձի համար պայմաններ չկային: Մեծ Բրիտանիան հետ է քաշվում՝ ֆրանսիական բանակին թողնելով անբավարար մարդուժով՝ Կիլիկիայի պես ընդարձակ տարածքը վերահսկելու համար: Թեեւ հայ լեգեոներները լի էին վրեժի աննկարագրելի ծարավով, նրանք առաջին հերթին նախանձախնդիր էին վերապրածների մեջ փրկել հնարավորինս շատ հայերի կյանքեր՝ սկսած առեւանգված եւ բռնի մահմեդականացված աղջիկներից: Նրանց դա բազմիցս հաջողվում է, սակայն երբեմն արդեն «ուշ» է լինում նրանց համար, ովքեր նախընտրում են մնալ իրենց առեւանգողների եւ իրենց երեխաների հետ: 1919 թ. մարտին ալժիրյան լեգեոներների հետ լարվածությունն Ալեքսանդրեթում հանգեցնում է 4-րդ գումարտակի լուծարմանը՝ սկիզբ դնելով աստիճանական զորացրման: Այդ ընթացքում քեմալական շարժումը հզորանում է, եւ այն աստիճան, որ Ֆրանսիան վերանայում է իր վարած քաղաքականությունը եւ 1919 թվականի սեպտեմբերից սկսում բանակցել թուրք ազգայնականների հետ: Ֆրանսիան, ուժասպառ, գիտակցում է, որ Կիլիկիան պահել չի կարողանա:

Որոշ սպաներ, ինչպիսիք էին գնդապետ Լուի Ռոմյոն կամ գնդապետ Բրեմոնը, խորին համակրանքի վկայությունն են ցուցաբերում իրենց հայ լեգեոներների նկատմամբ՝ հաճախ ի վնաս իրենց: Սակայն 1920 թվականի փետրվարին Մարաշից ֆրանսիական զորքերի նահանջը ընկալվում է որպես դարձյալ ցավալի դավաճանություն: Բոլոր այն հայերը, ովքեր չեն կարողանում փախչել, անխուսափելիորեն կոտորվում են: 1921 թ. հոկտեմբերին ստորագրված Անկարայի համաձայնագրերը գալու էին վավերացնելու իրական քաղաքականության (real politique) թելադրած այդ կողմնորոշումը:

**Ֆրանսերենից թարգմանեց**
**ԱՐՈՒՍՅԱԿ Բ. ԳՐԻՆՈՆ**

**) Susan Paul Pattie, The Armenian Legionnaires: Sacrifice and Betrayal in World War 1- Tauris- 266 էջ, Amazon-ի կայքէջում գինը՝ 28,10 եվրո:*

⇨6 Այս կապակցությամբ կցանկանայինք հետեւյալ դիտողությունն անել: Դեռ չի սահմանված, թե քանի պետությունների կողմից տվյալ ցեղասպանությունը ճանաչելուց հետո կարելի է ասել, որ այն արդեն միջազգայնորեն ճանաչված է: Այդպիսի կարգ չկա սահմանված: Հետեւաբար այս կամ այն պետության կողմից տվյալ ցեղասպանության չճանաչելը չի կարող հիմք հանդիսանալ ասելու, որ տվյալ ցեղասպանությունը ճանաչված չէ: Այդ սկզբունքը միանգամայն կիրառելի է բոլոր ցեղասպանությունների, այդ թվում եւ հայոց ցեղասպանության պարագայում:

# Հայաստանի եւ Իսրայելի պատմական ընդհանրություններն ու առանձնահատկությունները

Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրորդ խումբը կազմում են պետական ինքնավար կազմավորումները կամ նահանգները, նրանց օրենսդիր կամ գործադիր մարմինները: Մենք, ըստ էության, առաջինն էինք, որ հայոց ցեղասպանության ճանաչման համակարգում ներառանք այս կամ այն պետության կազմում գտնվող տարածքային ինքնավար մարմիններին: Նույնիսկ այն պարագայում, երբ մետրոպոլիան կամ մայր պետությունը դեռ չի ճանաչել հայոց ցեղասպանությունը: Եվ այսպես, հայոց ցեղասպանությունը ճանաչել են Ավստրալիայի 2, Բրազիլիայի 4, Իսպանիայի 4, Իտալիայի 1, Կանադայի 2, Մեծ Բրիտանիայի 3, Շվեյցարիայի 1, այսինքն՝ 17 վարչատարածքային ինքնավար մարմիններ՝ ի դեմս նրանց օրենսդիր մարմինների եւ կառավարությունների: Այսպիսով, հայոց ցեղասպանությունը միասին ճանաչել են աշխարհի 48 պետություն եւ ինքնավար պետական կազմավորում:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Եվրոմիության երկպալատանի օրենսդիր մարմինը՝ Եվրոպական պառլամենտը եւ Եվրոպայի խորհուրդը, որը կազմված է 47 պետությունից ՝ 800 միլիոն բնակչությամբ:

Ուշագրավ է եւս մեկ հանգամանք: ԱՄՆ-ի 50 նահանգներից հայոց ցեղասպանությունն արդեն ճանաչել են 48-ը.: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ԱՄՆ-ի չորս պրեզիդենտներ՝ Վուդրո Վիլսոնը, Ջիմի Կարտերը, Ռոնալդ Ռեյգանը եւ Բարակ Օբաման՝ ամեն մեկը յուրահատուկ կերպով եւ ձեւակերպումով: Այսպես, Վուդրո Վիլսոնի պրեզիդենտության շրջանում, երբ դեռեւս հայտնագործված չէր «գենոցիդ» եզրը, նա օգտագործել է «Հայերի զանգվածային ջարդեր» եւ »Հայերի անիհիլացում (annihilation, անէացում)» սահմանումը, պրեզիդենտ Ջիմի Կարտերը 1978 մայիսի 16-ին հայտարարել է, որ «1916թ. նախորդած տարիներին փորձ արվեց ոչնչացնել (to eliminate) ողջ հայ ժողովրդը», պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը 1981թ. ապրիլի 22-ին, հոլոքոստի զոհերի հիշատակի օրը հանդես եկավ հատուկ Հռչակագրով եւ հայտարարեց. «Ինչպես հայոց ցեղասպանությունը մինչ այդ, եւ կամբոջացիների ցեղասպանությունը դրանից հետո, ինչպես նաեւ շատ այլ ժողովուրդների հալածանքները, հոլոքոստի դասերը երբեք չեն մոռացվի»: Իսկ պրեզիդենտ Բարակ Օբաման, 2009 եւ 2012 թվականներին ամերիկյան ժողովրդին հասցեագրված իր ուղերձներում ցեղասպանության փոխարեն օգտագործեց «Մեծ Եղեռն» ձեւակերպումը, ինչպես դա ի սկզբանե ընդունված է հայերի կողմից, ընդգծելով, որ «Մեծ եղեռնը կշարունակի ապրել մեր հիշողությունում»:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել են Խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, Երիտասարդների քրիստոնեական ասոցիացիան, Ժողովուրդների մշտական տրիբունալը, Նոբելյան մրցանակակիրների «Հանուն հումանիզմի» հիմնադրամը, ինչպես արդեն նշել ենք Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան, Թուրքիայի Մարդու իրավունքների Ստամբուլի բաժանմունքը, Հրեական հակազրպարտչական լիգան, Երուսաղեմի Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտը, Նյու Յորքի ցեղասպանության ուսումնասիրության թանգարանը, Վաշինգտոնի Հոլոքոստի թանգարանը եւ այլն, եւ այլն:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաեւ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի 2005թ. հունիսի 7-ի նամակին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին՝ ի պատասխան նրա նամակի, որով նա կոչ էր անում ՅՄԱ-ին հայոց ցեղասպանության հարցում լինել անկողմնակալ: Էրդողանին ուղղված նամակում, որը ստորագրել էին ՅՄԱ-ի պրեզիդենտ Իսրայել Չառնին (Իսրայել), փոխպրեզիդենտ Գրեգորի Ստենտոնը (ԱՄՆ), երկրորդ փոխպրեզիդենտ Լինդա Մերվերնը (Մեծ Բրիտանիա) եւ քարտուղար Սիվեն Ջեկոբսը ( ԱՄՆ), ասվում էր, որ նրանք համաձայն չեն թուրքական վարչապետի հետ, որ նրանք անկողմնակալ չեն: Նրանք Էրդողանին են ներկայացնում ասոցիացիայի միաձայն ընդունված հայեցակարգային ամփոփիչ եզրակացությունն առ այն, որ «Հայոց ցեղասպանությունը հաստատված է միջազգային գիտական, իրավական եւ մարդու իրավունքների հանրության կողմից»: Եվ վերջ:







Վերոշարադրյալի հիման վրա կարելի է ասել,, որ մենք իրավացի ենք, երբ ասում ենք, որ հայոց ցեղասպանությունն արդեն միջազգայնորեն ճանաչված ցեղասպանություն է: Այս ֆոնի վրա Իսրայելի կողմից հայոց ցեղասպանությունը չճանաչելը դառնում է երկրորդական-երրորդական կարգի երեւույթ: Իսրայելը կճանաչի՝ լավ, ոչ ոք նրան չի խնդրում, չի ճանաչի՝ դա արդեն նրա գործն է, որը միջազգային որեւէ նշանակություն չունի եւ բնավ չի անհանգստացնում Հայաստանին եւ հայությանը:

Ցեղասպանության վերաբերյալ հայկական նյութի հիման վրա հրեա Ռաֆայել Լեմկինի դարակազմիկ հայտնագործությունն անմահացրեց նրան:

Ռաֆայել Լեմկինն այս կյանքից հեռացավ 1959թ,՝ 59 տարեկան հասակում, սրտի կաթվածից:: Վիճակագրության սիրահարները հաշվել են, որ այդ ժամանակ ցեղասպսնությանն ընդհանուր առմամբ զոհ էր գնացել մոտ 20 մլն մարդ:

Ռաֆայել Լեմկինի թաղմանը ներկա է եղել ընդամենը յոթ մարդ:

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 8



# Ծեծկռտուք հետեւանքներով. ո՞վ է ձգտում հայերի եւ ղազախների միջեւ հակամարտության հրձիգ դառնալ

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան

Ղազախստանյան Կարագանդա քաղաքում կենցաղային հակամարտությունը, որը տեղի ունեցավ ռեստորաններից մեկում ամանորյա գիշերը եւ ավարտվեց դանակահարությամբ, հետեւողականորեն փորձում են տեղափոխել հայերի եւ ղազախների միջեւ ազգամիջյան դիմակայության հարթություն:

Համացանցը պայթեցնում են սադրիչների բացահայտ մարդատյաց գրառումներն ու մեկնաբանությունները, հասարակության մեջ հնչում են ազգային երանգ ունեցող կոչեր: Ո՞վ եւ ինչո՞ւ է փորձում բորբոքել ազգային հողի վրա հակամարտության կրակը, արդյոք հայերը Ղազախստանում ինչ-որ բանից պե՞տք է վախենան եւ կա՞ արդյոք իրականում Կարագանդայում պատահածի էթնիկ ենթատեքստ: Մենք կփորձենք պատասխանել այդ հարցերին:

Եվ այսպես, հունվարի 1-ի գիշերը ղազախստանյան Կարագանդա քաղաքի ռեստորաններից մեկի մոտ տեղի ունեցավ զանգվածային ծեծկռտուք: Երկու խմբերի միջեւ սկզբում բռնկվեց խոսքակռիվ, այնուհետեւ գործի դրվեցին բռունցքներն ու դանակները: Չորս մարդ վիրավորվեց: Մեկը՝ 23-ամյա տղա, զոհվեց:

Նույնքան չոր եւ իր նկարագրության մեջ կարճ միանգամայն կարող էր լինել եւ ոստիկանական տեղեկագիրը, որը կհայտներ, ըստ էության, սովորական կենցաղային հակամարտության մասին, որպիսին հաճախ է պատահում, հատկապես, ամանորյա գիշերը: Բայց այս անգամ ոստիկանական տեղեկագրում, չգիտես ինչու, նշված էր պատահարի մասնակիցների ազգությունը: Պարզվեց, որ ծեծկռտուքը սկսվել է հայերի եւ ղազախների խմբերի միջեւ: Այդ փաստը հիշվել էր տեղեկագրի մեջ: Չնայած դեպքի հետ այն կապ չուներ: Ծեծկռտուքի առիթը ոչ մի կերպ կապված չէր նրա մասնակիցների ազգային պատկանելիության հետ: Եվ դա միայն մեկն է այն փաստարկներից, որոնք ակնհայտորեն խոսում են այն բանի օգտին, որ Կարագանդայում տեղի ունեցած հակամարտությանը ակնհայտորեն եւ ոչ շատ հմտորեն փորձում են վերագրել ազգային ենթատեքստ: Թե ինչո՞ւ տեղեկագրի մեջ շեշտ էր դրվել ազգային պատկանելիության վրա եւ ինչո՞ւ այդ տեղեկագիրը արագորեն հայտնվեց «մեսենջերներում», մեզ համար հանելուկ է մնում:

Տեղեկագիրը եւ ծեծկռտուքի տեսանկարահանումը չէին հասցրել հայտնվել համացանցում, երբ սկսեցին արագորեն տարածվել դրանում շահագրգռված անձանց ասեկոսեներով եւ մտացածին մանրամասներով: Շուտով գործընթացին միացան արհեստավարժ սադրիչները: Այդ կեղծ հաղորդագրությունների արդյունքում ղազախստանյան այլ քաղաքում՝ Սեմեյում, դժգոհները փորձեցին նույնիսկ ավերածություն անել Բաքու սրճարանում: Մի խոսքով, հիվանդ երեւակայություն եւ աբսուրդ դատողություն ունեցող սադրիչների ջանքերով, շարքային կենցաղային հակամարտությունը սրընթաց կերպով սկսեց պատվել բոլորովին էլ ոչ շարքային հնարած մանրամասներով:

Այնինչ, իրական փաստերը հետեւյալն էին: Ծեծկռտուքը սկսվել էր այն պատճառով, որ ռեստորանի անձնակազմը հայտարարել էր հաստատության ավելի շուտ փակման մասին, քան կարծում էին հյուրերը: Ծեծկռտուքին մասնակցել էին համարյա երեք տասնյակ մարդ: Առճակատման երկու կողմերն էլ մոնոէթնիկ (ազգային պատկանելիությամբ միատարր) չեն եղել: Թե՛ մի կողմում, թե՛ մյուս կողմում եղել են ղազախներ, թե՛ հարձակվողների մեջ, թե՛ տուժածների մեջ: Այդ ընդհանուր քաշքշուկում ոչ մեկը, ակնհայտ է, չէր զանազանում, թե ի՞նչ ազգության է պատկանում ընդդիմախոսը: Իսկ զոհվածն, ընդհանրապես, ռեստորանում չէր գտնվել ծեծկռտուքը սկսվելու պահին: Նա եկել էր ընկերոջ խնդրանքով, հատուկ քաշքշուկում մասնակցելու նպատակով: Սա Ղազախստանի Ներքին գործերի նախարարության պաշտոնական տվյալներն են, որոնք ամրապնդված են տեսագրված ապացույցներով եւ ականատեսների ցուցմունքներով:

Այսինքն, առանց վարանելու կարելի է ասել, որ Կարագանդայում տեղի ունեցածը պարզունակ կենցաղային հակամարտություն էր, որը կարող էր տեղի ունենալ որտեղ ասես եւ երբ ասես: Հատկապես, հաշվի առնելով Ղազախստանի բնակչության բազմազգ լինելու հանգամանքը:



Ղազախստանում, պաշտոնական վիճակագրության համաձայն, բնակվում են ավելի քան 25 հազար հայեր: Բնակվում են իրենց վրա չզգալով որեւէ ճնշում: Այդ մասին բացահայտորեն խոսում են թե՛ մեր համայնքի ներկայացուցիչները, թե՛ փաստերը: Մեղմ ասած, Ղազախստանի հայության թիվը չի կրճատվում եւ, նույնիսկ, ընդհակառակը, ինչը նշանակում է, որ այդ երկրում հայերն իրենց այնքան լավ են զգում, որ վերադառնալ մայր հայրենիք չեն շտապում: Հայերը հաջողությամբ աշխատում եւ բիզնես են անում Ղազախստանում: Հենց այն ռեստորանը, որի մոտ տեղի ունեցավ չարաբաստիկ ծեծկռտուքը, պատկանում է հայ համայնքի ներկայացուցիչներին:

Կոնկրետ Կարագանդայում բնակվում են մոտ երեք հազար մեր հայրենակիցներ:

Հասկանալի է, որ նրանք հանգամանքների բերումով կարող էին եւ կարող են դառնալ կենցաղային որեւէ հակամարտության մասնակիցներ, որպիսիք պատահում են աշխարհի որեւէ քաղաքում: Կրկնվեմ, հատկապես ամանորյա գիշերը:

Այն հարցին, թե ո՞վ է փորձում այդ կենցաղային հակամարտությանը հաղորդել ազգային ենթատեքստ, կարելի է առանց դժվարության պատասխան գտնել, թերթելով սոցիալական ցանցերում ժողովրդականություն վայելող բլոգերների մեկնաբանությունների ու գրառումների ժապավենները: Ինտերնետի հայկական եւ ղազախական սեգմենտները հեղեղված են կեղծ հայրենասերների ջղաձգությամբ, որոնք մեկնաբանում են իրավիճակը, մեծամասամբ իրենք էլ չգտնվելով ո՛չ Ղազախստանում եւ ո՛չ էլ Հայաստանում: Այն հարցին, թե ինչո՞ւ են նրանք դա անում, պատասխանելն ավելի բարդ է: Հնարավոր է, այսպիսով, այդ մարդիկ ուզում են քաղաքական դրամագլուխ վաստակել զգայուն թեմայի շուրջ էժանագին սպեկուլյացիաներով: Չի բացառվում, որ իրենց վտանգավոր հռետորաբանությամբ, հայկական կողմի սադրիչները փորձում են խաթարել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեղինակությունը: Որովհետեւ նա անձամբ է ցավակցություն հայտնել զոհվածի ընտանիքին եւ կոչ է արել հակամարտությանը չտալ ազգամիջյան երանգավորում:

Ղազախստանյան իշխանություններն իրենց հերթին արդեն սկսել են հետաքննություն ազգամիջյան թշնամանքի հրահրման հարցով եւ հստակորեն հասկացնել են տվել, որ չեն պատրաստվում հակամարտության մասնակիցներին բաժանել ըստ ազգային պատկանելության: Այդ հետաքննության մեջ կլինեն միայն հանցագործներ եւ տուժածներ: Հանցագործները, անկախ իրենց էթնիկ պատկանելիությունից, կկրեն պատիժ: Իսկ տուժողները, նույնպես անկախ իրենց էթնիկ պատկանելիությունից կստանան օգնություն եւ աջակցություն: Եվ այդ դիրքորոշումը ղազախստանյան հայերին հիմք է տալիս համոզված լինելու իրենց ապագայում եւ, ինչպես նախկինում, համարելու Ղազախստանը իրենց տունը, իսկ ղազախներին՝ եղբայր ժողովուրդ:

Այս ամբողջ պատմության մեջ պարզորեն երեւում է, թե որքան կարեւոր ու խորն է հայերի ու ղազախների բազմադարյա եղբայրության, բարեկամության, համագործակցության ու համակեցության պատմությունը եւ որքան ազնիվ կարող է լինել բոլոր նրանց կեցվածքը, ովքեր վճռականորեն պատվար կդառնան մեր երկու եղբայր ժողովուրդների միջեւ թշնամություն, կասկած եւ անվստահություն սերմանելու պրիմիտիվ, չարանենգ եւ, չի բացառվում նույնիսկ՝ երրորդ-չորրորդ կողմերից հատուկ նպատակով իրականացվող քայքայիչ քարոզչական օպերացիաների դեմ:

# «Շատ կարեւոր է, որ պաշտպանենք ազատ խոսքի իրավունքը»

⇨ 1

**Այդպես սպիտակ հագնվել էր մայիսի 8- ին Երեւանի Հանրապետության հրապարակում համախմբված հանրությունը՝ տոնելու Թավշյա հեղափոխության առաջին ուրախությունը:**

**Քյոլնի տեխնիկական բարձրագույն դպրոցում մեծ սպիտակ պաստառը ՀՀ վարչապետին եւ նրա տիկնոջը բարի գալուստ է ազդարարում: Այստեղ երեկ ջերմության պակաս չնկատվեց. թե՛ հաստատության վարչադասախոսական կազմը, թե ուսանողությունը մեզ հետ զրույցում հատուկ ընդգծեցին, թե իրենց համար մեծ իրադարձություն է Հայաստանի՝ «հետաքրքիր կենսագրություն ունեցող, իր երկրի ապագայի համար պայքարի արդյունքում նույնիսկ բանտարկություն կրած» վարչապետին հյուրընկալելը, եւ թե Երեւանի պետական պոլիտեխնիկական համալսարանի հետ հուշագրի կնքումը: Քյոլնի տեխնիկական համալսարանի ղեկավարը մեզ հետ հպանցիկ զրույցում ափսոսանք հայտնեց, որ Հայաստանում դեռ չի եղել, «բայց միգուցե հենց այս համագործակցությանն առիթ դառնա, որ սխալս ուղղեմ», ասաց նա, երբ արդեն ճանապարհում էր ՀՀ- ից ժամանած պատվիրակությանը:**

**«Ազգ»-ի առաջիկա համարում առավել հանգամանալից կանդրադառնանք Հայաստանի վարչապետի ԳԴՀ առաջին պաշտոնական այցին, երեկ Քյոլնի հայ համայնքի հետ կայացած հանդիպմանը, փետրվարի 1- ին Բեռլինում կանցլեր Մերկելի, նախագահ Շթայնմայերի, Բունդեսթագի նախագահ Շոյբլեի հետ հանդիպումներին, ինչպես նաեւ այսօր ստորագրվող՝ Գերմանիայի տնտեսության արեւելյան հանձնաժողովի, Արեւելյան Եվրոպա միության եւ Հայաստանի առաջատար տեխնոլոգիաների միության միջեւ երկրորդ հուշագրին՝ ստորեւ հպանցիկ պահ տալով երեկվա հագեցած օրվա մի քանի երանգ:**

**Վարչապետ Փաշինյանին տպավորել էր գերմանական՝ կրթությունը հետազոտության հետ համակցելու Հումբոլդի 200- ամյա հաջողությամբ ընթացք գտած փորձը, որ ասաց կարեւորում են եւ ջանալու են կիրառել Հայաստանի կրթական համակարգում: Համալսարանի դահլիճում Փաշինյանը ներկայացրեց «Սիլիկոնյան հովտի» համարում ունեցող խորհրդային Հայաստանի արդի ձեռքբերումները ՏՏ ոլորտում՝ ծանուցելով, թե աշնանը ՀՀ-ում կազմակերպվող ՏՏ կոնգրեսին ուրախ կլինի ողջունել նաեւ գերմանացիներին:**

**Դահլիճում չէին մոռանում, որ ՀՀ վարչապետը մասնագիտությամբ լրագրող է, ուստի փորձեցին նրա կարծիքն արձանագրել՝ կեղծ՝ ֆեյք լրատվության դեմ ինչպես հավասարակշռել պայքարը: Դավոսում էլ նույն հարցն էինք քննարկում, ասաց վարչապետ Փաշինյանը, չգիտենք՝ ինչ անել, բայց մի բան հստակ է՝ ժողովրդավարություն դավանող այնպիսի երիտասարդ երկրում, ինչպիսին Հայաստանն է, շատ կարեւոր է, որ պաշտպանենք ազատ խոսքի իրավունքը: Մեր՝ իշխանության մասին շատ է խոսվում, գրվում, բայց սխալ կլինի օգտագործել մեր ազդեցությունը եւ սահմանափակել կարծիքի ազատությունը: Մարդիկ փորձով, կրթությամբ, նաեւ տեխնիկական միջոցներին տիրապետելու միջոցով կտարբերեն ճիշտն ու սխալը, ասաց վարչապետ Փաշինյանը:**

# Ադրբեջանի եւ Ռուսաստանի հոգեւոր առաջնորդները զրուցել են Արցախի խնդրի շուրջ

**Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլը Կովկասի մահմեդականների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեի հետ զրուցել է Արցախի խնդրի կարգավորման շուրջ: Պատրիարք Կիրիլն ասել է, որ իր երկիրն ամեն կերպ փորձում է առաջ տանել եռակողմ բանակցությունները: Թեպետ դեռ որեւէ պայմանավորվածություն չկա, այնուամենայնիվ պատրիարքը կարեւորել է պատերազմից ամեն գնով խուսափելու գործոնը:**

**«Եթե ամեն ինչ կախված լիներ հոգեւոր գործիչներից, մենք այդ խնդիրը վաղուց լուծած կլինեինք», ասել է Ռուսիո պատրիարքը:**

**Ադրբեջանի հոգեւոր առաջնորդն իր հերթին շնորհակալություն է հայտնել պատրիարքին՝ կառուցողական մոտեցման եւ հակամարտության կարգավորման հարցում դրական դերակատարության համար:**

# Ադրբեջանը հաջորդ հանդիպմանն ակնկալում է զգալի արդյունքներ

**Անդրադառնալով Արցախյան հակամարտության կարգավորման շուրջ սպասվելիք հանդիպմանը, Ադրբեջանի ԱԳՆ մամլո ծառայության ղեկավար Լեյլա Ալիեւան հայտարարել է, որ հաջորդ հանդիպումը դեռ հայտնի չէ, թե որտեղ է կայանալու, բայց ամեն ինչ հնարավոր է:**

**«Ադրբեջանական կողմը բանակցություններին չի մասնակցում հանուն իմիտացիայի եւ ակնկալում է զգալի արդյունքներ: Սա է մեր սկզբունքային դիրքորոշումն», ասված է հայտարարության մեջ;**

**Զարմանալի է՝ թե հայկական կողմում շրջանառվող «խաղաղության բանաձեւերն» ինչպես կարելի է քննարկել այս մոտեցումներն ունեցող պետության հետ:**

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 9



ՄԱԹԻԿ ԷՊԼԻՂԱԹԵԱՆ

Ժնեւ

Ժընեւահայ գաղութը դեկտեմբերի կէսերուն մէկ շաբաթ տեւողութեամբ պատիւը ունեցաւ «աշխատանքային այցով» հիւրընկալելու Հայաստանի Հանրապետութեան վարչապետի տիկինը՝ Աննա Յակոբեանը:

Ժողովրդային առաջին եւ վերջին հանդիպումը կայացաւ ժամանման օրը, 12 դեկտեմբերի երեկոյեան, Հայ կեդրոնի սրահին մէջ, շուրջ երկու հարիւր հոգիի ներկայութեամբ:

Տիկին Աննան իր խօսքին մէջ կեդրոնացաւ «Իմ քայլը» բարեսիրական ծրագրին վրայ, ընկերակից գործավարին օժանդակութեամբ, եւ իր ակնկալութիւնները յայտնեց այս գործին հանգամանակութեան մասին՝ բացատրելով նաեւ նպատակները:

Ելոյթի աւարտին Ժընեւէն եւ հեռաւոր քաղաքներէն ժամանած այլազան բնագաւառներու մասնագիտութեամբ պարապողներ իրենց առաջարկներն ու ծրագիրները ներկայացուցին նոր Հայաստանի վերականգնումին համար:

Իմ կարգիս մտահոգութիւն յայտնեցի Սուրիոյ տագնապի սկզբնաւորութեան ընթացք առած արտագաղթի մասին՝ յուսալով, որ նոր վարչակարգը աւելի կարեւորութեամբ կը հետեւի հալէպահայերու ներգաղթին, յատկապէս՝ ճարտարարուեստի մարզի վարպետներուն դիւրութիւններ տալով, հիմնուելով վարչապետի յայտարարութեան՝ «տնտեսական յեղափոխութեան» կարեւորութեան վրայ:

Թուրքի եաթաղանին նման՝ խորհրդային «բարիքներ»-ու շարքին մեր լեզուն ալ ստացած է աբեղեանական ուղղագրութեան հարուածը՝ իրարմէ հեռացնելով մեր զոյգ մշակոյթները: Մեսրոպեան դասական ուղղագրութեան վերադառնալու կոչերը ... «Ձայն բարբառոյ յանապատի» են երեսուն տարիէ ի վեր:

Արամ Ա. կաթողիկոսին հովանաւորութեամբ, Կիլիկիոյ կաթողիկոսութեան զանազան մարմիններու շարքին կը գործէ «Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողով» մը՝ բաղկացած շուրջ քսան սփիւռքահայ մտաւորականներէ: Անոնցմէ մէկը՝ հալէպահայ հրապարակագիր Լեւոն Շառոյեան, վերջերս Պէյրութի «Ազդակ» օրաթերթի մամուլի լսարաններու շարքին հանդէս եկաւ «Արեւմտահայերէնը եւ արեւմտահայերէնի պահակները» նիւթով, ուր ներկայացուց երկու պահակախումբեր՝ դպրոցներ եւ մամուլ, որոնք սփիւռքի տարածքին կը պահպանեն մայրենին՝ առանց խտրութիւն դնելու Մաշտոցի երկուորեակներու միջեւ: Սփիւռքահայ մամուլին մէջ կողք-կողքի կը կարդանք հայերէնի երկու ճիւղերով յօդուածներ, մեր աշակերտներու շուրթերէն կը լսենք Պարոյր Սեւակի ու Վահան Թէքէեանի ոտանաւորները, մեր դասագիրքերուն մէջ տեղ գտած են Րաֆֆին ու Շիրվանզադէն, Դաշտենցն ու Շիրազը՝ իրենց արեւմտահայ գրչեղբայրներ Մուշեղ Իշխանի ու Արփիարեանի, Արամ Հայկազի ու Երուանդ Օտեանի հետ: Եւ վերջապէս, մարդասէր գրագիտուհի Զապէլ Եսայեանը արեւմտահայ էր, ներգաղթեց հայրենիք... ուր ան նահատակուեցաւ:

# Տիկի՛ն Աննա ... Քայլ արա եւ ընդունէ արեւմտահայերէնը



Մեկնումի պահուն «սելֆի» նկարուելու հերթի կանգնածներու շարքին, որ կը դասաւորուէր երկու թիկնապահներու կողմէ, կարողացայ մօտենալ տիկին Աննային՝ ներկայացնելով ժընեւահայ գաղութի երկամսեայ պարբերաթերթի՝ «ԱՐՁԱԳԱՆԳ»-ի վերջին թիւը, ուր գրախօսած էի վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ «Երկրի հակառակ կողմը» հատորը, խնդրելով ամուսնոյն հասցնել զայն եւ արտատպել «Հայկական ժամանակ»-ին մէջ, որուն խմբագրապետն է տիկին Աննան:

Սիրով կը յանձնեմ, «բայց... ՄԵՆՔ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՉԵՆՔ ՏՊԵՐ», եղաւ տիկին Աննային կտրուկ պատասխանը:

Լախտի հարուածի նման ստացած պատասխանս Զաքարիա մարգարէի պապանձումին մատնեց լեզուս:

«Մենք արեւմտահայերէն չենք տպեր». այս կարճ նախադասութեան ականջալուր եղայ՝ շօշափելով անհանդուրժելի մտայնութիւն մը, որ ցնցեց թաւշեայ յեղափոխութեամբ ապրող էութիւնս:

Հիմա պիտի ըսեմ՝ ՔԱՅԼ ԱՐԱ... ԵՒ ԸՆԴՈՒՆԷ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ:

Թաւշեայ յեղափոխութեան վարդագոյն շողերը աշխարհասփիւռ մեն մի հայատրոփ սիրտ խռովեց: Հայրենիքի գաղափարը իր դաստիարակութեան առանցքը ընդունող արեւմտահայը նոյնքան իր գուրգուրանքն ու սէրը կը տածէ հարիւրամեայ անկախ հայրենիքին հանդէպ, երբ տակաւին չէ սպիացած մեծ վէրքը՝ իր կորսնցուցած պատմական հայրենիքի տարածքները, Արեւմտահայաստանը:

Արեւմտահայերէնը մեզի հետ բերուած է որպէս անկորնչելի գանձ, որ ոչ մէկ հարստութեան հետ կարելի է փոխարինել:

Հայոց պատմութեան մեծագոյն դէմքին՝ Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործած սրբազան տառերը ոսկեդարեան գրաբառով, ապա շուրջ մէկուկէս դար առաջ Աբովեանով սկսած արեւելահայերէնին զուգահեռ, պոլսահայ գրողներու ճիգերով ծնունդ առաւ արեւմտահայերէնը, որոնք միասնաբար ծաղկած են՝ հասնելով այսօրուան բիւրեղ հայերէններուն. անոնք կը նմանին որեւէ ծնողի երկուորեակ զաւակներուն:

Հայաստանի Առաջին տիկնոջ հոգեբանութիւնը շօշափելով, որ նաեւ լրագրող է, մտահոգուած եմ արեւմտահայ գրականութեան ճակատագրով հայրենի հողին վրայ, անոր գագաթներէն՝ Յակոբ Պարոնեանի անուան խորհրդային օրերէն հիմնուած թատրոնը Երեւանի մէջ կրնա՞յ անուանափոխուիլ, ուր արեւմտահայ թատերագիրներու ստեղծագործութիւնները կը ներկայացուին արեւմտահայերէնով:

Սփիւռքահայ երիտասարդներ, երբ նահատակուեցան Արցախի անկախութեան ի խնդիր, գիտէին, որ հոն ապրող ժողովուրդը արեւելահայերէն կը խօսի եւ իրենք՝ արեւմտահայերէն:

Եւ վերջապէս՝ հաստատում մը, որ իւրաքանչիւր գիտակից հայ պարտաւոր է իմանալ: Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 20-րդ յօդուածը կ՚ըսէ. «Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն հայերէնն է»: Հոն չկայ խտրութիւն արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի:

Վերադառնալով տիկին Աննայի այցելութեան, ան պաշտօնապէս, ճանապարհորդութեան աւարտին, յստակ թիւերով ներկայացուց իր կատարած հանգանակութեան եւ ծախսերուն գումարները: Շնորհակալութի՛ւն: Լաւ կ՚ըլլար իմանալ նաեւ, թէ որքա՞ն արեւմտահայ բարերարներ նպաստած են այս առիթով:

Ազնուափայլ հիւրը իր պետական հանդիպումներու շարքին այցելեց Ս. Յակոբ եկեղեցի, ներկայ գտնուեցաւ Թոփալեան միօրեայ վարժարանի Կաղանդի հանդիսութեան, հովանաւորեց երկրաշարժի երեսնամեակին նուիրուած երաժշտական երեկոն: Ան մասնակցեցաւ նաեւ զուիցերահայ վերնախաւի հաւաքներուն, երեւոյթ մը, որ յիշեցուց լուծարքի ճակատագրին արժանացած Սփիւռքի նախարարութեան պաշտօնին տասնամեակ մը միահեծան նստած նախարարուհին:

Զուիցերիահայ գաղութին մէջ օրէ օր աճող եւ արդէն իսկ գաղութին մեծամասնութիւնը կազմող Հայաստանէն արտագաղթողները, որոնցմէ ոմանք տակաւին կ՚ապրին հանրակացարաններու մէջ, արժանի չեղան հաւաքական հանդիպումին: Նկատի ունենալով, որ թաւշեայ յեղափոխութեան գլխաւոր լոզունգի՝ «Մեծ հայրենադարձութեան» առաջին քայլը կը սկսի հեռաւոր այս կայքերէն:

Այսօր, երբ սեւի եւ ճերմակի հոգեբանութիւնը կը տիրապետէ հայրենի քաղաքական կեանքի բեմահարթակին վրայ, խոհեմութիւն է ըլլալ զգօն եւ համբերատար՝ լաւատես ակնկալութեամբ՝ դիտելով նոյնիսկ յոռի երեւոյթները: Սակայն մայրենիի հանդէպ որեւէ արհամարհում մեզ կը դասէ Մաշտոցի թիկնազօրի շարքին:

Վերոյիշեալ նիւթը թուղթին յանձնելէ առաջ պատմեցի բարեկամի մը, պատասխանը եղաւ... «Նիկոլի երեւակայական ճանապարհորդութիւնը սկսած է դառնալ ընտանեկան ծրագիր»:

Հայ ժողովուրդը 2019 տարին կը դիմաւորէ թաւշեայ ուրախութեամբ, լաւատես ոգիով: Տասը միլիոն հաշուող Հայկ նահապետի շառաւիղները, ի Հայաստան, յԱրցախ եւ սփիւռս, պահանջը կը զգան եւ իրաւունք ունին արդար ու անկողմնակալ վերաբերմունքի՝ հայրենի նորընտիր իշխանութեան կողմէ:

*Ժընեւ, 1 յունուար 2019*

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանի վաստակավոր լրագրող

# Բոլորին ցախավելով քշե՛լ ...

**Պաղեստինյան շարժման առաջնորդ Յասեր Արաֆաթի կինը ֆրանսուհի էր, իրենից մոտ 30 տարով փոքր մի լրագրողուհի:**

**Նա Արաֆաթից հարցազրույց էր խնդրել, եւ հենց այդ հարցազրույցի ժամանակ էլ նրանից ամուսնության առաջարկ էր ստացել ու... ընդունել էր այդ առաջարկը: Երբ պիտի ծննդաբերեր, ամուսնու համաձայնությամբ Փարիզ էր թռել՝ այնտեղ իր հարազատների հոգածության ներքո եւ ֆրանսիացի բժիշկների հսկողության տակ զավակին աշխարհ բերելու: Նրա երբեմնի գործընկեր-լրագրողները հարցրել էին՝ մի՞թե Պաղեստինի ինքնավարությունում որեւէ հմուտ բժիշկ-գինեկոլոգ չկար, որի հսկողությամբ ծննդաբերեիր: Տիկնոջ պատասխանը, որը հրապարակեցին աշխարհի գրեթե բոլոր լրատվամիջոցները, այդ թվում «Ազգ» թերթը, բառացի հիշում եմ.**

**-Ամուսինս ֆանատիկոս է,- ասել էր տիկին Արաֆաթը,- նա ինձ համար կենցաղային ոչ մի պայման չի ստեղծում... Գտնում է, թե ինքը, որպես ժողովրդի առաջնորդ, բարոյական իրավունք չունի ավելի լավ ապրելու, քանի դեռ ամենավերջին պաղեստինցու կյանքը չի բարելավել...**

**Որքանո՞վ էր տիկին Արաֆաթի այս հայտարարությունը համապատասխանում իրականությանը՝ թողնենք պատմաբաններին: Արաֆաթը թե՛ կյանքի ընթացքում, թե՛ դրանից հետո հակասական մեկնաբանությունների արժանացած գործիչ էր, մանավանդ մահից հետո շատ առասպելներ էին պտտվում նրա մասին: Մասնավորապես, նշում էին, թե աշխարհի բազմաթիվ բանկերի նրա հաշվեհամարներում տասնյակ-միլիարդավոր դոլարներ կային: Մինչդեռ կենսագիրներից ոմանք ընդգծում են, թե այդ գումարները պարզապես Արաֆաթի անունով էին հավաքվում, որպեսզի օգտագործվեն Պաղեստինի օգտին: Որովհետեւ բոլոր նրանք, ովքեր աշխարհով մեկ խոշոր գումարներ էին զոհաբերում պաղեստինյան ինքիֆադային (ընդվզում), անվերապահորեն հավատում էին Արաֆաթի ազնվությանը, վստահում էին նրա անշահախնդրությանը: Գիտեին, որ Արաֆաթը ստացած գումարների մինչեւ վերջին ցենտը կտրամադրի իր ղեկավարած շարժման շահերին, Պաղեստին պետության ստեղծման նպատակներին:**

**Այս պատմությունը ակամայից կրկին հիշեցի, երբ վերջին շրջանում մեզանում բավական տուրեւառումներ եղան մի շարք մարզպետների ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից իրենց այսպես կոչված թիմակիցներին խոշոր չափերի պարգեւավճարներ տրամադրելու մասին: Զանգվածային լրատվամիջոցներում նույնիսկ վարչապետ Փաշինյանին արված հղումներ կային, թե իբր երկրի ղեկավարը այդ պարգեւավճարների մեջ ոչ մի դատապարտելի բան չի տեսել եւ վերջերս դավոսյան իր այցի ժամանակ ասել է, թե այդ պարգեւավճարների հարցում օրենքի ոչ մի խախտում չկա: Միգուցե վարչապետն իրո՛ք այդպիսի բան է ասել (ի՞նչ մեղքս թաքցնեմ՝ անձամբ ես չեմ լսել), միգուցե որքան էլ անհավատալի է՝ իսկապե՛ս օրենքի տեսակետից այստեղ ոչ մի խախտում չկա: Բայց մի՞թե տեսանելի չէ, որ ժողովրդի զգալի մասի համար նյութական առումով «թավշյա հեղափոխությունից» հետո էական գրեթե ոչինչ չի փոխվել: Այդ առթիվ մի տխուր անեկդոտ է շրջանառվում.**

**-Ի՞նչ էիք ուտում հեղափոխությունից առաջ,- հարցնում են շարքային հայաստանցուն:- Խաշած մակարոն,- պատասխանում է:**

**-Իսկ հեղափոխությունից հետո՞ ինչ եք ուտում:**

**-Էլի՛ խաշած մակարոն:**

**-Բա հին ու նոր մակարոնների տարբերությունը ո՞րն է,- հարցնում են:**

**-Հիմա նույն մակարոնը դուխո՛վ ենք ուտում, է՜, դուխո՛վ...**

**Ասել կուզեմ՝ քանի դեռ Հայաստանում միայն խաշած մակարոնով օրը մթնեցնողների հսկայական բազմություն կա, ի՞նչ խղճով են պետական բարձրաստիճան պաշտոնյաները իրենք իրենց հարյուր-հազարավոր եւ անգամ 8-10 միլիոն դրամների պարգեւավճարներ տրամադրել: Ասենք թե՝ օրենքը իրո՛ք չի արգելում: Բա տարրական պարկեշտությունն է՞լ չի արգելում: Ըստ ֆեյսբուքյան հավաստիացումների՝ վարչապետը այդ պարգեւավճարներից հրաժարվել է: Մյուս պաշտոնատարնե՞րն ինչու չեն հետեւել վարչապետի օրինակին, մինչդեռ այլ առիթներով՝ արեւո՛վ են երդվում: Ինչպե՞ս ենք կառուցելու նոր Հայաստան, եթե ով գալիս է՝ առաջին հերթին մտածում է... անձամբ իր նյութականի բարելավման մասին: Քանի կալի վրա են՝ ձգտում են օգտվե՞լ: Թե՞ հիշյալ պարգեւավճարները դիտարկում են իբրեւ չվերցվող կաշառքների փոխհատուցում, կաշառքի յուրատեսակ օրինականացում...**

**Վարչապետին խորհուրդ կտայի բոլոր այդ կարգի պաշտոնյաներին ցախավելով քշե՛լ պետական ապարատից...**

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 10



# Վենեսուելան շահերի բախման կիզակետում

## *Էրդողանը Մադուրոյի աջակից*





Վենեսուելայի տնտեսությունը հիմնված է նավթարդյունահանման վրա, որից ստացվում է երկրի արտահանական եկամուտների 95 տոկոսը: Ըստ BP վերազգային ընկերության 2014 թ. տվյալների, երկրի նավթի հետախուզված պաշարները գնահատվում են 46,6 մլրդ տոննա, որը կազմում է նավթի համաշխարհային պաշարների 17,5 %-ը:

Այն բանից հետո, երբ հունվարի 23-ին Վենեսուելայի խորհրդարանի նախագահ **Խուան Գուայդոն** իրեն հռչակեց պետության ղեկավար եւ խոստացավ պայքարել նախագահ Նիկոլաս Մադուրոյի բռնատիրության դեմ եւ անցկացնել ազատ ընտրություններ, նրա իշխանությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, Գերմանիան եւ լատինամերիկյան պետությունները՝ Բրազիլիայի եւ Արգենտինայի գլխավորությամբ: Նախագահ **Դոնալդ Թրամփը** Խուան Գուայդոյին նախագահ ճանաչեց Կարակասի հանրահավաքում ընդդիմության դիմումի հրապարակումից ընդամենը մի քանի րոպե անց:

Երբ վերոհիշյալ երկրները ճանաչեցին Վենեսուելայի ինքնակոչ նախագահին, ակնհայտ դարձավ, որ այդ երկրում սուր ճգնաժամը տեղայնացված չէ, ինչպես դա լինում էր անցյալում Հարավային Ամերիկայում: Ճգնաժամը դուրս է եկել միջազգային մակարդակ՝ դառնալով աշխարհաքաղաքական խաղի բաղկացուցիչ մաս: Ըստ որում, եթե անցյալում ԱՄՆ-ը (ասենք Մերձավոր Արեւելքում, իրականացնելով այսպես կոչված արաբական գարնան սցենարը), գործում էր հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա, ապա այժմ սուր ճգնաժամի է բախվում իր հետնաբակում:

Այս կապակցությամբ որոշ փորձագետներ խոսում են նույնիսկ քաղաքակրթային պառակտման մասին՝ նկատի ունենալով, որ մի կողմում հայտնվել են ԱՄՆ-ը, Կանադան, Մեծ Բրիտանիան, Եվրոմիության երկրները, Հարավային Ամերիկայի շատ երկրներ, ինչպես նաեւ Վրաստանը, մյուս կողմում՝ Ռուսաստանը, Չինաստանը, ՀԱՀ-ը, ինչպես նաեւ Թուրքիան եւ Իրանը:

Վենեսուելայում միլիարդավոր դոլարներ ներդրած եւ դրանց կորստից վախեցող Մոսկվան այդ երկրի տնտեսական ճգնաժամը կանգնեցնելու նպատակով 2018 թ. նոյեմբերին այնտեղ գործուղեց մի խումբ փորձագետների, գրում է Փարիզի Le Monde թերթը: Նիկոլաս Մադուրոն եւ նրան նախորդած Ուգո Չավեսը երկար ժամանակ կանոնավորապես հյուրընկալվել են Կրեմլում: Իր կառավարման հինգուկես տարում Մադուրոն առնվազն չորս անգամ այցելել է Մոսկվա: Վերջին այցելությունը 2018-ի դեկտեմբերին էր՝ իր երկրորդ պաշտոնավարությունից մեկ ամիս առաջ: Ս.թ. հունվարի 24-ից հետո ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը** զանգահարեց Մադուրոյին եւ իր աջակցությունը հայտնեց՝ նշելով, որ քաղաքական ճգնաժամի սրումը հրահրել են արտաքին ուժերը:

Վենեսուելայում իշխանափոխությունը կարող է աղետ դառնալ Ռուսաստանի համար: 2000-ականների սկզբից Մոսկվան եւ ռուսական խոշոր ընկերությունները վարկերի տեսքով Վենեսուելայում ծախսել են 15 մլրդ եվրո: 2018 թ. դեկտեմբերին **Մադուրոն** հայտարարեց, որ Ռուսաստանը ավելի քան 5 մլրդ դոլար է ներդնում Վենեսուելայի նավթարդյունաբերության մեջ եւ ավելի քան 1 մլրդ՝ արդյունահանման ոլորտում, ինչպես նաեւ կմատակարարի 600 հազար տոննա հացահատիկ, ասվում է Le Monde-ի հրապարակման մեջ:

Ռուսաստանցի լրագրող **Միխայիլ Զիգարը** իր «Կրեմլի մարդիկ» գրքում հիշատակում է մի հետաքրքրական փաստ: Վենեսուելայում խոշոր ներդրումներ կատարած Роснефть-ի ղեկավար **Իգոր Սեչինը** Ուգո Չավեսին հորդորել էր ճանաչել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը 2008 թ ռուս-վրացական պատերազմից հետո: Դրա դիմաց Վենեսուելային մեկ մլրդ դոլարանոց վարկ էր հատկացվել ռուսական զենքի գնումների համար:

Նիկոլաս Մադուրոյին դժվար կլինի պահպանել ստատուս քվոն, եթե տարածաշրջանային ուժերը եւ ԱՄՆ-ը սկսեն ակտիվորեն կապեր զարգացնել Խուան Գույդոյի հետ, կարծում է AKE International միջազգային վերլուծական կենտրոնի փորձագետ **Լյուսիա Կամանյոն**:

Եթե Վենեսուելայի ճգնաժամը առայժմ միայն տեսականորեն կարող է թեժ կետ դառնալ Հարավային Ամերիկայում, ապա Մերձավոր Արեւելքում վաղուց նման կետ է Սիրիան: Եվ Վենեսուելայի դեպքերը արտաքուստ զարգանում են սիրիական սցենարով, թեպետեւ՝ որոշ տարբերություններով: Այդ մասին ասում է Սիրիայում Վենեսուելայի դեսպան **Խոսե Գրեգորիո Մուցատիսը**՝ համեմատելով երկու երկրների իրադարձությունները եւ վկայակոչելով «համանման սկզբնավորումը»՝ օրինական նախագահ Նիկոլաս Մադուրոյի դեմ հրահրված դժգոհության ալիքը, իրեն ժամանակավոր նախագահ հռչակած, ընդդիմության առաջնորդ Խուան Գուայդոն եւ Վաշինգտոնի կողմից նրա շուտափույթ ճանաչումը, «նոր վարչակարգի» ճանաչման նպատակով Վաշինգտոնի գործադրած ճնշումը:

Երկու ճգնաժամերը նման են նաեւ նրանով, որ սկսվեցին տնտեսական ու քաղաքական բարեփոխումների պահանջով ծայր առած ժողովրդական հուզումներով, իսկ հետո վերաճեցին միջազգային ճգնաժամի՝ ներքին խնդիրների միահյուսմամբ: Առայժմ հայտնի չէ՝ ամերիկացիները ուղղակիորեն կմիջամտե՞ն արդյոք հարավամերիկյան երկրի գործերին, կփորձե՞ն արդյոք կոալիցիա կազմել հարեւան երկրներից: Կասկածից վեր է, որ ամերիկացիները հսկայական ջանքեր են գործադրում Վենեսուելայի նկատմամբ վերահսկողությունը պահպանելու համար: Իհարկե, շատ բան կախված կլինի փոխզիջումային լուծումներ փնտրելու եւ գտնելու Մադուրոյի կարողությունից: Նրա ջանքերին պետք է օժանդակեն պայմանական «եվրասիական կոալիցիայի» երկրները՝ Ռուսաստանը, Չինաստանը, Թուրքիան եւ Իրանը, կարծում է Մերձավոր Արեւելքի եւ Կովկասի հարցերի փորձագետ **Ստանիսլավ Տարասովը**:

Այս ուղղությամբ կոալիցիան կարող է դիվանագիտական եւ քաղաքական երկխոսություն սկսել Միացյալ Նահանգների եւ նրա գործընկերների հետ՝ նկատի ունենալով սեփական շահերը Լատինական Ամերիկայում: Բացառված չէ, որ իրադարձությունների նման ընթացքը հիվանդագին կերպով ընկալվի Վաշինգտոնում:

Երկրորդ սցենարն այն է, որ Սիրիայի նմանությամբ, Վենեսուելայի ճգնաժամը կարող է տեւել տարիներ՝ առաջացնելով գաղթականների զանգվածային ալիք դեպի հարեւան երկրներ եւ ԱՄՆ՝ Վենեսուելան բաժանելով տարբեր խմբերի ազդեցության գոտիների եւ հաստատելով փաստական երկիշխանություն, ինչպես դա տեղի ունեցավ Լիբիայում եւ մասամբ՝ Սիրիայում:

Եվ վերջապես, երրորդ սցենարն այն է, որ կշարունակվի տնտեսական ուժգին ճնշումը Կարակասի վրա, որպեսզի Մադուրոն հեռացվի ասպարեզից եւ հաստատվի ամերիկամետ վարչակարգ, թեեւ դեպքերի նման ընթացքը եւս չի բացառում քաղաքացիական պատերազմը, որը կորոշի ուժերի նոր դասավորությունը Հարավային Ամերիկայում: Սիրիայի փորձը դա արդեն ցույց է տվել:

Տարասովի կարծիքով, այժմ խնդիրը նույնիսկ այն չէ, թե Կարակասը պե՞տք է արդյոք աշխարհաքաղաքական դաշնակից համարվի Ռուսաստանի, Չինաստանի, Իրանի եւ Թուրքիայի համար: Կարեւորն այն է, որ ԱՄՆ-ը իր սահմանների մոտակայքում ստանում է անսովոր հարավային ճակատ սիրիականի նմանությամբ, սակայն՝ հարեւան երկրների անուղղակի եւ սահմանափակ մասնակցությամբ, որոնք գրագետ կերպով օգտագործում են միջազգային իրավունքը:

Պատահական չէ, որ Թուրքիայի նախագահ **Էրդողանը**, Գազիանթեփում (Այնթափ) ելույթ ունենալիս, հարց տվեց. «Իսկ ի՞նչ են անում Սիրիայում 12 հազար կիլոմետր հեռվից եկածները: Նրանց չի մտահոգում սիրիացի ժողովրդի ազատությունը: Ընդհակառակը, նրանք ուզում են լոկ բարդացնել խնդիրը»: Դեռ պարզ չէ, թե Մոսկվային, Պեկինին, Թեհրանին եւ Անկարային կհաջողվի՞ արդյոք ի չիք դարձնել Գուայդոյի ապստամբությունը եւ Վենեսուելային օգնել դուրս գալու տնտեսական սուր ճգնաժամից:

Թուրքիայի նախագահ Էրդողանը կարեւոր աշխարհաքաղաքական քայլ է կատարել: Նիկոլաս Մադուրոյի հետ հեռախոսազրույցի ընթացքում նա մասնավորապես ասել է. «Եղբայր իմ, Մադուրո, դիմացի՛ր, մենք քեզ հետ ենք»: Թուրքիայի նախագահի պաշտոնական ներկայացուցիչ **Իբրահիմ Կալինը** ընդգծել է, որ Անկարան կպահպանի հեղաշրջումների միջոցով իշխանությանը տիրելու ամեն տեսակ փորձերի մերժման իր դիրքորոշումը:

Թուրքիայի արտգործնախարար **Մեւլութ Չավուշօղլուն** ԱՄՆ-ին եւ լատինամերիկյան մի շարք երկրների մեղադրել է Վենեսուելայի ներքին գործերին միջամտելու մեջ: Նա նշել է, որ իրավիճակը կարող է հանգեցնել քաոսի, եւ որ երկրները չպետք է ենթարկվեն մեկուսացման: Ինքը՝ Էրդողանը, ով 2016-ի հուլիսին փրկվեց պետական հեղաշրջման փորձից, եւ հրաշալի գիտե, թե ով եւ որտեղ է գրել սցենարը, ըմբռնումով է վերաբերվում Վենեսուելայի իրավիճակին, որտեղ ընդդիմությունը փորձում է տապալել Մադուրոյին: Նախագահ Էրդողանն ինքը զգում է Վաշինգտոնի քաղաքական ու տնտեսական ճնշումը: Բայց բանը միայն դա չէ:

Վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ Թուրքիան բացահայտ մարտահրավեր է նետում ԱՄՆ-ին Լատինական Ամերիկայում, որն ավանդաբար համարվում է ամերիկյան շահերի գոտի: Անկարան ցույց է տալիս, որ ինքն ընդլայնում է արտաքին քաղաքական հետաքրքրությունների ոլորտը, մասնավորապես՝ Վենեսուելայում, որի հետ քաղաքական ու տնտեսական լայն երկխոսություն է սկսել: Ինչպես նշում է թուրքական Sabah թերթը, G20-ի արգենտինյան գագաթաժողովից հետո Էրդողանն այցելել է Կարակաս, որտեղ ստորագրել է 5 մլրդ դոլարի հասնող պայմանագրեր: Ի դեպ, Չինաստանի կապիտալ ներդրումները Վենեսուելայում գնահատվում են 60 մլրդ դոլար, Ռուսաստանինը՝ 16-17 մլրդ դոլար:

Թուրք փորձագետներից շատերը Վենեսուելայում իրենց երկրի ներդրումների փաստը գնահատում են որպես Թուրքիայի հայտ՝ դառնալու ոչ թե լոկ տարածաշրջանային, այլ առհասարակ մեծ տերություն: Խոսքը Հարավային Ամերիկայում Անկարայի ազդեցության աճի մասին է: Ահա թե ինչու Վենեսուելայի դեպքերին Էրդողանի արձագանքը միանգամայն բացատրելի է: Նա հասկացնում է, որ Թուրքիայի նկատմամբ նույնպես գոյություն ունի միջազգային դավադրություն, որի նպատակը երկրի քաղաքական ու տնտեսական ձեռքբերումների ոչնչացումն է: Պատահական չէ, որ ամերիկացի փորձագետներից շատերը համեմատում են Էրդողանի եւ Մադուրոյի ռազմավարությունները՝ պնդելով, որ նրանք ամբոխավարական ձեւով օգտագործում են ժողովուրդների հակաամերիկյան տրամադրությունները: Միայն թե, ի տարբերություն Մադուրոյի, Էրդողանն առավել ակտիվորեն է հանդես գալիս Վաշինգտոնի դեմ:

Հիշեցնենք, որ վերջերս **Դոնալդ Թրամփը** սպառնացել էր տնտեսապես սնանկացնել Թուրքիան, եւ դրան պետք է հաջորդեին քաղաքական ցնցումներ: Ընդհանուր առմամբ այսպես է բնորոշվում աշխարհաքաղաքական համատեքստը, որը բնութագրում է Անկարայում Կարակասի իրադարձությունների ընկալումը: ինչպես նշում է վենեսուելական TalCual հրատարակությունը, Մադուրոյի եւ Էրդողանի միջեւ հաստատվել են վստահական հարաբերություններ, Կարակասը Թուրքիան դասում է վերածնվող համաշխարհային տերությունների շարքին: Էրդողանը հասկանում է, որ ամերիկացիները բոլոր հնարավորությունները չունեն Կարակասի վարչակարգը փոխելու համար, ամերիկացիներին ինչ-որ բան պակասում է: Այս կապակցությամբ Sabah թերթը չի բացառում, որ Վենեսուելայում իրադարձությունները կարող են զարգանալ սիրիական սցենարով: Հնարավոր է, որ Վենեսուելայում Թուրքիան եւ որոշ այլ երկրներ (ներառյալ Ռուսաստանը) իբրեւ միջնորդ հանդես գան իշխանությունների եւ ընդդիմության փոխհարաբերություններում:

⇨11

# Արաբական պետությունների լիգայի չորրորդ գագաթաժողով

## *Վարշավայի հանդիպման ժամանակ կստեղծվի՞ հակաիրանական դաշինք*

Լիբանանում օրերս ավարտված Արաբական պետությունների լիգայի չորրորդ գագաթաժողովը նվիրված էր տնտեսական ու սոցիալական զարգացմանը եւ առանձնապես ուշադրության չէր արժանանա, եթե չլինեին որոշ հետաքրքրական մանրամասնություններ: Այսպես, տվյալ հանդիպումը կարող էր իսկական հեղաշրջում լինել արաբական աշխարհում, եթե դրան մասնակցեր Սիրիայի նախագահ Բաշար Ասադը: Նա հրավեր էր ստացել Լիբանանի նախագահ Միշել Աունից, բայց չէր օգտվել դրանից:

Թե որքան խելամիտ էր Աունի որոշումը, դժվար է ասել: Մերձավոր Արեւելքի եւ Կովկասի հարցերի փորձագետ **Ստանիսլավ Տարասովի** կարծիքով, հրավերը կշռադատված եւ նպատակամետ բնույթ էր կրում: Հնարավոր կլիներ աշխուժացնել արաբական երկրների մի մասի գործունեությունը սիրիական ուղղությամբ, քննության առնել Արաբական պետությունների լիգային Սիրիայի մասնակցության հարցը եւ խորհել այն մասին, թե արաբական երկրները ինչպես կկարողանային օժանդակել Սիրիայի վերականգնմանը:

Ինչպես այս կապակցությամբ ասել է Լիբանանի արտգործնախարար **Ջեբրան Բասիլը**, Սիրիայի վերադարձը Լիգա դեպի արաբական աշխարհ նրա վերադարձի մի մասն է, եւ դա բխում է բոլոր արաբական երկրների շահերից: Առավել եւս, որ ֆրանսիական Le Figaro թերթի գնահատման համաձայն, 2011 թ. Արաբական պետությունների լիգայից վտարված Սիրիան սկսել է աստիճանաբար դուրս գալ արաբական աշխարհում իր օտարումից եւ մեկուսացումից:

Այն ժամանակ արաբական մի շարք երկրներ իրենց դեսպաններին հետ էին կանչել: Հետագայում Լիգան չէր մասնակցում Սիրիային նվիրված բանակցություններին, թեեւ խոսքը արաբական աշխարհի կարեւոր երկրներից մեկի մասին է: Արաբ քաղաքական գործիչներից շատերը սխալ են համարում Լիգայի այդ քաղաքականությունը: Իսկ ի՞նչ է կատարվում այժմ: Արաբ դիվանագետներից մեկը պարզաբանում է, որ «ամեն ինչ կապված է գործնական մոտեցման հետ: Լիգայից Սիրիայի հեռացումը հանգեցրեց այն բանին, որ Սիրիային առնչվող բոլոր դիվանագիտական մեխանիզմներում բացակայում է արաբական բաղադրատարրը»: Սակայն այժմ անգլիական Financial Times թերթը արձանագրում է. «Սիրիայի հարեւան երկրները, որոնք այս կամ այն չափով աջակցում էին ընդդիմությանը, զգուշորեն սկսում են Դամասկոսի հետ վերականգնել դիվանագիտական շփումները, որոնք ընդհատված էին ընդհուպ 2018 թվականի վերջերը»:

Իսկ Իրաքը, Լիբանանը եւ Ալժիրը առհասարակ չէին խզել կապերը Դամասկոսի հետ: Սիրիայի հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնման առաջամարտիկներ դարձան Արաբական Միացյալ Էմիրությունները եւ Բահրեյնը, որոնք վերականգնեցին իրենց ներկայացուցչությունների աշխատանքը Դամասկոսում: Ինչ վերաբերում է ֆիզիկական շփումների վերահաստատմանը, այստեղ առաջնության դափնին պատկանում է Սուդանի նախագահ Օմար Բաշիրին, որը պաշտոնական այցով Դամասկոս այցելեց 2018-ի դեկտեմբերին: Հորդանանը բացել է Սիրիայի հետ սահմանային հսկիչ անցակետերը: Այնպես որ Լիբանանում անցկացված Լիգայի գագաթաժողովը կարող էր խթանել այդ գործընթացը: Հայտնի է, որ Արաբական երկրների լիգայի մասնակից 22 երկրները այլեւս չեն հակազդում Սիրիայի վերադարձին: Սակայն ի հայտ են եկել ընդհանուր առմամբ սպասելի ներածական գործոններ:

ԱՄՆ-ը հայտարարել է, որ մտադիր է փետրվարի վերջերին Վարշավայում անցկացնել հանդիպում 70 երկրների, այդ թվում մերձավորարեւելյան որոշ պետությունների (օրինակ` Իսրայելի) ղեկավարների մասնակցությամբ, որպեսզի ձեւավորեն հակաիրանական դաշինք: Վաշինգտոնի երկյուղները կապված են այն բանի հետ, որ Արաբական պետությունների լիգա վերադառնալով` Սիրիայի նախագահ Բաշար Ասադը է՛լ ավելի անհարմար գործընկեր կդառնա Սիրիայի խնդրի կարգավորմանը նվիրված բանակցություններում: Այնպես որ ամերիկացիները գոհ են, որ Սիրիան չմասնակցեց Լիբանանի գագաթաժողովին:

Պատահական չէ, որ Վաշինգտոնն անչափ ուժգին ճնշում էր գործադրում Արաբական պետությունների լիգայի եւ մի շարք այլ երկրների վրա` պահանջելով հանդիպման չհրավիրել Սիրիային: Սա առաջին: Երկրորդ, Վաշինգտոնը վախենում է, որ արաբական աշխարհի երկրների միջեւ տեղի կունենա մերձեցում տարածաշրջանային մի շարք հարցերի առնչությամբ: Ըստ ամերիկացիների, եթե արաբական երկրները հասունացել են իրար հետ իրենք հաշտվելու համար, ապա նրանք պետք է դա անեն բացառապես հակաիրանական, այլ ոչ թե սիրիական հողի վրա:

ԱՄՆ-ը հասավ որոշակի արդյունքի: Քաթարի, Քուվեյթի եւ Եգիպտոսի ղեկավարները հրաժարվեցին մեկնել Բեյրութ: Սաուդյան Արաբիայի իշխանությունները առայժմ մտադիր չեն դեսպանատուն բացել Դամասկոսում: Լիգայի մյուս երկրների ղեկավարներից Լիբանան ժամանեցին միայն Քաթարի էմիր, շեյխ Թամիմ բեն Համադ Ալ Թանին եւ Մավրիտանիայի նախագահ Մուհամմեդ Աբդել Ազիզը: Մնացած տասնյոթ պատվիրակությունները գլխավորում էին կառավարությունների ղեկավարներ եւ նախարարներ: Լիբիայի պատվիրակությունը գագաթաժողովին մասնակցելուց հրաժարվեց այն բանից հետո, երբ Լիբանանի շիաները սպառնացին բողոքի ելույթներ կազմակերպել պատվիրակության ժամանման դեպքում: Այս ամենի արդյունքում Սիրիայի թեման մղվեց երկրորդ կամ երրորդ պլան, իսկ Արաբական պետությունների լիգայի ամփոփիչ հայտարարությունը գերհագեցած էր ընդհանուր արտահայտություններով նույնիսկ այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում էր Լիգայի Մաքսային միության եւ Ազատ առեւտրի արաբական գոտու ստեղծմանը: Բարդ է մնում պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման խնդիրը:

«Ռեգնում» գործակալությունը տեղեկացնում է, որ Արաբական պետությունների լիգայի տնտեսական ու սոցիալական զարգացմանը նվիրված հաջորդ` հինգերորդ գագաթաժողովը տեղի կունենա Մավրիտանիայում 4 տարի հետո: Հիմա մնում է միայն սպասել Վարշավայի գագաթաժողովի աշխատանքի արդյունքներին: Շատ փորձագետների գնահատումների համաձայն, այդ համաժողովը հրավիրվում է ռազմական կամ քաղաքական որեւէ ձեռնարկման նախօրեին կամ հակաիրանական շարժման պահպանման նպատակով: Սակայն Վաշինգտոնին դժվար թե հաջողվի արաբների հակաիրանական լուրջ կոալիցիա ստեղծել այն պայմաններում, երբ արաբները չեն կարողանում միմյանց հետ փոխհամաձայնության հասնել:

ԱՐԵՎԻԿ ԲԵՐԻՇՅԱՆ

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Թռանք

**Որ շատ խորանանք` փիղն էլ է թռչում: Բավական է փակել աչքերը ու պատկերացնել, թե ինչպե՞ս է թռչում, իսկ եթե նման տեսիլքներ հաճախ ունենանք, ապա մեզ ոչ մեկը չի կարող ապացուցել, որ փիղը թռչում չէ: Դե իսկ եթե փիղը թռչում է, կոկորդիլոսը...Մի խոսքով: Եթե Արարատի մարզպետը կոկորդիլոսին թռչուն անվանելուց հետո Ֆեյսբուքի իր պատին Վիքիպեդիայից քաղվածք է դնում, որտեղ հայ կոկորդիլոսագետներին ցույց է տալիս, որ կոկորդիլոսը սերում է ինչ-որ թռչնախմբից եւ ուրեմն` մաքուր թռչուն է, ուրեմն մարդը համոզված է, որ աշխարհի ամենամեծ սողունն իրականում թռչուն է:**

**Չվիճենք: Փոխարենն առաջարկում են մի առակ հիշել` կրկին կենդանիների թեմայով, բայց ինչպես բոլոր առակները` մարդկանց մասին: Քանի որ պատկերացրեցինք, որ կոկորդիլոսը թռչում է, ուրեմն պատկերացնենք, որ մի ծիտ` բառիս ճնճղուկ իմաստով, ուրախ-զվարթ թռչում է կապույտ երկնքում, մեկ էլ հանկարծ ընկնում է գետնին` գյուղական մի դաշտավայրում: Պարզվում է` ճնճղուկը չափից դուրս վեր է բարձրացած լինում ու թեւերը վնասվում են եւ ընկնում է: Նա այլեւս չի կարողանում թռչել: Այդ տեղով մի կով է անցնում եւ, չնկատելով ճնճղուկին, կեղտոտում է նրա վրա: Ճնճղուկը մի քանի վայրկյանից ուշքի է գալիս եւ զգում է, թե որքան տաք է: Զգացած ջերմությունից ճնճղուկն սկսում է երգել: Հիշում եք, եթե կոկորդիլոսը թռչուն է, ուրեմն ճնճղուկը երգում է: Թռչունի երգը լսում է մոտակայքում ինքն իր համար քայլող մի կատու եւ հարձակվում է խեղճ ճնճղուկի վրա, հանում է նրան կովի կեղտից եւ ուտում:**

**Ի՞նչ է ստացվում: Այն, որ ամեն մեկը, ով կեղտոտում է քեզ վրա, պարտադիր չի ուզում վնասել քեզ եւ քո թշնամին չէ: Բացի այդ` ամեն մեկը, ով քեզ հանում է կեղտից, պարտադիր քո ընկերը չէ: Եւ ամենակարեւորը` երբ դու ամբողջովին կեղտի մեջ ես, ավելի լավ է ձայն չհանես:**

**Բայց այս առակն ինձ ուրիշ բան էլ հիշեցրեց: Մի խոսք կա` քննադատությունն այն է, ինչը մենք ստանում ենք հանրահայտության դիմաց: Ես վստահ եմ, որ գործող իշխանության շատ ներկայացուցիչներ սա չգիտեն: Եւ ամեն անգամ, երբ հրոսակախումբ հիշեցնող եւ նախկին ռեժիմին սպասարկող մամուլը կեղտ է շպրտում նրանց վրա, սկսում են աղմկել` պնդելով, որ իրենք իրականում մնում են նույն սուրբը եւ մոռանալով, որ իրականում մարդու ամենամեծ սրբապղծությունը մարդկանց մեջ սրբեր փնտրելն ու մանավանդ գտնելն է:**

**Տղերք, աղջիկներ, տիկնայք եւ պարոնայք, նորմալ է, որ սխալվում եք, հրաշալի է, որ ձեզ քննադատում են դրա համար, ընտիր է, որ այնքան երեւակայություն ունեք, որ վստահ եք, թե կոկորդիլոսը թռչում է, բայց լավ չէ, որ չգիտեք, թե ինչ է քննադատությունը եւ ինչի համար եք դուք այն ստանում:**

**Բայց ուշ չէ, սրանից հետո, երբ կեղտի մեջ եք հայտնվում, ուղղակի լռեք: Հա, մեկ էլ, երբ թռչում եք, մի մոռացեք, որ շատ բարձր չեք կարող: Ի դեպ, մարդն էլ է թռչում:**

# Վենեսուելան շահերի բախման կիզակետում

⇨10 Մինչդեռ ԱՄՆ-ը սպառնում է նույնիսկ ռազմական միջամտությամբ: Ինչպես ժամանակին Սիրիայում Բաշար Ասադի դեպքում, այստեղ էլ նա պահանջում է Նիկոլաս Մադուրոյի հրաժարականը, ինչը տեղական ընդդիմությանն օբյեկտիվորեն դրդում է կառավարության նկատմամբ ուժային դիմակայության: Բայց ներկա պահին առավել իրատեսական է թվում Վենեսուելայի նկատմամբ ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների պատժամիջոցների խստացումը: Վենեսուելայի հակամարտությունը, ինչպես Սիրիայինը, վճռական են Հարավային Ամերիկայում եւ Մերձավոր Արեւելքում միջազգային կարգի պահպանման տեսակետից: Չնայած տարբերություններին, երկու ճգնաժամերն ունեն ընդհանուր բովանդակություն:

Ի դեպ, հունվարի 25-ի Նիկոլաս Մադուրոն հայտարարեց, որ ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզումը չի նշանակում կապերի խզում ամերիկացիների հետ: «Ես հարաբերությունները խզեցի ԱՄՆ կառավարության, այլ ոչ թե ժողովրդի հետ: ԱՄՆ-ը ավելին է, քան Թրամփի կառավարությունը: Մենք կշարունակենք վաճառել նավթ, որն այնտեղ խնդրում են մեզանից», հայտարարեց Մադուրոն Վենեսուելայի ռադիոյի ուղիղ եթերում: Ավելի վաղ նա քաղաքական եւ դիվանագիտական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ խզել էր ի պատասխան երկրի ընդդիմության ամերիկացիների աջակցության: Ուրբաթ օրը ԱՄՆ-ը սկսեց իր դիվանագետներին դուրս բերել Վենեսուելայից:

Իսպանական El Pais թերթը հաղորդում է, որ ԵՄ չորս խոշոր երկրներ` Իսպանիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան հունվարի 26-ին պատրաստակամություն են հայտնել Խուան Գուայդոյին ճանաչելու որպես Վենեսուելայի նախագահ: Երկրները Նիկոլաս Մադուրոյին առաջարկել են ութ օրվա ընթացքում անցկացնել արտահերթ ընտրություններ, այլապես իրենք կճանաչեն Գուայդոյին: Ինչ վերաբերում է Նիկոլաս Մադուրոյին, նա հունվարի 27-ին հանդես եկավ հայտարարությամբ` ասելով, որ ինքը անվերապահորեն մերժում է իրեն ներկայացված վերջնագիրը:

Հունվարի 29-ին ԱՄՆ գանձապետարանը հաղորդեց, որ նոր պատժամիջոցներ են սահմանվում Վենեսուելայի Petroleos de Venezuela պետական նավթային ընկերության նկատմամբ: ԱՄՆ ֆինանսների նախարարությունը հայտարարեց, որ ամերիկացիները կարող են այսուհետեւ էլ գործարքներ կնքել այդ ընկերության հետ, բայց դրանցից ստացվող փողերը կփոխանցվեն հատուկ հաշիվների, որոնք անհասանելի են պաշտոնական Կարակասի համար:

ԱՐԵՎԻԿ ԲԵՐԻՇՅԱՆ

AZG NEW SHABAT.QXD 31/01/2019 22:01 Page 12



# Շքեղության ու թշվառության բաժանարարը՝ 300 մետր

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Հունվարի 29-ին լրացավ Արամ Մանուկյանի մահվան 100-րդ տարելիցը: Թե ինչ զգալի ավանդ ունի Արամ Մանուկյանը մեր առաջին հանրապետության կերտման գործում՝ պատմաբանները վաղուց ամրագրել են ժամանակի հոլովույթում, եւ ամենեւին հարկ չկա դրա մասին այստեղ խոսելու: Հիմա, ասելիքս ավելի շատ ներկա ժամանակի մասին է. իսկ ներկան մենք ենք:

Արդ, մինչ օրս ինչպե՞ս է հայությունը երախտապարտ եղել Արամին: Մի կողմ նետենք փաստական կողմնորոշումներն ու նախասիրությունները: Ներկաներս հարգե՞լ ենք Արամի հիշատակը, որպեսզի ապառնի ունենանք: Ո՞ւր են հարգանքի պտուղները կամ գոնե այդ տեսակի մեկ հատիկը: Հարգանքի ու հիշողության հրապարակից դուրս գտնվելով, Արամ Մանուկյանը միակը չէ, մեկն է հազարավորներից. մենք լա՞վ ենք ճանաչում, ասենք, Փանոս Թերլեմեզյանին, Արշակ Չոպանյանին, Քսան ինչակյաններին ու մյուսներին: Եթե չենք հիշում, չենք ճանաչում, չենք կրում մեր անցյալը, վստա՞հ ենք, որ ներկան մաքուր ու հիշատակի արժան ենք ապրում, այս ապրելակերպը մեզ թույլ տալո՞ւ է սերունդների համար ապագայի, գոնե, ուրվագիծ կազմել: Ցայսօր մենք անգործ ենք:

Ի՞նչ խոսք, խորհրդային իշխանությունները յոթ տասնամյակ արգելել են նման հերոսներին հարգել, իսկ դրանից հետո՞, դրանից հետո ո՞վ է արգելել քայլել, մարդավարի քայլել:

Հարգել ասելով էլ ես նկատի չունեմ այն երկու, չորս, վեց կամ որեւէ զույգ թվով վարդերն ու մեխակները, որոնք տարին մի քանի անգամ խցկվում են Արամի փլուզված, աղբանոցի վերածված ու անտեր մնացած տան վիրավոր ճակատին փակցված խղճուկ ցուցանակի արանքում, որն անցնողին հուշում է՝ թե այստեղ է ապրել Արամ Մանուկյանը: Ցուցանակը կարդալուց հետո տանջող միտք է առաջանում՝ մեռե՞լ են Արամի հետնորդները, որ տունն այս թշվառ վիճակին է հասել, թե՞ ուրացող են: Անշուշտ պնդում ենք, որ ուրացող չենք: Մեռնելու մասով էլ, իհարկե, ո՛չ, չեն մեռել, նրանք ապրում են, եւ վատ չեն ապրում, դե, գոյատեւում են, ավելին՝ նրանք են տարին մի քանի անգամ ծաղիկներ դնում ցուցանակի արանքում ու միստիկ հայացքով նայում դեպի վեր՝ իրենց չորս կամ վեց ծաղիկ նվիրաբերումից գոհացած Արամ Մանուկյանի շնորհակալ դեմքը որսալու: Բայց ծաղի՞կն է, որ պետք է լիարժեք դարձնի Արամի հիշատակի հավերժացումը:

Մենք Արամի տան մոտակայքում արձան ունենք, որի վրա գրված է՝ Արամ Մանուկյան, բայց, գաղտնիք չէ, այն կապ չունի նրա կերպարի ու ապրած կյանքի հետ, ավելի՝ չարժեր որեւէ ազատագրական գործչի պատվին նման վատ արձան կանգնեցնել: Ամեն դեպքում արձանը շքեղ է, թանկարժեք, ուշադրության արժանի: Շքեղ արձանի ու թշվառ տան բաժանարարը երեք հարյուր մետր է: Ամոթ մեզ:

Այսօր Արամի տունը փլուզման եզրին է: Մեղավորները շատ են, բայց ես ոչ մեկին չեմ մատնանշելու, բացի ինձանից, իհարկե, որովհետեւ, որպես հայ, ես էլ իմ մեղավորության բաժինն ունեմ: Թող ամեն մարդ պատասխան տա իր խղճին, եւ թող ամեն մեկը բավարար անմեղություն ունենա մեղքի ծանրությունը մերժելու համար...

Աստված ողորմի քեզ, Արա՛մ Մանուկյան:

# Վախճանվել է հայագետ Ռոբերտ Հյուսենը

Նյու Յորքից, Հայկական ուսումնասիրությունների ընկերությունը (SAS) տեղեկացնում է, որ 84 տարեկանում վախճանվել է հայագետ պրոֆ. Ռոբերտ Հյուսենը:

Ռոբերտ Հյուսենյանը ծնվել էր Նյու Յորքում 1934-ին: Ուսումը ստացել էր Մերիլենդի համալսարանի պատմության ֆակուլտետում, դոկտորական էր պաշտպանել 1967-ին Ջորջթաուն համալսարանում: Նույն տարում նա աշխատանքի էր անցել Նյու Ջերսիի Ռոուան համալսարանի պատմության ֆակուլտետում, որտեղ ավելի քան 30 տարի դասավանդել էր Բյուզանդիայի եւ Ռուսաստանի պատմություն առարկաները: Այնուհետեւ 1999-ից դասավանդել էր Չիկագոյի, Կալիֆոռնիայի, Ֆրեզնոյի եւ Լոս Անջելեսի համալսարաններում:

Նա Հայկական ուսումնասիրությունների ընկերության նախագահն էր 1988-89 տարեշրջանում: Ծանոթ է հատկապես Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի» իր թարգմանությամբ: Հեղինակ է նաեւ կոթողային «Հայաստան: Պատմական ատլաս» աշխատության, որը հրատարակել է Չիկագոյի համալսարանի հրատարակչատունը 2001 թվին: Նան նաեւ հիմնադիրն էր եւ նախագահը «Կովկասյան ուսումնասիրությունների ընկերության»:



Վերոնշյալ ատլասի համար **Մայքլ Սթունը** գրել է, որ այն չունի իր հավասարը: «Դա իր տեսակի մեջ լավագույնն է»:

Հ.Ծ.



Հայտարարություն

**Փետրվարի 11-ին՝ ժամը 18:30-ին, «Նարեկացի» արվեստի միությունում տեղի կունենա**

**Միեր Ղազարյանի**

**լուսանկարների ցուցահանդեսը:**

Ցուցահանդեսին կներկայացվեն Հայաստանի բնության գեղատեսիլ վայրերը:

*Միեր Ղազարյանը 2006-2010 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, ստացել բակալավրի աստիճան, իսկ 2010-2012 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:*

# Լուսավորվել է Երեւան-Մեղրի միջպետական մայրուղու կարեւորագույն հատվածներից մեկը




Հայաստանի հարավային դարպասը համարվող Սյունիքի մարզի Մեղրի քաղաքն օրվա անցուդարձն սկսում եւ ավարտում է տրանսպորտային ակտիվ հոսքով: Երեւան-Մեղրի M2 միջպետական մայրուղում երթեւեկը գրեթե չի դադարում: Դեպի սահմանային անցակետ եւ հակառակ ուղղությամբ օրվա ընթացքում անցնում են ոչ միայն ուղեւորատար, այլեւ ծանրաքարշ բեռնատար բազմաթիվ մեքենաներ: Մեղրիում գտնվող սահմանապահ զորամաս, զինվորական ավան եւ գյուղատնտեսական նշանակության տարածքներ հասնելու համար ավելի քան մեկ կիլոմետր հատված մարդիկ քայլում են մայրուղու եզրով, որտեղ գրեթե չկա երթեւեկելի եւ ոչ երթեւեկելի մասերի սահմանազատում: Վթարի ենթարկվելու հավանականությունն ավելանում է հատկապես գիշերային ժամերին՝ բացարձակ մթության մեջ հայտնվելուց հետո: Տարիների վաղեմության՝ լուսավորության խնդիրն առկա էր ամիսներ առաջ եւ համարվում էր լուծման ենթակա առաջնահերթություն:

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) եւ գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ը շուրջ 5 ամիս առաջ ստանձնել են խնդիր լուծումը: Արտաքին լուսավորության ապահովման հարցն ընդգրկված է եղել նաեւ համայնքի զարգացման ծրագրում, սակայն կոնկրետ այդ հատվածում դա հաջողվել է կյանքի կոչել միայն գործակցող կողմերի աջակցությամբ: Մայրաքաղաքից ավելի քան 370 կմ հեռավորություն վրա գտնվող Մեղրիում, խնդրահարույց ճանապարհահատվածում վերջերս մեծ թափով աշխատանքներ են իրականացվել: Տեղադրվել է էներգաարդյունավետ 33 LED-լուսատու: Էներգախնայող համակարգի ներդրման արդյունքում լուսավորվել է ավելի քան մեկ կմ ճանապարհ:

«Մեղրի համայնքի զարգացման ծրագրի՝ լուսավորության բաղադրիչն այսօր համարում ենք ապահովված: Լուծվել է ոչ միայն սոցիալական, այլեւ՝ անվտանգության հարց: Երեւան-Մեղրի մայրուղու կոնկրետ այդ ճանապարհահատվածում, միշտ ստեղծվում է կիսավթարային իրավիճակ: Հուսով ենք, որ իրականացված աշխատանքի արդյունքում ապահովված լուսավորության շնորհիվ ամեն ինչ կփոխվի: Ծրագիրը նաեւ բնապահպանական խնդիր է լուծել»,-ասել է Մեղրիի քաղաքապետ **Մխիթար Զաքարյանը**:

«Հայաստանի մի շարք համայնքներում իրականացված ծրագիրն արդյունավետ է մի քանի տեսանկյունից: Այն ժամանակակից մոտեցում է եւ լուծում է սոցիալական, բնապահպանական ու նաեւ՝ անվտանգության հարցեր: Այս լուսատուներն ի տարբերություն գազային կամ էկոնոմ լամպերի, ավելի երկար են շահագործվում, հաճախակի չեն փոխարինվում եւ ֆինանսական կամ մարդկային աշխատուժի լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջում: Արձանագրվող էներգախնայողությունն էլ կազմում է շուրջ 65-80 %», - ասել է ծրագրի համակարգող **Մարտին Մառալչյանը**:

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ն արձանագրել են հերթական ձեռքբերումը. լուծվել է եւս մեկ համայնքի հուզող հարց: Մեղրիի խնդրահարույց ճանապարհահատվածում էներգախնայող համակարգն արդեն գործարկվել է:

## Կորել է

**Շախկյան Մարիաննայի** խԹ N001735 համարի դիպլոմը, տրված 1985 թ. ԵՊՀ Կենսաբանական ֆակուլտետի կողմից:

Համարել անվավեր:

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 31.1.2019, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

AZG NEW MSHAKUITT.QXD 31/01/2019 18:48 Page 1

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ

Թիվ 4(413)
1 ՓԵՏՐՎԱՐ
2019

**Նաիր ՅԱՆ**




«80-ը այն տարիքն է, որ թվում է՝ պետք է մոտենամ հանգստությանը, բայց չէ՛, հանգստություն չունեմ ես: Դեռ պիտի հոգեւոր երաժշտություն ժառանգություն թողնեմ սերունդներին: Ես աշխատել եմ Ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների հիման վրա, բայց ուզում եմ բոլորովին ինքնուրույն գործեր ստեղծել, ի՛մ գործերը՝ առանց Շնորհալուն, Նարեկացուն կամ այլ մեկին դիմելու»,- իր 80 ամյակի նախօրեին ասաց կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանը**: Անգամ տոնական օրը նա աշխատել է, միաժամանակ հյուրեր ընդունել: Հոբելյանի առիթով Հայաստան են եկել երկու քույրերը՝ Արաքս եւ Սոնա Մանսուրյանները, նաեւ դուստրը՝ Լոս Անջելեսից: Հարցին, թե ումի՞ց կուզենար լսել ամենացանկալի շնորհավորանքը, մաեստրոն պատասխանել է. «Սենտիմենտալ կթվամ, բայց կուզեի կնոջիցս լսել...չեմ լսի»: Կոմպոզիտորին տարբեր հանդիսությունների ժամանակ հաճախ կարելի է տեսնել. մնում է այնքան, որքան իրեն է հետաքրքրում: Մեկ էլ լռիկ, աննկատ հեռանում է: Նրա աշխարհը եղել եւ մնում է կյանքը, հանճարներին, մեծերին բացահայտելու, նրանց ճանաչելու տիրույթը:

### Մեծերը Տիգրան Մանսուրյանի կյանքում

Հրանտ Մաթեւոսյանի գրասեղանին միշտ բացված Չարենց կար: Թվում է՝ սովորական բան է, բայց չէ՞, Հրանտին Չարենցը պետք էր, պետք էր միշտ: Դրա համար էլ Չարենցի «Երկիր Նաիրին» միշտ բացված՝ նրա սեղանին էր: Չարենցն ինձ փոխել է, շատ է փոխել, երբ դեռ շատ երիտասարդ էի: Մինչեւ հիմա Չարենցն ինձ հետ է: Շատերն են եղել իմ կյանքում ու շատերը մինչեւ հիմա կան, բայց Չարենցն է ինձ փոխել: Մեր միջնադարյան հանճարներով միշտ եմ հիացել, նրանց տաղերը, քնարերգությունը, հոգեւոր արժեքները վերերկրային երեւույթներ են, դրանց հետ ես կապված եմ միշտ: Բացում եմ, բացահայտում, հիանում, հրճվում, զարմանում... Վերջերս հայտնաբերել եմ իրական, ոչ սովետական Չեխովին: Շեքսպիրից հետո Չեխովը երկրորդն է, որի գործերն ակտիվորեն բեմադրվում են աշխարհի տարբեր թատրոններում: Ու այդ գրողը մինչեւ հիմա ներկայացվել է խմբագրված: Պարզվում է՝ Չեխովի քույրը նրան լավ էլ խմբագրել է՝ թե՛ անձնական կյանքը, թե՛ նամակները, ու մեզ այսքան ժամանակ ներկայացվել է փայլեցված Չեխով: ...Պարտվել. ամենակարեւորը կյանքում պարտվել իմանալն է, պարտության հետ հաշտվել կարողանալը: Պարտվել իմանալ ինձ սովորեցրել է Ֆոլկները: 10 տարի եմ նվիրել Ֆոլկներին: Գավառի այդ հսկան, որ բարձրագույն կրթությունը կիսատ թողեց, այնքա՜ն մեծացավ, աճեց, որ Նոբելյան մրցանակի հասավ՝ այդ ընթացքում բազում պարտություններ ապրելով: Պետք է կարողանալ պարտվել՝ հանուն հիմնականի: Որպեսզի կապդ այդ հիմնականի հետ չկորցնես:

### Մեկ տոկոս դասական

Ես երաժշտության աշխարհ եմ մտել, այդ ճանապարհով սկսել եմ քայլել դեռ պատանեկությունից: Այդ ժամանակվանից մինչեւ հիմա տառապում եմ. իմ ստեղծագործությունն իմ տառապանքն է: Չեք պատկերացնի՝ որքա՜ն դժվար է, որքա՜ն տանջալից է, երբ քեզանից երաժշտություն է պոկվում: 1-2-3-1-2-3. այսօր ուր գնում ես, այս ռիթմն ես լսում: Միայն Հայաստանում չէ, այլ երկրներում էլ է այդպես: Շքեղ հյուրանոցներ ես մտնում, անգամ վերելակում այդ 1-2-3 ռիթմն է լսվում: Դա է այսօրվա մարդկության պահանջած երաժշտությունը: Երաժշտություն ասվածը բազմաշերտ է՝ էլ ռաբիս ու ժողովրդական, էլ քաղաքային ֆոլկլոր ու գուսանական, էլ կինոերաժշտություն. ու այս ամենի մեջ դասականի բաժինն ընդամենը մեկ տոկոս է: Սա, անշուշտ խիստ ցավալի է: Բայց ի՞նչ արած, մարդիկ ուզում են հեշտ ապրել, ուզում են հեշտ մարսել, քիչ մտածել, քիչ տառապել: Իսկ դասական երաժշտությունը մտածելու տեղիք է տալիս, լուրջ, խորքային, տանջանք պատճառող հարցադրումներ է առաջ բերում, որոնց պատասխանները դժվար է գտնել: Բախ, Բեթհովեն... կարծում եք նրանց հասկանալը հե՞շտ է: Իհարկե, ո՛չ: Բայց ի՜նչ հաճելի է ներթափանցել նրանց մտքերի աշխարհը, ի՜նչ հրաշալի է ճիշտ հարց տալն ու ճիշտ պատասխան ստանալը...Նոր շարժումներին դեմ չեմ, նորի ի հայտ գալով՝ նախորդ ժամանակների արվեստը չի դադարում: Այն շարունակվում է...

### Ցավալի, բայց՝ փաստ

Արթուր Ավանեսովին ճանաչո՞ւմ եք. քչերը գիտեն նրան: Արթուրը հրաշալի երաժիշտ է, կոմպոզիտոր ու տեսաբան: Ես էլ Արթուրի պես քիչ ճանաչված կամ ոչ հայտնի կլինեի, եթե չլիներ իմ կինոերաժշտությունը: 20 տարի ֆիլմերի համար երաժշտություն եմ գրել, աշխատել Հենրիկ Մալյանի, Սերգեյ Փարաջանովի, Ալբերտ Մկրտչյանի, այլոց հետ: Լրագրողներ են մոտենում ինձ ու անմիջապես հարց տալիս իմ կինոերաժշտությունից: Այդ պահին վրդովվում եմ, ուրեմն ինձ ֆիլմերի երաժշտությունից գիտեն: Հարցնում եմ՝ դու կգնայի՞ր Հրանտ Մաթեւոսյանի մոտ՝ հարցազրույցի՝ առանց նրա գրքերը կարդալու: Ես լուրջ երաժշտություն եմ ստեղծել, բայց արի ու տես, որ հանրությունն ինձ ճանաչում է ֆիլմերի երաժշտությունից:

### Ցավոտ թեմա՝ սովետ

Սովետական կարգերին երբեք ինձ հարազատ չեմ զգացել: Չեմ կարող ասել, թե այդ տարիներին ինձ նեղացրել են, կամ խորթ զավակ եմ եղել: Բայց տեսել եմ, որ կա տարածք, որն արդեն զբաղված է: Այդ տարածքն իմը չի եղել: Ես առավել ինտենսիվ եմ աշխատել սովետի փլուզումից հետո: Ու ափսոսում եմ, որ կարծում էի՝ այդ համակարգն անվերջ է: Ես երկու իրականությունների միջով եմ անցել՝ սովետական եւ հետսովետական: Սովետական մարդը չէր էլ կարող պատկերացնել, որ մի օր գալու է հետսովետական շրջան: Հիմա ես շատ պատվերներ ունեմ արտասահմանից, երկու հրատարակչություն, ձայնագրման ստուդիաներ են համագործակցում ինձ հետ, այն ժամանակ նման բաներ չէին լինում: Սովետը... ցավոտ թեմա է, չեմ ուզում շատ խոսել դրանից: Այն, ինչ ունենք՝ անկախություն, մեծ զրկանքների գնով ենք վաստակել, ու ամենակարեւորը՝ Արցախ ունենք: Դա գերագույնն է:

### Ափսոսում եմ

Ափսոսում եմ, որ լատիներեն չսովորեցի: Եթե սովորած լինեի, կկարողանայի հասկանալ աշխարհի մեծ գիտությունները, շփվել դրանց հետ ու շատ բաներ իմանալ ակունքներից: Ափսոսում եմ, որ այդպես էլ ոչ մի օտար լեզու չսովորեցի: Չկարողացա սովորել: Ափսոսում եմ, որ չեմ պատկերացրել, որ մի օր սովետ այլեւս չի լինելու:



## Հոբելյանական 150



2019-ը հոբելյաններով հարուստ է, սակայն բոլոր հոբելյաններից հատկապես առանձնանում են Կոմիտասի եւ Հովհաննես Թումանյանի 150 ամյակները: Հունվարի 29-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում մեկնարկել է կոմիտասյան տարին: 4 տարի առաջ ճիշտ այդ օրն է բացվել թանգարանը: 2019-ին նախատեսված են բազմաթիվ համերգներ, փառատոներ, ցուցահանդեսներ, իսկ սեպտեմբերին կանցկացվի միջազգային գիտաժողով: Փորձ է արվելու Կոմիտասի ամբողջ ժառանգությունը, ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային երաժշտագիտությանը թողած նրա ավանդն արժեւորել, լույս սփռել մինչ այժմ չբացահայտված շերտերին:

Կոմիտասի գործունեության արձագանքները մեր ժամանակներում. այս թեման խիստ արդիական է, եւ բազմաթիվ անդրադարձեր կլինեն հատկապես օտարազգի մասնագետների կողմից: Միջոցառումներ են նախատեսված նաեւ Ֆրանսիայում, Գերմանիայում, ամենուր, որտեղ կոմիտասյան հետքեր կան: Առաջին անգամ բացվել են սաքսոնական արխիվները. պարզվել է՝ Կոմիտասի օտարազգի ժամանակակիցները նրա հետ նամակագրական կապ են ունեցել: 7-8 նամակ է հայտնաբերվել: Կոմիտասի անձի եւ գործունեության վերաբերյալ փնտրտուքները շարունակվում են, ի վերջո, գաղտնազերծված չէ խազագրություն երեւույթը, որին տիրապետել է Կոմիտասը եւ որը խորհրդավոր աշխարհ է համարվում ժամանակակից աշխարհում:

Հատկանշական է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2019-ի օրացույցում ներառել է Կոմիտասի եւ Հովհաննես Թումանյանի հոբելյանները: Գործընթացը վաղուց էր սկսվել: Դեռեւս 2017-ին է մեր երկիրը հայտ ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՕ-ին: Ինչպես կարգն է, մենք ստացել ենք Ֆրանսիայի եւ Գերմանիայի հանձնաժողովների աջակցությունը: Երկու երկրները սիրահոժար են հայտնել իրենց համաձայնությունը, որովհետեւ Կոմիտասի կենսագրությունը մեծապես կապված է եղել Ֆրանսիայի եւ Գերմանիայի հետ: Թուրքիան, սակայն, բացասաբար է միջամտել գործընթացին՝ փորձելով խանգարել: Թուրքիայի ներկայացուցիչները եւս փորձել են 2019-ը կոմիտասյան տարի հռչակելու գործում մասնակցություն ունենալ՝ հայտարարելով, թե դրա իրավունքն ունեն. Կոմիտասը Թուրքիայում է ծնվել: Բարեբախտաբար, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովը մերժել է Թուրքիայի միջամտությունը:

Կոմիտասյան տարվա մեկնարկի կապակցությամբ թանգարանի բակում, որտեղ աճում է Կոմիտասի գովերգած չինարին, տեղադրվել է Դավիթ Երեւանցու «Կոմիտաս» մանրակերտը: 6 մետրանոց օրիգինալը Պրագայում է գտնվում: Քանդակագործը կերպավորել է Կոմիտասին ու պատանի տղեկի: «Մահից առաջ Կոմիտասն ասել է՝ մեծ ուշադրություն դարձրեք մանչերուն, անոնք մեր ապագան են»,- վարդապետի խոսքերը մեջբերեց **Դավիթ Երեւանցին**: Կոմիտասյան պատգամն է նա փոխանցել սերունդներին՝ քանդակի տեսքով:

**ՆԱԻՐ ՅԱՆ**

## «Զահակիրի» չորս նոր յաւելուածները

Տարին նոր է սկսուել, սակայն անցեալ յունուարին արդէն լոյս են տեսել Կահիրէի «Զահակիր» շաբաթաթերթի յաւելուած մատենաշարի չորս գրքերը: Ինչպէս եւ նախորդները, սրանք եւս հրատարակուել են «Զահակիրի» անխոնջ աշխատակցի՝ երաժշտագէտ, բանասէր, հրապարակախօս **Հայկ Աւագեանի** հեղինակութեամբ, աշխատասիրութեամբ կամ առաջաբանով:

Յաւելուած ԻԱ-ն է «**Քիրազ. ընտրանի եգիպտական շրջանի երգիծանկարներու**» հատորը: Այն ընդգրկում է ծնունդով եգիպտահայ ֆրանսաբնակ երգիծանկարիչ Էդմոն Քիրազի (ծն. 1923)՝ եգիպտահայ մամուլում հրատարակած ծաղրանկարների մի փոքր ծաղկաքաղ:

Յաւելուած ԻԲ-ն Հայկ Աւագեանի «**Վահան Թէքէեանի յօդուածները «Արեւ» լրագրի մէջ. հնարաւորութի՞ւն թէ դիմադրութիւն**» ուսումնասիրութիւնն է:

Յաւելուած ԻԳ-ն դարձեալ Հայկ Աւագեանի «**Արամ Խաչատրեանի ընկալումը եգիպտական շրջանակներու մէջ. փոխուող յարացոյցներ**» հետազօտութիւնն է:

Յաւելուած ԻԴ-ն եգիպտահայ բանաստեղծ **Վարան Ոյժի «Յակինթի պարտէզը» քերթուածն է** (1994), որը ցայսօր հրատարակուել էր «Բանաստեղծութիւն» առցանց գրական հանդէսում:

«Զահակիրի» յաւելուածները լոյս են տեսնում սահմանափակ տպաքանակով, հասանելի են առցանց: Դրանք վաճառքի ենթակայ չեն եւ անվճար տրամադրւում են գրադարաններին ու նիւթով հետաքրքրուողներին:

**Ա. Բ.**

# Առնո Բաբաջանյան. Չկայացած շնորհավորանքներ

*Լրագրողի հուշերից*

**Կարո ԱԹԱՅԱՆ**

**Մոսկվա**

1981 թվականի հունվարի 22-ն էր: Մեծանուն երգահան Առնո Բաբաջանյանի 60-ամյակի կապակցությամբ մեր նկարահանող խմբով հրավիրված էինք Մոսկվայի Գորկու (ներկայիս Տվերսկայա) փողոցի սկզբնամասում գտնվող շենքի նրա բնակարան... Սպասվում էր Խորհրդային Միության ղեկավարության կողմից մեծ կոմպոզիտորին կառավարական բարձր պարգեւ շնորհելու պաշտոնական հրամանագիրը (ակնկալվում էր նրան արժանացնելու Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչմանը), եւ հենց այդ օրն էլ, ժամը 14-ին, այն պետք է պաշտոնապես հրապարակվեր Կենտրոնական հեռուստատեսության նորությունների թողարկման ժամանակ: Մենք էլ նախատեսել էինք հենց նրա բնակարանում անմիջապես շնորհավորել ու Հայաստանի հեռուստատեսության համար հարցազրույց նկարահանել նրա հետ: Եվ ահա, նշված օրը ժամը 12-ին արդեն գտնվում էինք նրա բնակարանում... Ի դեպ, նույն շենքում էին ապրում նաեւ խորհրդային բազմաթիվ հայտնի կոմպոզիտորներ, երգիչներ, բանաստեղծներ, այդ թվում նաեւ Արամ Խաչատրյանը, Պավել Լիսիցյանը, Ռոբերտ Ռոժդեստվենսկին եւ ուրիշներ...

Դուռը բացեց տիկին Թերեզան՝ Բաբաջանյանի կինը.... Շքեղ կահավորանքով հյուրասենյակում մեզ դիմավորեց անվանի երգահանը եւ ինձ տեսնելով, հանկարծակիի եկած, իրեն հատուկ հումորով բացականչեց...

- Էլի դո՞ւ ես...

- Ես եմ, ես... մաեստրո,- ինձ չկորցնելով նույն տոնով պատասխանում եմ ես ու վարդերի մեծ ծաղկեփունջը տալով նրան, շնորհավորում 60-ամյակի կապակցությամբ:

- Դե որ եկել ես... արի... արի, ներս մտիր... բայց այսօր նարդի չենք խաղալու: Դու կարծում ես մոռացե՞լ եմ Նիկողոսյանի արվեստանոցում ինչ օյին բերեցիր գլխիս,- կծու սարկազմով ասաց մեծ կոմպոզիտորն ու մեզ հրավիրեց ներս: (Ամիսներ առաջ Նիկողայոս Նիկողոսյանի արվեստանոցում իմ օգնությամբ անվանի քանդակագործը երկար տարիների պարտություններից հետո վերջապես կարողացել էր հաղթել Բաբաջանյանին... Ահա այդ էր ակնարկում կոմպոզիտորը, դիմավորելով մեզ (սակայն դա ուրիշ պատմություն է...):

Մինչ ներս մտնելը, ես կարծում էի, որ այդ օրը նրա մոտ պետք է հավաքված լինեին մեծ թվով խորհրդային հայտնի արվեստագետներ, կենտրոնական լրատվական միջոցների թղթակիցներ... Սակայն տնական սեղանի մոտ նստած էր միայն «Խորհրդային Հայաստան»ն թերթի երկար տարիների մոսկովյան թղթակից, իմ լավ բարեկամ, լուսահոգի Ալբերտ Գասպարյանը: Հետո միայն հասկացա դրա պատճառը...

Դեռ երկու ժամ կար, մինչեւ կառավարական հրամանագրի հրապարակման պահը, եւ հարմար առիթը բաց չթողնելով ես Առնո Բաբաջանյանին խնդրեցի պատմել իր եւ հայտնի կինոռեժիսոր ու մեծ հումորիստ Հենրի Հովհաննիսյանի հետ՝ Արամ Խաչատրյանի գլխին խաղացած դեպքի մասին, ինչը վաղուց բազմաթիվ տարբերակներով պտտվում էր Մոսկվայի հայ հասարակայնության շրջանակներում:

- Դե, Մոսկվայում շատերը գիտեին Արամ Իլյիչի ժլատության մասին, Աստված հոգին լուսավորի,- սկսեց պատմել Առնո Բաբաջանյանը...

- Մի օր էլ Հենրիկի հետ որոշեցինք մի լավ «պատժել» նրան: 1963 թվականին էր ու մոտենում էր նրա 60-ամյակը, ու այդ օյինբազ Հենրին ինձ ներկայացրեց իր մտածած պլանը...

Մենք հարեւաններ էինք Արամ Իլյիչի հետ, ու ըստ այդ պլանի, մի օր գնացի նրա մոտ եւ մի անհետաձգելի գործի համար պարտքով որոշ գումար խնդրեցի, խոստանալով, որ երկու օրից անպայման կվերադարձնեմ... Նույնիսկ ժամը պայմանավորվեցինք: Մի կերպ համոզեցի, ընդգծելով, որ էլ ինչ հարեւաններ ենք, որ իրար օգնության ձեռք չմեկնենք...

- Ուղիղ երկու օր հետո, ճիշտ նշանակված ժամին այդ նույն գումարը տարա ու վերադարձրեցի իրեն... Շատ ուրախացավ, որ այդպես ճշտապահորեն կատարեցի խոստումս:

- Անցավ 1,5-2 ամիս, եւ ըստ մեր պլանի՝ նորից թակեցի Խաչատրյանի դուռը,- շարունակում է իր պատմությունը Առնո Բաբաջանյանը..

- Արամ Իլյիչ ջան, ինձ «Վոլգա» մեքենա են առաջարկում, սակայն գումարս չի հերիքում... մեկ շաբաթից մեծ հոնորար ունեմ ստանալու, այդ փողը տուր մեքենան ձեւակերպեմ, հոնորարս ստանալուն պես ուղիղ մեկ շաբաթից անպայման կվերադարձնեմ: Դու գիտես, թե ինչ պարտաճանաչ եմ նման հարցերում...,- խնդրեցի նրան: Մեծ դժկամությամբ ու քթի տակ փնթփնթալով բերեց այդ գումարը, ինչը պայմանավորված օրը նորից տարա ու վերադարձրեցի իրեն:



- Արամ Իլյիչը ուղղակի հիացած էր իմ ճշտապահությամբ ու սկսեց շռայլորեն ինձ գովել նման պարտաճանաչության համար: Խեղճը դեռ չէր պատկերացնում, թե ինչ սատանայական խաղ էինք սկսել նրա գլխին:

- Եվ վերջապես, մոտ 3 ամիս հետո, նրա ծննդյան օրվանից մի քանի օր առաջ, ես նորից թակեցի մեր մեծ կոմպոզիտորի դուռը: Այս անգամ նրանից ավելի խոշոր գումար խնդրեցի, պատճառաբանելով, որ շուտով հեղինակային մեծ համերգ եմ կազմակերպում, որից ստացվող հոնորարներս մի քանի անգամ գերազանցելու են նախկին իմ բոլոր աշխատած գումարներին եւ պարտքս լրիվին փակելու հետ միասին՝ մի լավ նվեր էլ կառնեմ իր համար: Շատ երկար համոզեցի...

- Վերջին անգամը լինի,- փնթփնթաց Արամ Իլյիչը,- էլ ինձանից պարտք չուզես, այլեւս չեմ տալու: Տանը այդքան գումար չունեմ, վաղը կգաս՝ կվերցնես,- ասաց նա..

Հաջորդ օրը վերցնելով այդ գումարը, ես նրան տեղեկացրեցի, որ Մոսկվայի մեր նշանավոր ու հայտնի հայրենակիցները՝ գիտնականներ, երաժիշտներ, նկարիչներ, ռեժիսորներ ու դերասաններ իր ծննդյան 60-ամյակի կապակցությամբ «Արարատ» ռեստորանում մեծ հյուրասիրություն են կազմակերպում եւ խնդրում են, որ ինքն էլ անպայման ներկա լինի այդ խնջույքին:

Արամ Իլյիչը ընդհանրապես չէր սիրում նման միջոցառումները, սակայն այս անգամ չկարողացավ մերժել ինձ... Մայիսի 24-ին, երեկոյան ես ու Հենրիկ Հովհաննիսյանը նրան վերցնելով գնացինք Նեգլինկա փողոցի սկզբնամասում գտնվող հայտնի «Արարատ» ռեստորանը...

Բավականին մեծ թվով մարդկանց էինք հրավիրել հանդիսությանը՝ մոտ 35-40 հոգի:

Ճոխ ու համեղ ուտեստներով լեփ-լեցուն սեղանների գլխին նստեցրեցինք Արամ Իլյիչին, իսկ Հենրիկ Հովհաննիսյանն էլ սկսեց ղեկավարել խնջույքը... Շնորհավորական կենացներ, հայկական համեղ ճաշատեսակներ, խորտիկներ, կոնյակ ու գինի, ժողովրդական երգեր, դուդուկ ու զուռնա... մի խոսքով, Խաչատրյանը դժվարությամբ, բայց աստիճանաբար համակվեց խնջույքային մթնոլորտով եւ նույնիսկ իր անձի ու 60-ամյակի նկատմամբ նշանավոր հայրենակիցների կողմից այդպիսի ուշադրության համար հանդես եկավ շնորհակալական բաժակաճառով: Խնջույքը մոտենում էր ավարտին, ու նրա խոսքից անմիջապես հետո Հենրիկ Հովհաննիսյանը վերցնելով գինով լի բաժակը, դիմեց Խաչատրյանին..

- Արամ Իլյիչ ջան, ոչ թե դու պետք է մեզ շնորհակալություն հայտնես, այլ մենք ենք քեզ երախտապարտ, որ մեզ հավաքեցիր այս ճոխ սեղանի շուրջը, այդքան մեծ գումար տրամադրեցիր նման խնջույքի համար ու այստեղ հավաքվածներից ոչ մեկը չի մոռանա, թե ինչպիսի մեծ ու լայն հոգու տեր ես դու եւ ինչքան շռայլ նման հարցերում... Եկեք ավանդույթ դարձնենք եւ յուրաքանչյուր քո ծննդյան օրը այսպիսի մասշտաբով ու միասին տոնենք այս հրաշալի ռեստորանում:

- Երկար կյանք քեզ... Առողջություն ու նոր հանճարեղ ստեղծագործություններ... եւ այլն... եւ այլն: Համընդհանուր ծափողջույնների ներքո ասաց Հենրին ու դատարկեց գինով լի գավաթը:

Բաբաջանյանը շարունակում է պատմել.

- Ես նստել էի հոբելյարի մյուս կողմին ու երբ հնչեցին գումարի հատկացման մասին Հենրիի խոսքերը, Արամ Իլյիչը շրջվեց դեպի ինձ ու մի տեսակ շշմած հայացքով շշնջաց ականջիս.- ինչ գումար, ինչ շռայլություն, այս ինչ է խոսում Հենրին...:

Ես անմիջապես վերցրեցի բաժակս ու ոտքի կանգնելով դիմեցի նրան.

- Արամ Իլյիչ ջան... Հիշո՞ւմ ես, երբ այս խնջույքի համար դու ավելի խոշոր գումար էիր առաջարկում, ես ասացի, որ այդքանն էլ բավարար է ու խոստացել էի, որ դեռ նվեր էլ կգնենք քեզ համար:

Ահա՛, այժմ մեր բոլորի անունից քեզ եմ նվիրում քո 60-ամյակի կապակցությամբ Մոսկվայի հայության կողմից «գռռումով» այս ոսկեզօծ թասը, որպեսզի ավելի մեծ ու ճոխ սեղանների մասնակցես ու թասդ էլ միշտ լեցուն լինի հայկական անուշահամ գինով...

Ավարտելով բաժակաճառս, ես գինին լցրեցի այդ թասի մեջ ու տվեցի դեռ ուշքի չեկած Արամ Իլյիչին... Սեղանակիցներն էլ ոտքի կանգնելով, միաձայն պահանջեցին, որ նա դատարկի այդ թասը: Խեղճը, հասկանալով, թե ինչ ենք բերել իր գլխին, լուռումունջ գլխին քաշեց թասի պարունակությունն ու մինչեւ խնջույքի ավարտը այլեւս ոչինչ չասելով՝ նստեց իր տեղը...

- Դե ինչ ասեմ, տղաներ,- մեզ դիմելով ասաց Առնո Բաբաջանյանը,- ուղիղ մի տարի հետս չէր խոսում: Հետո, աստիճանաբար ուշքի գալով, ամեն հանդիպման ժամանակ հեգնական ժպիտով ասում էր,- էլ փող պե՞տք չէ...

- Ահա այսպիսի չար կատակ սարքեցինք մեր մեծ կոմպոզիտորի գլխին:- Ավարտեց իր պատմությունը մեր մյուս մեծ կոմպոզիտորն ու նայեց ժամացույցին:

Դեռ 15-20 րոպե կար մինչեւ ժամը 14-ը...

Տիկին Թերեզան սուրճ բերեց մեզ համար: Ալբերտ Գասպարյանը, որ ինձանից մոտ 10 տարով մեծ էր, լցրեց կոնյակի բաժակները եւ դիմելով Առնո Բաբաջանյանին՝ ասաց.- Մաեստրո, ինչ ենք նստել ու սպասում այդ լուրերին: Մեկ է... մի քիչ շուտ,... մի քիչ ուշ... Եկեք այս բաժակով խմենք ձեր կենացն ու շնորհավորենք հերոսի կոչման կապակցությամբ: Հաշվեք, որ այդ կոչումն արդեն ձեր գրպանում է, Ոսկե Աստղն էլ՝ կրծքիդ,- ասաց Ալբերտն ու բաժակը քաշեց գլխին:

- Այ տղա, մի քիչ համբերություն ունեցիր... Այդպես չի կարելի, թողարկմանն էլ մի քանի րոպե է մնացել, մինչեւ ականջներովս չլսեմ, չեմ հավատա,- թեթեւակի բարկացած տոնով պատասխանեց Բաբաջանյանը:

Ես նույնպես չխմեցի այդ գավաթը, ու քանի որ մաեստրոն ինչ-որ առիթով դուրս եկավ սենյակից, Ալբերտին նախատեցի նման քայլի համար:

- Ինչ եմ արել որ,- չհասկանալով դրության լրջությունը՝ ասաց Ալբերտն ու նորից լցրեց իր բաժակը:

Արդեն ժամը 14-ն էր: Վերադառնալով հյուրասենյակ, Առնո Հարությունովիչը միացրեց հեռուստացույցը:

Տարեցները երեւի լավ են հիշում այդ տարիների կենտրոնական հեռուստատեսության նորությունների թողարկումները,- Բրեժնեւը սրան պաչպչեց, նրան ողջունեց, Սուսլովը, Գրոմիկոն, Կոմկուսի քաղբյուրոյի մյուս զառամյալ ու հիվանդ անդամները այսպես ասացին... Իլյիչի անվան կոլտնտեսության տրակտորիստը հերկեց դաշտը, Չելյաբինսկի մետալուրգները կատարեցին չուգունի պլանը... Մի խոսքով՝ 30 րոպեանոց պաշտոնական թողարկման մոտ 25 րոպեն հագեցած էր նման անհեթեթություններով, եւ միայն վերջում մեկ-երկու լուր՝ մշակույթի, գիտության ու սպորտի աշխարհից: Մինչեւ հասավ այդ պահը, խեղճ Բաբաջանյանը քրտնել էր անհամբերությունից:

AZG NEW MSHAKUITT.QXD 31/01/2019 18:48 Page 3





Աստված իմ, ինչո՞ւ է այս մեծ երաժիշտը նման ուշադրության արժանացնում այդ կոչումը, ի՞նչ նշանակություն ուներ այն իր համար... Հետեւելով նրա ապրումներին, մտածեցի ես: Ամեն ինչ ունի՝ Խորհրդային Միության ժողովրդական արտիստ, Պետական մրցանակների դափնեկիր, եւ որ ամենակարեւորն է՝ համընդհանուր սեր ու ճանաչում, միլիոնավոր երկրպագուներ, շքանշաններ... Էլ ի՞նչ է հարկավոր նրան՝ առողջությունից բացի, ինչը վաղուց էր արդեն կորցրել: Նա տառապում էր ծանր ու անբուժելի արյան հիվանդությամբ եւ տարեկան մի քանի անգամ մեկնում էր Փարիզ՝ վիճակը ինչ-որ չափով թեթեւացնելու նպատակով...

Այնքան տարվել էի այդ մտքերով, որ մոռացել էի հետեւել նորությունների թողարկմանը... Ուշքի եկա այն պահին, երբ հաղորդավարը Խորհրդային Միության ղեկավարության անունից արդեն կարդում էր Առնո Բաբաջանյանի 60-ամյակի շնորհավորական ողջույնը: Եվ վերջում հրապարակում՝ նրան ընդամենը Լենինի շքանշանի արժանացնելու հրամանագիրը...

Եվ վերջ... Տիրեց երկարատեւ լռություն: Ես ու Ալբերտը տարակուսանքով նայում էինք Բաբաջանյանի դեմքին, չիմանալով ինչ ասել:

Ու Ալբերտը նորից մեջ ընկավ... եւ շատ իզուր:

- Դե ոչինչ, Առնո Հարությունովիչ... շնորհավորում ենք՝ Լենինի շքանշանն էլ բարձր պարգեւ է...

Ու կատարվեց այն, ինչ ոչ ոք չէր պատկերացնի... Մեծ երգահանը իր հզոր ու բամբ ձայնով այնպես գոռաց նրա վրա, որ կողքի սենյակից տիկին Թերեզան վախեցած վազեց ներս.

- Դե ձենդ կտրի...,- պոռթկաց Բաբաջանյանը՝ խեղճ Ալբերտի վրա:- Չէի ասո՞ւմ սպասիր մինչեւ ամեն ինչ կպարզվի... Բաժա՞կ էիր բարձրացնում, հիմա կերա՞ր... Ամեն ինչի մեղավորը դու ես, վեր կաց ու սի...րդ քաշի գնա այստեղից...,- իրեն կորցրած հայհոյում էր մեծ երգահանը:

- Տիկին Թերեզան էլ կողքից մի ինչ-որ բան ասաց նրան ու իր հասցեին նույնպես ստանալով նույնը, սուսուփուս թողեց հեռացավ:

Ես մինչ այդ էլ գիտեի ու լսել էի Բաբաջանյանի թունդ բառապաշարի մասին, սակայն այդ աստիճանի չէի պատկերացնում... Եվ չէի էլ կարծում, որ նա կարող էր նման առիթով հասնել այդպիսի հուսախաբության ու կատաղության հոգեվիճակի:

Այդ պահին էլ ոչինչ չէր կարելի խոսել նրա հետ, ուր մնաց շնորհավորել ու հարցազրույց նկարահանել: Ոչինչ չասելով, նա դուրս եկավ հյուրասենյակից ու փակվեց իր աշխատասենյակում...

Մենք էլ Ալբերտի հետ հրաժեշտ տալով տիկին Թերեզային, դուրս եկանք բնակարանից:

Եվ ես նոր միայն հասկացա, թե ինչու մեզանից բացի, ուրիշ տեղական լրագրողներ չէին եկել անվանի կոմպոզիտորի մոտ: Կոմկուսի կենտկոմից կենտրոնական լրատվական միջոցներին երեւի արդեն հայտնել էին, որ Բաբաջանյանին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում չի շնորհվելու... Ակնհայտ էր նաեւ, որ այդ գործում նորից իրենց չարաբաստիկ դերն ունեին նրա չկամեցողները՝ խորհրդային երկրի այնպիսի ազդեցիկ ու հեղինակավոր երգահաններ, ինչպիսիք էին Պախմուտովան, Շաինսկին, Խրեննիկովը եւ ուրիշներ, ովքեր չարությամբ ու նախանձով էին համակված հայ մեծ կոմպոզիտորի նկատմամբ...

Առնո Բաբաջանյանի հետ մեր հաջորդ անմիջական շփումը տեղի ունեցավ մոտ 1,5 տարի հետո, երբ հայկական հեռուստատեսության համար մեծ հաղորդում էինք պատրաստում Տիգրան Պետրոսյանի մասին: Նկարահանումները ընթանում էին մեծ շախմատիստի մերձմոսկովյան Բարվիխա հայտնի վայրում գտնվող շքեղ ամառանոցում եւ մեր խնդրանքով Առնո Բաբաջանյանը պետք է այցելեր Պետրոսյանին, որպեսզի նկարահանեինք մեր երկու մեծ հայրենակիցներին՝ իրար հետ զբոսնելու, զրուցելու, նարդի խաղալու եւ այլ կադրեր...

Այդ օրը մեր նկարահանող խմբով մի քիչ ավելի վաղ հասանք Բարվիխա եւ Պետրոսյանի առանձնատան դարպասների մոտ կանգնած սպասում էինք մինչեւ Առնո Բաբաջանյանի գալը, ու քանի որ չէինք հասցրել նախաճաշել, որոշեցինք ուտել մեզ հետ վերցրած բուտերբրոդները... Հենց այդ պահին էլ մեր կողքին կանգ առավ մի արտասահմանյան մեքենա ու լսվեց Բաբաջանյանի ծանոթ թավ ձայնը...

- Բարեւ, տղաներ,... էս ի՞նչ եք անում այստեղ, ինչու չեք ներս գնում,- մեքենայի ներսից հարցրեց նա:

- Ձեզ էինք սպասում, Առնո Հարությունովիչ,- մոտենալով ղեկին նստած կոմպոզիտորին, ասացի ես...

- Բա էդ ի՞նչ եք այդպես հավեսով ուտում եւ ինչու հենց այստեղ...

- Դե ամբողջ օրը երեւի աշխատելու ենք ու երեկվա փորձից ելնելով, որպեսզի սոված չմնանք, մի քիչ ուտելիք ենք վերցրել մեզ հետ... Մոտակայքում ոչ խանութ կա, ոչ էլ կաֆե կամ ռեստորան,- պատասխանեցի ես...

- Երեկ էլ եք եղե՞լ այստեղ ու ձեզ ոչինչ չե՞ն հյուրասիրել՝ գոնե թեյ կամ սուրճ,- զարմացած հարցրեց Բաբաջանյանը:

- Ոչինչ....,- հակիրճ պատասխանեցի ես:

- Վայ ես դրա հայ ասողին...,- թավ ձայնով թնդաց մեծ կոմպոզիտորը...,- տես նրա գլխին հիմա ինչ եմ բերելու...

Այդ պահին մեր օպերատորը ծխացող սիգարետը ձեռքին ուղեւորական պատուհանից գլուխը ներս մտցնելով, հետաքրքրվեց, թե ինչ մեքենա է... Բաբաջանյանը պատասխանեց, որ վերջին մոդելի «Պեժոներից» է, որ վերջերս էր բերել Փարիզից: Ու հենց այդ պահին էլ օպերատորի ձեռքից սիգարետը վայր ընկավ ուղեւորի նստարանին ու ծակեց նրա պոլիէթիլենային ծածկոցը...

- Վայ ես քո սենցը... նենցը...,- պոռթկաց Բաբաջանյանը,- էս ինչ արեցիր.... ճուն-ճան որդի, վառեցիր մեքենաս... Քեզանից ո՞վ է խեր տեսել, որ ես տեսնեմ... Գործադրելով իր հարուստ ու թունդ բառապաշարը, նա դուրս եկավ մեքենայից ու հակառակ կողմից մոտեցավ ուղեւորի նստարանին...

Օպերատորը հասցրել էր վերցնել ու դուրս նետել դեռեւս ծխացող սիգարետը, բայց այն արդեն թողել էր իր հետքը՝ բարեբախտաբար միայն պոլիէթիլենային ծածկոցի վրա... Նստարանի իսկական թավշյա ծածկոցը մնացել էր անվնաս: Տեսնելով այդ, մաեստրոն մի քիչ հանդարտվեց...- Բախտդ բերեց, ճան որդի, թե չէ տակից հազիվ դուրս գայիր,- դեռեւս բարկացկոտ հումորով փնթփնթաց Բաբաջանյանն ու սեղմեց առանձնատան դարպասների զանգի կոճակը...

Դարպասները բացեց աշխարհի չեմպիոնի հայազգի տնտեսվարը, սակայն ես Բաբաջանյանին խնդրեցի մի քիչ հապաղել, որպեսզի օպերատորը առաջ անցնելով հասցնի նկարահանել նրանց հանդիպման կադրերը...

Այդպես էլ կատարվեց... Բաբաջանյանը մեքենայով ներս մտավ առանձնատան ընդարձակ տարածքը, ողջագուրվեց աշխարհի չեմպիոնի հետ ու դիմելով ինձ հարցրեց...

- Էս արդեն ձայնագրո՞ւմ եք, թե միայն նկարահանվում է...

- Առայժմ միայն նկարահանվում է,- ասացի նրան,- ձայնագրությունները հետո կանենք:

- Դե որ այդպես է, ուրեմն ինձ լսիր,- դիմեց նա Պետրոսյանին:- Ռոնա Յակովլեւնային ասա, թող սեղանները գցի, ես շատ ժամանակ չունեմ... խորովածները թող դնեն մանղալին...

- Ի՞նչ սեղան, ի՞նչ խորոված,- տարակուսանքով հարցրեց շախմատի արքան...

- Տո դու հայ չե՞ս... Այսքան մարդ է եկել տունդ, երեկվա նման սոված, ծարավ հե՞տ ես ուղարկելու բոլորիս, թե կինդ թույլ չի տալիս....,- իրեն հատուկ հումորով հայերեն հոխորտաց մաեստրոն...

Խեղճ Պետրոսյանը չգիտեր ուր թաքցնի հայացքը... Այդ պահին Ռոնան էլ մոտեցավ ու տեսնելով ամուսնու վիճակը՝ հետաքրքրվեց, թե ինչ է պատահել:

- Ռոնա Յակովլեւնա, այն է պատահել, որ չգիտեմ, թե ինչպես է հրեաների մոտ, ըստ հայկական ավանդույթների, երբ մարդ եք հրավիրում ձեր տունը, պետք է անպայման հյուրասիրեք գոնե թեյով կամ սուրճով... Ինչ որ խորովածի հոտը չեմ առնում, մի՞թե այսօր էլ եք բոլորին սոված պահելու,- բաբաջանյանական կես լուրջ, կես կատակ ասած խոսքերը կարծես անմիջապես ազդեցին տանտերերի վրա...

Մի խոսքով, մինչեւ նկարահանեցինք մեր երկու նշանավոր հայրենակիցների հանդիպման, զբոսնելու, նարդի խաղալու եւ այլ հետաքրքրական կադրեր, անցավ մոտ 3 ժամ, որի ընթացքում առանձնատան ընդարձակ բակի մի անկյունի «բեսեդկայում» խորովածով եւ այլ ուտեստներով հարուստ սեղան բացվեց ու մեծ երաժշտի շնորհիվ մեծ շախմատիստը քավեց իր «մեղքը»...

Դա 1982 թվականի հոկտեմբերին էր:

Մոտ 3 ամիս անց՝ 1983 թվականի հունվարին կյանքից հեռացավ Առնո Բաբաջանյանը:

1,5 տարի հետո էլ՝ Տիգրան Պետրոսյանը...

***Հ.Գ.-*** *Նորից եմ ցանկանում բարձրաձայնել նախորդ հոդվածում իմ բարձրացրած հարցը. ինչո՞ւ Առնո Բաբաջանյանի շիրիմը չի ամփոփված մեր մեծ հայրենակիցների՝ Կոմիտասի անվան Պանթեոնում... Ո՞վ է որոշել, որ նա տեղ չունի Արամ Խաչատրյանի, Էդվարդ Միրզոյանի, Ալեքսանդր Հարությունյանի եւ մեր ազգի մյուս մեծ երգահանների կողքին:*

*Երեւանի նոր քաղաքապետին կոչ եմ անում շտկել այդ անարդարանալի բացթողումը եւ Պանթեոնում իր ամենաարժանի տեղը հատկացնել հայ ժողովրդի մեծագույն կոմպոզիտորներից մեկի՝ Առնո Բաբաջանյանի շիրիմին:*

## Լաուրա Էֆրիկյան. «Ջանի Մորանդիի հետ սեր էր առաջին հայացքից, բայց՝ վերապահումներով»

*Իտալական «Կորիերա դելլա սեռա» օրաթերթը հունվարի 4-ի համարում հրատարակել է **Մարիսա Ֆումագալլիի** հարցազրույցը հայազգի իտալական դերասանուհի եւ գրող **Լաուրա Էֆրիկյանի** հետ: Վերջինս թոռն է իտալացի նկարիչ Ջուլիանո Ջասսոյի (1833-1889), որը Վենետիկի Մխիթարյանների պատվերով ստեղծել է գեղանկարներ հայոց պատմության դրվագներով, թոռը աշխարհագրագետ Սուքիաս-Հակոբ Էփրիկյանի (1873-1952), դուստրը դիրիժոր, երաժշտագետ, Վիվալդիին աշխարհին վերաբացահայտած Անջելո-Վահրամ Էֆրիկյանի (1913-1982) ու նախկին կինը նշանավոր երգիչ, իտալական էստրադայի աստղ Ջանի Մորանդիի (ծն. 1944):*

*Ներկայացնում ենք հարցազրույցի՝ հայությանը վերաբերող մասերը:*



***Լաուրա Էֆրիկյանը դստեր՝ դերասանուհի Մարիաննա Մորանդիի հետ:***

Մեծ երգչի նախկին կինն ասում է. «Ես երբեք նպատակ չեմ ունեցել նոր ընտանիք կազմել, բայց երկարատեւ հարաբերություն ունեցել եմ: Այսօր իմ ապագան Քենիան է եւ ուրիշներին օգնելու իմ ծրագիրը»:

Լաուրա Էֆրիկյան, հայկական ծագումով միջին դասի ընտանիք (նրա հայր Անջելոն ջութակահար էր, կոմպոզիտոր եւ դիրիժոր), խիստ դաստիարակություն, դերասանական կրթություն Փոքր թատրոնում, պահանջկոտ մեկնաբանություններ...

Ջանի Մորանդին, ընդհակառակը, տաղանդավոր տղա է, համեստ ծագմամբ, որին բախտը ժպտացել է: Այնուամենայնիվ, կայծակը խփեց, եւ կյանքը որոշակի շրջադարձ կատարեց: 1977 թվականի վերջին: Սա 78-ամյա Լաուրա Էֆրիկյանի առավել ցուցադրված կյանքերից մեկն է:

**-Ձեզնից կարելի էր ակնկալել երաժշտական տաղանդ, քանի որ ջութակահարի դուստր եք, բացի այդ, ձեր նախկին ամուսինը երգիչ էր:**

-Բայց ոչ: Երաժշտության բացարձակ բացասում: Ինչ վերաբերում է արվեստին, ապա նախադեպը կար: Իմ մեծ պապը՝ Ջուլիանո Ջասսոն, տասնիններորդ դարի նկարիչ էր՝ որոշակի համբավ ունեցող: Նրա դուստր Լաուրան ամուսնացել էր հայրական պապիս՝ Ջակոմո Էֆրիկյանի հետ, Մխիթարյան վարդապետ, որը կարգալույծ լինելով՝ տպագրիչ էր աշխատում Տրեւիզոյում: Մի հայ, որը թողել էր իր երկիրը եւ ապաստանել Վենետիկում՝ փրկվելով Ցեղասպանությունից:

**-Ձեր հանձնառություններից մեկն էլ գրելն է: Ընտանեկան հիշողություննե՞ր, այո՞:**

-Այո՛, ես պատրաստակամորեն գրում եմ: Եվ ինձ համար դժվար չէ անձնական պատմություններ գրելը: Ապա միայն մտածեք իմ ազգանվան մասին: Ընտանիքիս մի ճյուղը եկել է Հայաստանից: Արկածալից կյանք, փախուստ Իտալիա: Պատմելու բան կա: Ինչպես իմ առաջին գործը՝ «Թեղին եւ բաղեղը», այն սկիզբ է առնում այստեղից:

**Իտալերենից թարգմանեց**
**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ**

# Տարբերել գուսանին եւ աշուղին

**ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

Գուսանը եւ աշուղը նույնական են իբրեւ առհասարակ ժողովրդական երգիչ: Սակայն նրանք տարբեր պատմական ժամանակների ծնունդ են եւ տարբեր բանարվեստների կրող: Հետեւաբար, անհրաժեշտ է տարբերակել նրանց եւ խուսափել այն անցանկալի շփոթից, որ առկա է այսօր մեր իրականության մեջ, երբ ժողովրդական երգիչներից ոմանք իրենց կոչում են աշուղ, ոմանք՝ գուսան: Մի կողմից՝ «Աշուղական երգի անսամբլ», մյուս կողմից՝ «Գուսանական եւ ժողովրդական երգի համույթ»: Եվ երգիչ-կատարողն էլ հաճախ չգիտի՝ իր երգածը գուսանակա՞ն թե աշուղական երգ է:

Գուսանից աշուղ, ապա աշուղից գուսան փոխակերպումը բավական բարդ պատմական-մշակութային գործընթաց է եղել, ինչը փորձել ենք լուսաբանել մեր գիտական աշխատանքներում: Ստորեւ կբերենք դրանց ամփոփ եզրահանգումները՝ առկա խառնաշփոթը փոքր-ինչ փարատելու համար:

Գուսան բառը գործածված է դեռեւս հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, ապա նաեւ միջնադարյան հետագա բազում հեղինակների գործերում: Ըստ այդ վկայությունների, գուսանը վաղնջական ժամանակներից հայ իրականության մեջ հանդես եկած ժողովրդական երգիչն է: Նա, ընդհանրական-հավաքական առումով, երգող-կատարող է, նվագածու, ասմունքող, կատակերգու-դերասան, վիպական, ծիսական, ողբական, ներբողական, խրատական, երգիծական, վայելքի, սիրո եւ այլ բնույթի երգերի հեղինակ, երաժշտական տարբեր գործիքների նվագակցությամբ ինքնահնար կամ ավանդական երգերի կատարող-տարածող:

Գուսաններն առավելապես ելել են արհեստավորական շրջանակներից, հանդես են եկել ամենատարբեր միջավայրերում՝ գյուղական, քաղաքային, պալատական, մասնակցել են տարաբնույթ հավաքույթների, զանգվածային հավաքների, արտահայտվել ժամանակի խոսակցական լեզվով եւ սիրված մեղեդիներով ու ձայնեղանակներով, անկաշկանդ արծարծել ժողովրդին սրտամոտ գաղափարներ ու զգացումներ, իրենց արվեստով մրցակցել միմյանց հետ: Ըստ այսմ, իր որակական հատկանիշներով հայ գուսանը տիպաբանորեն համարժեք է հին հունական ռապսոդին (մասամբ՝ միմոսին), կելտական բարդին, գերմանական մայստերզինգերին, պրովանսալական տրուբադուրին...

Լինելով ժողովրդական բանահյուսական տարերքի գործուն կրողները՝ գուսաններն են հեթանոսական ժամանակներում հորինել ու տարածել մեր առասպելական ու վիպական երգերն ու դյուցազնավեպերը, որոնք նրանց միջոցով հարատեւել են քրիստոնեական դարաշրջանում: Մովսես Խորենացին անձամբ լսել ու գրի է առել իր ժամանակի վիպասան-գուսանների պատմածները, ինչի շնորհիվ մեզ հայտնի են դարձել հեթանոսական շրջանի մեր առասպելական ու վիպական երգերի մի շարք թանկագին բեկորներ: Մեր հին էպոսը՝ «Հայկ եւ Բելը» եւ այլ հերոսական վեպեր, Պատմահոր վկայությամբ, պահպանվել են «գուսանական երգերով»:

Շարունակելով հնագույն հեթանոսական շրջանի գուսանների ավանդույթները՝ միջնադարյան գուսանները, ոչ միայն սերնդե սերունդ վերաձեւելով տարածել են նախկին երգերը, այլեւ ժողովրդական ավանդությունների հիման վրա հորինել են նորերը: Այդպես ծնունդ են առել «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» վիպերգերը, «Սասնա ծռեր» էպոսի պատումները եւ բազում այլ ավանդավեպեր՝ հիմնված պատմական նոր իրողությունների վրա:

Միջնադարյան գուսանների շնորհիվ ծնունդ են առել նաեւ այլ բնույթի բազմաթիվ ժողովրդական երգեր, այդ թվում նաեւ՝ մեր անզուգական հայրենները, որոնք, Մանուկ Աբեղյանի ճշգրիտ բնութագրմամբ, ծագումնաբանորեն ժողովրդա-գուսանական երգեր են: Հայրենների եւ ժողովրդա-գուսանական այլ երգերի զգալի մասը՝ ստեղծված լինելով ուրախ հավաքույթների, խնջույքների համար, անկաշկանդորեն արտահայտել են խրախճանքի եւ սիրո տրամադրություններ, ուստի եւ մերժվել են ասկետիզմի քարոզիչ Եկեղեցու կողմից՝ համարվելով «դիվական» երգեր: Այսուհանդերձ, հաստատապես կյանքի աստիճանական աշխարհիկացմանը համընթաց, ժողովրդի մտքի ու սրտի արգասիք գուսանական պարզ ու անկաշկանդ երգն ավելի ու ավելի ծավալվել է եւ ներազդել գրավոր-անհատական քերթության վրա...

Հայաստանի համար ծանրագույն ու ճակատագրական-բեկումնային այն ժամանակաշրջանում, երբ սելջուկ թուրքերն ավերեցին երկիրը եւ վերացավ Բագրատունյաց պետությունը, երբ պետականորեն հնագույն քրիստոնյա ժողովուրդը հայտնվեց մահմեդական այլազան ցեղերի տեւական բռնատիրության ներքո, հայությունն սկսեց աստիճանաբար, այսպես ասած, արեւելացվել՝ պահպանելով հանդերձ իր ազգային ինքնությունն ու քրիստոնեական-արեւմտյան մշակութաբանական տիպը:

Նշված պայմաններում, ահա, հայ ժողովրդական երգիչ-գուսանների մի մասը սկսեց ստեղծագործել նաեւ պարսկերեն, ապա առավելապես թյուրքերենի այս կամ այն խոսվածքով: Ինչպես ապացուցված է արեւելագիտության մեջ, Փոքր Ասիայի օղուզ-օսմանական միջավայրում հանդես եկած հայ գուսանը, արեւելացվելով ու ապազգայնացվելով, կոչվել է ուզան (օզան): Այնուհետեւ գուսան-ուզան անվանումը հայերի եւ օսմանցիների մոտ տեղի է տվել արաբական աշըղ-աշուղին: Սա արաբական ծագումով սուֆիական եզրույթ է, նշանակում է սիրահար, աստվածային սիրով վառվող եւ միստիկ դերվիշի մի աստիճան էր:

Այսպիսով, հայ բանահյուսական ավանդույթները ժառանգած ժողովրդական երգիչ-գուսաններից շատերը, որ պարսիկ ու արաբ դերվիշների եւ առհասարակ պարսկա-արաբական սուֆիական բանաստեղծության ազդեցությամբ, բազմազգ հանրության մեջ երգ-երաժշտությամբ տարածում էին կրոնական երգեր եւ արեւելյան ժողովուրդների լեգենդներն ու ավանդությունները, վերափոխվեցին թե՛ ձեւով ու բովանդակությամբ եւ թե՛ անվանապես: Ըստ այդմ, հայ գուսանը մուսուլմանական աշխարհում վերածվեց պարսկալեզու, ապա առավելապես՝ թուրքալեզու միստիկ սիրահար-աշուղի: Այսինքն՝ տեղի է ունեցել մի կողմից արեւելյան աշուղության ներթափանցում հայ իրականության մեջ, մյուս կողմից՝ հայ գուսանության ներթափանցում արեւելյան աշխարհ, ինչի արդյունքում կատարվել է հայկական-քրիստոնեական եւ պարսկա-թուրքական-մուսուլմանական մշակույթների որոշ խաչասերում: Եվ եթե դրանից շահել են աղքատիկ մշակույթ (մեղմ ասած) ստեղծած թյուրքական ցեղերը, ապա հայ մշակույթը դրանից ավելի շատ աղարտվել է...

Աշուղությունը հայ իրականություն է թափանցել արդեն 13-րդ դարում, երբ լայն թափ էր առել կյանքի ու մշակույթի աշխարհիկացումը եւ մեծացել էր հատկապես պարսկական ազդեցությունը հայկական կենցաղի եւ մշակութային տարբեր բնագավառների վրա: Առեւտրական եւ արհեստագործական խոշոր կենտրոններ հանդիսացող որոշ հայաքաղաքներում աշուղությունը տարածվել է սուֆի դերվիշ-աշուղների միջոցով, որոնք երգելով-պատմելով տարածել են նաեւ արեւելյան հերոսական ու սիրային ավանդավեպեր: Այդ ժամանակ էլ, ըստ երեւույթին, հայ գուսանը սկսել է մասնակիորեն աշուղանալ՝ ստեղծագործելով նաեւ պարսկերեն ու թուրքերեն:

**Աշուղությունը մեզանում աստիճանաբար ծավալվելով՝ որպես երգարվեստի հաստատություն, կայացել է արդեն 16-րդ դարում: Ըստ այդմ, հայ ժողովրդական երգիչ-գուսանը տեղի է տվել աշուղին, ոչ միայն փոխվելով անվանապես, այլեւ յուրացնելով նրա արվեստը, որ ընդգրկում է բազում ու բազմատիպ երգատեսակներ եւ ընդհանուր արեւելյան ձայնեղանակներ: Հայ ազգային բանահյուսական մշակույթի կրող գուսանները վերածվելով աշուղների, նախապես եւ երկար ժամանակ եղել են հայ երաժշտա-բանաստեղծական արվեստի մեջ «արեւելյան գծի հաղորդողներ», այն է՝ արեւելյան ժողովրդական եւ ինքնաստեղծ վիպական ու քնարական երգերի, ըստ այդմ, արեւելյան ոճի ու ճաշակի տարածողներ: Լինելով երաժշտա-բանաստեղծական դարավոր ու հարուստ ավանդույթներ ունեցող ժողովրդի ներկայացուցիչներ, գուսանները, որ արդեն հանդես են եկել օտարամուտ աշուղական «տարազով», իրենց հերթին մեծապես նպաստել են աշուղական բանարվեստի ճոխացմանը՝ ստեղծելով այդ արվեստի լավագույն նմուշները: Ըստ այսմ, հայ գուսանը իր որոշակի ավանդն ունի թե՛ աշուղության կազմավորման եւ թե՛ նրա հետագա զարգացման գործում:**

Անհրաժեշտ է նշել, որ հայ իրականության մեջ աշուղության թափանցումից հետո էլ, արեւելացած գուսան-աշուղների կողքին կամ նրանցից զատ դեռ երկար ժամանակ գործել են նաեւ սոսկ հայալեզու եւ ազգային ավանդույթներով ստեղծագործող գուսաններ: Այնուհետեւ, սակայն, աշուղացած հայ գուսաններն աստիճանաբար անցել են բացառապես կամ հիմնականում թուրքերենի: Հայտնի են ուշ միջնադարում հանդես եկած հարյուրավոր թուրքագիր աշուղներ: Նրանց երգերը, սակայն, ինչպես հայատառ թուրքերեն մեծածավալ գրականությունը, կազմում են հայ մշակույթի մի ինքնօրինակ մասը...

16-րդ դարում հայ իրականության մեջ աշուղությունն արդեն կայացած երեւույթ էր: Այդ դարում արդեն որոշ գուսաններ եւ աշուղներ սկսել են հանդես գալ անվանապես, ինչը նշանակում էր ժողովրդական երգիչների ստեղծագործության աստիճանական անհատականացում-գրականացում: Սակայն, նկատենք, որ աշուղությունը (նույնն է, թե՝ ժողովրդա-գուսանական երգը) որքան էլ անհատականացել-գրականացել է, այդուհանդերձ, այն զուտ գրական երեւույթ չէ եւ մասամբ է պատկանում գրականությանը՝ մասամբ մնալով ժողովրդական բանահյուսության ոլորտում: Միակ բացառությունն է աշուղ Սայաթ-Նովան, որն «իր հանճարի զորությամբ ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման» (Վ. Բրյուսով):

16-րդ դարի աշուղները ստեղծագործել են թե՛ հայերեն եւ թե՛ թուրքերեն: Նրանցից ամենանշանավորը՝ Քուչակ Վանեցին է (Վանլի Քուչակ): Այդ ժողովրդական երգիչները հանդիսանում էին միաժամանակ աշուղ եւ գուսան-տաղասաց: Իրենց հայերեն ժառանգությամբ նրանք գուսան-տաղասաց էին, այն է՝ հայ բանավոր ու գրավոր բանաստեղծական ավանդույթների կրող ու արծարծող: Մինչդեռ աշուղ էին թուրքերեն երգերով, որոնք հյուսված էին աշուղական երգատեսակներով ու ձայնեղանակներով եւ նախատեսված էին երգելու աշուղական հավաքույթներին եւ մրցավեճերի ժամանակ: Ավելի ուշ աշուղների հայերեն երգերը եւս ենթարկվել են աշուղական բանարվեստին:

Աշուղությունը հայ իրականության մեջ առավել լայն տարածում է գտնում 17-18-րդ դարերում: Այն գրեթե լիովին փոխարինում է գուսանությանը. այսինքն՝ հայ ազգային գուսանները, մեծավ մասամբ, հանդես են գալիս արդեն իբրեւ արեւելցի աշուղներ, որոնք հիմնականում ստեղծագործում են թուրքերեն եւ աշուղական տարածված երգատեսակներով: Այս ժամանակ արդեն հանդես են գալիս որոշ աշուղներ, որոնք թուրքերենից բացի, այս կամ այն բարբառի հիմքի վրա, գրում են նաեւ աշուղական բանարվեստով հյուսված հայերեն երգեր: Ըստ այդմ, սկզբնավորվել է նաեւ հայերե՛ն աշուղական բանաստեղծությունը:

17-18-րդ դարերում հատկապես քաղաքային միջավայրում կազմավորվել են աշուղների առանձին կանոնակարգված ընկերակցություն-համքարություններ, որոնցով պայմանավորված են եղել հայ աշուղական դպրոցները: Առաջին աշուղական դպրոցները կազմավորվել են Հայաստանի եւ հայկական գաղթօջախների առեւտրական-արհեստավորական աշխույժ կյանք ունեցած քաղաքներում (Նոր Ջուղա, Կ.Պոլիս, Թիֆլիս):

Մի շարք աշուղական դպրոցներ եւ շնորհալի անհատ աշուղներ են գործել նաեւ 19-րդ դարում՝ մինչեւ հաջորդ դարի առաջին տասնամյակները: Նրանց մեջ ամենանշանավորը Ջիվանին է: Նա վերջին խոշոր հայ աշուղն էր, որի ստեղծագործությամբ ավարտվեց ուշ միջնադարից սկիզբ առած հայ աշուղությունը: Ժողովրդական երգի այդ հաստատությունը, որքան էլ հայացված, բայց պատկանում էր համաարեւելյան երգարվեստին: Ջիվանին լինելով վերջին խոշոր հայ աշուղը, իր մեծ տաղանդի ուժով դրեց նաեւ նորի հիմքերը. նա թե՛ լեզվի ու բանարվեստի եւ թե՛ երաժշտության առումով լիովին ազգայնացրեց աշուղությունը՝ «հանդիսանալով հիմնադիրը աշուղական հայկական դպրոցի» (Գարեգին Լեւոնյան):

Ջիվանու եւ նրա հիմնած հայկական-ազգային աշուղական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործության մեջ արդեն գերակշռեց, ապա բացառապես իշխեց հայերեն երգը՝ բանաստեղծական թե երաժշտական առումով: Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ վերադարձ դեպի ազգային-ժողովրդական, այն է՝ գուսանական երգը:

Ջիվանու դպրոցի ավանդույթների լավագույն կրողներն ու զարգացնողները հանդիսացան նոր շրջանի ժողովրդական երգիչները (Շերամ, Հավասի, Աշոտ, Շահեն եւ ուրիշներ): Նրանք գիտակցաբար թե ինքնաբուխ ներկայացան հանրությանն իբրեւ գուսաններ: Այդ, ինչպես նաեւ հետագա մեր ժողովրդական երգիչների ստեղծագործություններն, ըստ էության, վերաբերում են հայ գուսանության նոր եւ նորագույն շրջանին: Ըստ էության, գուսաններ են նաեւ այսօր ստեղծագործող ժողովրդական երգիչները, այդ թվում նաեւ նրանք, ովքեր ներկայանում են իբրեւ աշուղներ: Մինչդեռ անհրաժեշտ է հստակորեն տարբերել գուսանին եւ աշուղին: